

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Գ Լ ՈՒ Խ 1.

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. ՀՀ քաղաքացիների սոցիալական ապահովության ինչպիսի՞ սահմանադրական երաշխիքներ գոյություն ունեն:
- 1.2. ՀՀ քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի պաշտպանության ինչպիսի՞ միջազգային իրավական մեխանիզմներ գոյություն ունեն:
- 1.3. Ինչպիսի՞ն է սոցիալական ապահովության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը:
- 1.4. Ինչպե՞ս է որոշվում ՀՀ միջազգային պայմանագրերի եւ սոցիալական ապահովության բնագավառում ներպետական օրենսդրության միջեւ հարաբերակցությունը:
- 1.5. Ի՞նչ է նշանակում «սոցիալական ապահովություն» հասկացությունը: Որո՞նք են այն պայմանները, որոնց առկայությունը հիմք է հանդիսանում սոցիալական ապահովության համար:
- 1.6. Որո՞նք են քաղաքացիների սոցիալական ապահովության ձեւերը:
- 1.7. Սոցիալական նպաստների ի՞նչ տեսակներ գոյություն ունեն:

Գ Լ ՈՒ Խ 2

ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԸ

2.1) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՆԵՐ

- 2.1.1. Օրենսդրական ո՞ր ակտերով է կարգավորվում Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության իրավունքը:
- 2.1.2. Հայաստանի Հանրապետությունում ովքե՞ր ունեն պետական կենսաթոշակային ապահովության իրավունք:
- 2.1.3. Որո՞նք են պետական կենսաթոշակային ապահովության հիմքերը:
- 2.1.4. Որո՞նք են պետական կենսաթոշակների տեսակները:
- 2.1.5. Ովքե՞ր ունեն աշխատանքային կենսաթոշակի իրավունք:
- 2.1.6. Պետական տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձին ի՞նչ կենսաթոշակ է նշանակվում:
- 2.1.7. Քաղաքացին կենսաթոշակի նշանակման համար ե՞րբ կարող է դիմել:
- 2.1.8. Որո՞նք են կենսաթոշակների վճարման միջոցների գոյացման աղբյուրները:
- 2.1.9. Քաղաքացիներն ունե՞ն, արդյոք, լրացուցիչ կենսաթոշակի իրավունք:
- 2.1.10. Ինչպիսի՞ն է կենսաթոշակի հաշվարկման կարգը:

2.2) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

- 2.2.1. Ովքե՞ր ունեն տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք եւ ինչպիսի՞ն են դրա նշանակման պայմանները:
- 2.2.2. Ովքե՞ր ունեն արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք եւ ինչպիսի՞ն են նշանակման պայմանները:
- 2.2.3. Ովքե՞ր ունեն երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք:
- 2.2.4. Ի՞նչ կարգով են կատարվում տարիքային, արտոնյալ պայմաններով տարիքային եւ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակների նշանակումը եւ վճարումը:
- 2.2.5. Կերակրողին կորցնելու դեպքում ընտանիքի ո՞ր անդամներն ունեն աշխատանքային կենսաթոշակի իրավունք:
- 2.2.6. Կերակրողին կորցնելու դեպքում ինչպիսի՞ք են աշխատանքային կենսաթոշակի նշանակման պայմանները:

2.2.7. Ինչպիսի՞ք են կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափերը:

2.2.8. Ինչպիսի՞ք են կերակրողին կորցնելու դեպքում որդեգրողներին, որդեգրվածներին, խորթ ծնողներին եւ խորթ զավակներին աշխատանքային կենսաթոշակի նշանակման պայմանները:

2.2.9. Կերակրողին կորցնելու դեպքում ի՞նչ չափով է կատարվում աշխատանքային կենսաթոշակի վճարումը:

2.2.10. Ո՞ր դեպքերում է կատարվում աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկումը:

2.2.11. Ո՞րն է աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը:

2.3) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

2.3.1. Ովքե՞ր ունեն ծերության (տարիքային) կենսաթոշակի իրավունք եւ ինչպիսի՞ք են դրա նշանակման պայմանները:

2.3.2. Որքա՞ն է կազմում ծերության (տարիքային) կենսաթոշակի չափը: Կենսաթոշակառուի աշխատելու դեպքում ի՞նչ չափով է կատարվում դրա վճարումը:

2.3.3. Կերակրողին կորցնելու դեպքում ի՞նչ կարգով են նշանակվում սոցիալական կենսաթոշակները եւ որքա՞ն են դրանց չափերը:

2.4) ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

2.4.1. Ինչպիսի՞ն է կենսաթոշակների նշանակման համար դիմելու կարգը:

2.4.2. Ինչպիսի՞ն է կենսաթոշակների նշանակման կարգը:

2.4.3. Ինչպիսի՞ք են կենսաթոշակների նշանակման ժամկետները:

2.4.4. Ո՞ր դեպքերում է կենսաթոշակի նշանակումը կատարվում ավելի վաղ ժամկետում:

2.4.5. Ե՞րբ է եւ ի՞նչ կարգով է կատարվում կենսաթոշակի տեսակի փոփոխությունը:

2.4.6. Ովքե՞ր ունեն հաշմանդամության կենսաթոշակի վերահաշվարկման իրավունք:

2.4.7. Ինչպիսի՞ն է նախկին օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակների վերահաշվարկման կարգը:

2.4.8. Ինչպիսի՞ն է կենսաթոշակների վճարման կարգը:

2.4.9. Կարո՞ղ է արդյոք կենսաթոշակը կենսաթոշակառուի փոխարեն վճարվել այլ անձի:

2.4.10. Ինչպե՞ս է կատարվում կենսաթոշակների վճարումն անցած ժամանակահատվածի համար:

2.4.11. Ի՞նչ չափով է կատարվում կենսաթոշակի վճարումը լիովին պետության խնամքի տակ գտնվող կենսաթոշակառուներին:

2.4.12. Ի՞նչ կարգով է կատարվում կենսաթոշակի վճարման դադարեցումը, կասեցումը եւ վերսկսումը:

2.4.13. Արդյոք կենսաթոշակները հարկվո՞ւմ են, թե՛ ոչ: Ի՞նչ պահումներ են կատարվում կենսաթոշակից:

2.4.14. Ի՞նչ կարգով եւ չափով է կատարվում թաղման ծախսերի հետ կապված մասնակի փոխհատուցումը:

2.5) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՂԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

2.5.1. Ովքե՞ր են համարվում զինծառայողներ եւ զինծառայողներին հավասարեցված անձինք:

2.5.2. Որո՞նք են զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամներին տրվող պետական կենսաթոշակի տեսակները:

2.5.3. Որո՞նք են կենսաթոշակի նշանակման պայմանները:

2.5.4. Զինծառայողներն ունե՞ն, արդյոք, կենսաթոշակի ընտրության իրավունք:

2.5.5. Որո՞նք են երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման պայմանները:

2.5.6. Որքա՞ն են երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման չափերը:

- 2.5.7. Որո՞նք են հաշմանդամության կենսաթոշակի նշանակման պայմանները:
- 2.5.8. Որքա՞ն են հաշմանդամության կենսաթոշակի չափերը:
- 2.5.9. Կերակրողին կորցնելու դեպքում որո՞նք են սոցիալական կենսաթոշակի նշանակման պայմանները:
- 2.5.10. Զինծառայողի մահվան դեպքում ովքե՞ր ունեն կերակրողին կորցնելու սոցիալական կենսաթոշակի իրավունք:
- 2.5.11. Կերակրողին կորցնելու դեպքում ի՞նչ կարգով են նշանակվում եւ վճարվում սոցիալական կենսաթոշակները ամբողջովին պետական խնամքի տակ գտնվող երեխաներին:
- 2.5.12. Կերակրողին կորցնելու դեպքում որքա՞ն են նշանակվող սոցիալական կենսաթոշակի չափերը:
- 2.5.13. Ինչպիսի՞ն է կենսաթոշակների նշանակման եւ մերժման կարգը:
- 2.5.14. Ինչպիսի՞ք են զինծառայողների կենսաթոշակների նշանակման ժամկետները:
- 2.5.15. Ի՞նչ կարգով է կատարվում կենսաթոշակների հետագա վերահաշվարկը:
- 2.5.16. Ինչպիսի՞ն է կենսաթոշակների հավելումների հաշվարկման կարգը:

2.6) ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 2.6.1. Ի՞նչ պատասխանատվություն է նախատեսված կենսաթոշակների նշանակման եւ վճարման նպատակով տրված փաստաթղթերի հավաստիությունը չապահովելու համար:
- 2.6.2. Ի՞նչ կարգով է կատարվում կենսաթոշակների նշանակման վերաբերյալ որոշումների գանգատարկումը:

**Գ Լ ՈՒ Խ 3
ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

3.1) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 3.1.1. Որո՞նք են հաշմանդամների իրավունքների հիմունքները:
- 3.1.2. Ովքե՞ր են համարվում հաշմանդամ:
- 3.1.3. Որո՞նք են անձին հաշմանդամ ճանաչող մարմինները:
- 3.1.4. Հաշմանդամության ի՞նչ խմբեր են սահմանված:
- 3.1.5. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամության խմբերի, պատճառների եւ առաջացման ժամանակի որոշումը:
- 3.1.6. Որ՞ն է համարվում աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետեւանքով առաջացած հաշմանդամություն:
- 3.1.7. Ինչպե՞ս է ապահովվում հաշմանդամների իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում:
- 3.1.8. Ինչպիսի՞ արտոնություններից են օգտվում ՀՀ տարածքում գործող ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, որոնք մասնակցում են հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության իրականացմանը:

3.2) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՎՈՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

- 3.2.1. Ո՞ր դեպքում է նշանակվում հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ:
- 3.2.2. Որքա՞ն են հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակների չափերը:
- 3.2.3. Հաշմանդամության խմբի փոփոխման կամ աշխատունակության վերականգնման դեպքում նոր չափով հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ ե՞րբ է վճարվում:
- 3.2.4. Հաշմանդամության վերազննության ժամկետը բաց թողնելու դեպքում ե՞րբ է վճարվում հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ:
- 3.2.5. Ինչպե՞ս է կատարվում հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակների վճարումը:
- 3.2.6. Ովքե՞ր ունեն հաշմանդամության սոցիալական կենսաթոշակի իրավունք:
- 3.2.7. Որքա՞ն են հաշմանդամության սոցիալական կենսաթոշակների չափերը:

3.2.8. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամության սոցիալական կենսաթոշակների վճարումը:

3.3) ՀԱՇՄԱՆՂԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆՁՆՈՒՄԸ

3.3.1. Ի՞նչ է ներառում հաշմանդամության կանխարգելման պետական ծրագիրը:

3.3.2. Ի՞նչ է իրենից ներկայացնում հաշմանդամների բժշկական եւ բժշկամասնագիտական վերականգնման համակարգը:

3.3.3. Ի՞նչ է իրենից ներկայացնում հաշմանդամների վերականգնման անհատական ծրագիրը:

3.3.4. Որո՞նք են հաշմանդամների վերականգնման հիմնական տեսակները:

3.3.5. Ո՞ր մարմիններն են կազմում եւ իրականացնում հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագիրը:

3.3.6. Ի՞նչ կարգով է իրականացվում հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրի ֆինանսավորումը:

3.3.7. Ի՞նչ պատասխանատվություն է նախատեսվում հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագիրը չկատարելու դեպքում:

3.3.8. Ո՞վ է իրականացնում հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրի իրականացման վերահսկողությունը:

3.3.9. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների բժշկական եւ առողջարանային սպասարկումը:

3.4) ՀԱՇՄԱՆՂԱՄՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

3.4.1. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների համար կրթության եւ մասնագիտական ուսուցման պայմանների ապահովումը:

3.4.2. Ինչպե՞ս է իրականացվում նախադպրոցական տարիքի հաշմանդամ երեխաների դաստիարակությունը:

3.4.3. Ինչպե՞ս է իրականացվում հաշմանդամների միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական եւ բարձրագույն կրթությունը:

3.4.4. Ինչպե՞ս են իրականացվում հաշմանդամների մասնագիտական ուսուցումը, վերաորակավորումը եւ որակավորման բարձրացումը:

3.4.5. Հաշմանդամների համար որո՞նք են համարվում անձնական շփման եւ հաղորդակցման միջոցներ:

3.5) ՀԱՇՄԱՆՂԱՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

3.5.1. Ինչպե՞ս է իրականացվում հաշմանդամների աշխատանքի իրավունքը:

3.5.2. Ինչպե՞ս է իրականացվում հաշմանդամների զբաղվածության ապահովումը:

3.5.3. Ինչպիսի՞ն պետք է լինեն հաշմանդամների աշխատանքային պայմանները:

3.5.4. Աշխատանքի ընդունելիս հաշմանդամների համար արդյոք փորձաշրջան սահմանվում է:

3.5.5. Պետական իշխանության եւ կառավարման տեղական մարմինները ի՞նչպիսի պայմաններ են պարտավոր ստեղծել հաշմանդամների ձեռնարկատիրական եւ աշխատանքային գործունեության կազմակերպման համար:

3.5.6. Եթե աշխատողի հետ՝ աշխատանքային պարտականությունները կատարելիս, իր մեղքով դժբախտ պատահար է տեղի ունեցել, ապա պարտավո՞ր է, արդյոք, հիմնարկը, ձեռնարկությունը, կազմակերպությունը պահպանել նրա աշխատանքի տեղը:

3.5.7. Հաշմանդամին խնամելու եւ գործազրկության նպաստ ստանալու ժամանակահատվածը հաշվվո՞ւմ է, արդյոք, աշխատանքային ստաժի մեջ, թե՞ ոչ:

3.5.8. Հաշմանդամները կարո՞ղ են ներգրավվել գիշերային աշխատանքներում:

3.6) ՀԱՇՄԱՆՂԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

3.6.1. Ինչպիսի՞ պետական քաղաքականություն է վարվում հաշմանդամների համար սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների (կինոթատրոնների, թատրոնների, համերգասրահների, տրանսպորտային եւ այլն) մատչելիության ապահովման ուղղությամբ:

3.6.2. Արդյո՞ք հաշմանդամների պահանջմունքները հաշվի են առնվում սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների (կինոթատրոնների, թատրոնների, համերգասրահների, տրանսպորտային եւ այլն) նախագծման եւ շինարարության ընթացքում:

3.6.3. Ու՞մ կողմից եւ ի՞նչ կարգով է կատարվում բնակելի շինությունների հարմարեցումը հաշմանդամների համար:

3.6.4. Ու՞մ կողմից եւ ի՞նչ կարգով է կատարվում տրանսպորտային միջոցների եւ երթուղիների հարմարեցումը հաշմանդամների օգտագործմանը:

3.6.5. Ու՞մ կողմից պետք է ապահովվի հաշմանդամների համար մարզական կառույցների եւ մշակութային հիմնարկների մատչելիությունը:

3.6.6. Ու՞մ կողմից եւ ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների ապահովումը կապի միջոցներով:

3.7) ՀԱՇՄԱՆՂԱՄՆԵՐԻՆ ՑՈՒՅՑ ՏՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

3.7.1. Հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնության ի՞նչ տեսակներ գոյություն ունեն:

3.7.2. Ու՞մ կողմից եւ ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամներին տեխնիկական կամ այլ միջոցների տրամադրումը:

3.7.3. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների տրանսպորտային սպասարկումը:

3.7.4. Ինչպիսի՞ք են հաշմանդամների պրոթեզավորման կարգն ու պայմանները:

3.7.5. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների բնակարանային ապահովումը:

3.7.6. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների ապահովումը պարենային եւ արդյունաբերական ապրանքներով:

3.7.7. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների կենցաղային սպասարկումը:

3.7.8. Ի՞նչ իրավունքներ ունեն սոցիալական օգնության ստացիոնար հիմնարկներում գտնվող հաշմանդամները:

3.7.9. Պետական իշխանության տեղական մարմինները եւ գործատուները ինչպիսի՞ իրավասություններ ունեն հաշմանդամների կենսաապահովման բարելավման ուղղությամբ:

3.7.10. Որո՞նք են սոցիալական օգնության ֆինանսավորման աղբյուրները:

3.7.11. Որո՞նք են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության եւ սպասարկման իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով եւ առանձին (հատուկ) խմբերը:

3. 7. 12. Ի՞նչ կարգով են իրականացվում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունը եւ սպասարկումը:

3.8) ՀԱՇՄԱՆՂԱՄՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՅՆԱԿ ՏԱՐԵՑՆԵՐԻ՝ ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ

3.8.1. Որո՞նք են միայնակ տարեցների եւ հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու ծրագրի նպատակները:

3.8.2. Ինչպիսի՞ն է տնային պայմաններում սոցիալական սպասարկման իրականացման կարգը:

3.8.3. Որո՞նք են տնային պայմաններում սոցիալական սպասարկման ծառայությունների տեսակները:

3.8.4. Քանի՞ փուլով եւ պետական իշխանության ո՞ր ստորաբաժանումների ու ոչ պետական կազմակերպությունների միջոցով է իրականացվում ՀՀ կառավարության 1997թ. նոյեմբերի 4-ի թիվ 485 որոշմամբ հաստատված «Միայնակ տարեցների եւ հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու վերաբերյալ» ծրագիրը:

3.9) ՀԱՇՎԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.9.1. Ինչպիսի՞ն է հաշմանդամների հասարակական կազմակերպությունների ստեղծման եւ գործունեության կարգը:

3.9.2. Հաշմանդամների հասարակական կազմակերպություններն արդյոք իրավունք ունե՞ն զբաղվելու տնտեսական գործունեությամբ եւ ի՞նչ արտոնություններից կարող են օգտվել:

3.9.3. Ինչպիսի՞ն է հաշմանդամների հասարակական կազմակերպությունների սեփականության տնօրինման կարգը:

3.9.4. Հաշմանդամների ինչպիսի՞ հասարակական կազմակերպություններ են գործում Հայաստանի Հանրապետությունում: Նշել դրանց տվյալները:

Գ Լ ՈՒ Ն 4 ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳ

4.1. Ի՞նչ նպատակով եւ երբվանի՞ց է ներդրվել ընտանեկան նպաստի համակարգը:

4.2. Ինչպիսի՞ն է ընտանեկան նպաստի նշանակման եւ վճարման կարգը:

4.3. Ովքե՞ր ունեն ընտանեկան նպաստ ստանալու իրավունք եւ ինչպե՞ս է կատարվում նպաստի հաշվարկումը:

4.4. Ինչպիսի՞ք են ընտանեկան նպաստի նշանակման եւ վճարման ժամկետները:

4.5. Նպաստ նշանակելու համար ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ եւ ինչպիսի՞ն է նպաստի վճարման կարգը:

4.6. Երբվանի՞ց է դադարեցվում նպաստի վճարումը:

4.7. Ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման ժամանակ ի՞նչ ցուցանիշներ են օգտագործվում:

4.8. Ի՞նչ կարգով է որոշվում ընտանիքի անդամների պատկանելությունը որոշակի սոցիալական խմբերի եւ որքա՞ն են դրանց թվային արժեքները եւ գործակիցների մեծությունները:

4.9. Ի՞նչ ազդեցություն է գործում ընտանիքի անաշխատունակ անդամների թիվը ընտանիքի անապահովության աստիճանի վրա:

4.10. Ի՞նչ ազդեցություն են գործում ընտանիքի բնակարանային պայմաններն ընտանիքի անապահովության աստիճանի վրա:

4.11. Ի՞նչ ազդեցություն է գործում անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունն ընտանիքի անապահովության աստիճանի վրա:

4.12. Ի՞նչ ազդեցություն է գործում ընտանեկան ձեռնարկություն ունենալը կամ անհատ ձեռներեցությամբ զբաղվելն ընտանիքի անապահովության աստիճանի վրա:

4.13. Ո՞ր ընտանիքներն ունեն նպաստի իրավունք:

ՀԱՎԵԼՎԱԾ 4 Քաղվածք «Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանների մասին» 1996թ. մարտի 5-ի ՀՀ օրենքից

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայացվող գրքույկն Ուստանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի հերթական թողարկումն է: Այն նվիրված է քաղաքացիների սոցիալական ապահովության եւ առողջության պահպանման իրավունքներին: Դրանում տեղ են գտել սոցիալական ապահովության եւ առողջության պահպանման իրավունքների վերաբերյալ քաղաքացիներին առավել հուզող հարցերի պատասխանները: Մեր նպատակն է քաղաքացիներին տեղեկացնել իրենց իրավունքների մասին, օգնել նրանց՝ գտնելու իրենց իրավունքներին առնչվող առավել հաճախ հանդիպող իրավական հարցերի պատասխանները եւ դրանով իսկ նպաստել դրանց պաշտպանությանը:

Սոցիալական ապահովության իրավունքը՝ քաղաքացու կարելորագույն իրավունքներից է: Սոցիալական ապահովությունը հասարակության կողմից իր այն անդամներին պահելը, ապահովելն է, որոնք անաշխատունակ են կամ, իրենց կամքից անկախ, այլ պատճառով գոյության համար բավարար միջոցներ չունեն:

«Սահմանադրության 33 հոդվածում թվարկված են այն պայմանները, որոնց առկայությունը հիմք է հանդիսանում սոցիալական ապահովության համար: Դրանք են՝ ծերությունը, հաշմանդամությունը, կերակրողին կորցնելը, գործազուրկի կարգավիճակ ձեռք բերելը: Հասկանալի է, որ տվյալ ցանկը սպառիչ չէ, քանի որ սոցիալական ապահովությունը տրվում է նաեւ օրենքով սահմանված այլ դեպքերում:

Գրքույկում ընդգրկված հարցերի ատասխանները հիմնվում են ոչ միայն ներպետական օրենսդրության դրույթների, այլ նաեւ Հայաստանի Հանրապետության վավերացրած եւ հանրապետության ներպետական իրավունքի մասը կազմող միջազգային պայմանագրերի վրա: Պատասխաններում հղումներ են կատարվել համապատասխան նորմատիվ ակտերին, ինչը հնարավորություն կտա ընթերցողին առանց դժվարության գտնելու իրեն անհրաժեշտ նորմատիվ ակտերը:

ՀԱՐՑԱՇԱՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1.
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՀՀ քաղաքացիների սոցիալական ապահովության ինչպիսի՞ սահմանադրական երաշխիքներ գոյություն ունեն:

Քաղաքացու սոցիալական ապահովության իրավունքն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 33 հոդվածում: ՀՀ Սահմանադրության 33 հոդվածն ամրագրել է, որ «Յուրաքանչյուր քաղաքացի ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»:

Այս հոդվածի բովանդակությունը կոնկրետացնում է սահմանադրական դրույթն այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է:

Սոցիալական ապահովությունը հասարակության կողմից իր այն անդամներին պահելը, ապահովելն է, որոնք անաշխատունակ են կամ, իրենց կամքից անկախ, այլ պատճառով գոյության համար բավարար միջոցներ չունեն:

Սահմանադրությունը ճանաչում է ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու սոցիալական ապահովության իրավունքը եւ միաժամանակ պետության վրա պարտավորություն է դնում ստեղծելու բոլոր անհրաժեշտ պայմաններն այդ իրավունքի իրականացման համար:

Սահմանադրության 33 հոդվածում թվարկված են այն պայմանները, որոնց առկայությունը հիմք է հանդիսանում սոցիալական ապահովության համար: Դրանք են՝ ծերությունը, հաշմանդամությունը, կերակրողին կորցնելը, գործազուրկի կարգավիճակ ձեռք բերելը: Այդ ցանկը սպառիչ չէ, քանի որ սոցիալական ապահովությունը վերապահվում է նաեւ օրենքով սահմանված այլ դեպքերում:

Ըստ էության, Սահմանադրության վերոնշյալ հոդվածում առաջին հերթին խոսքը սոցիալական ապահովության դրամական ձեւերի մասին է (պետական կենսաթոշակներ, սոցիալական նպաստներ): Սակայն անհրաժեշտության դեպքում դրամական վճարումները կարող են փոխարինվել կամ լրացվել սոցիալական ապահովության բնավճարի (նատուրալ) ձեւերով՝ ծերերին եւ հաշմանդամներին տուն-ինտերնատներում պահելը, մանկատների, ինտերնատների ծառայությունները, տանը իրականացվող սոցիալական սպասարկումը եւ այլն:

1.2. ՀՀ քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի պաշտպանության ինչպիսի՞ միջազգային իրավական մեխանիզմներ գոյություն ունեն:

ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 5-րդ մասի իմաստից ելնելով՝ հատկապես կարեւորվում են միջազգային իրավական փաստաթղթերի դերն ու նշանակությունը մարդու եւ քաղաքացու իրավունքների, այդ թվում՝ սոցիալական ապահովության իրավունքների պաշտպանության առումով: Համաձայն այդ հոդվածի դրույթի՝ «Վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը»:

Գոյություն ունեն մարդու եւ քաղաքացու սոցիալական ապահովության եւ առողջության պահպանման իրավունքների պաշտպանությանը նվիրված ինչպես հատուկ, այնպես էլ ընդ-

հանուր միջազգային իրավական փաստաթղթեր: Ստորեւ կտրվեն դրանց վերաբերող համապատասխան մեջբերումներ միջազգային իրավական փաստաթղթերից:

Այսպիսով, մարդու եւ քաղաքացու սոցիալական ապահովության եւ առողջության պահպանման իրավունքների վերաբերյալ դրույթներ պարունակող միջազգային իրավական ընդհանուր փաստաթղթերից է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որն ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 10-ին՝ 217 A (III) բանաձեւով:

Համաձայն այդ հռչակագրի 22 հոդվածի՝ «յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, իրավունք ունի սոցիալական ապահովության ... ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով եւ յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան», իսկ համաձայն 25 հոդվածի՝

«1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ... գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, վերահաս ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում ապահովված լինելու իրավունք:

2. Մայրությունն ու մանկությունը տալիս են առանձնահատուկ հոգածության եւ օգնության իրավունք: Անուսնությունից կամ արտամուսնական կապից ծնված բոլոր երեխաները պետք է օգտվեն սոցիալական միանման պաշտպանությունից»:

Միջազգային իրավական հաջորդ ընդհանուր փաստաթուղթը 1966թ. Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրն է, որի 9 հոդվածի համաձայն՝ «Սույն դաշնագրին մասնակցող պետությունները ձանաչում են սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական ապահովագրության՝ յուրաքանչյուր մարդու իրավունքը», իսկ համաձայն 10 հոդվածի՝

«... 1. ընտանիքին, որը հանդիսանում է հասարակության բնական եւ հիմնական բջիջը, պետք է ըստ հնարավորին տրամադրվեն ամենալայն պահպանություն եւ օգնություն, առանձնապես ընտանիքի կազմավորման ժամանակ, քանի դեռ ընտանիքի պատասխանատվության վրա է ընկած ոչ ինքնուրույն երեխաների խնամքի ու նրանց դաստիարակության հոգը:

2. Հատուկ պաշտպանություն պետք է տրամադրվի մայրերին մինչեւ ծննդաբերությունը եւ դրանից հետո ընկած խելամիտ ժամանակաշրջանի ընթացքում: Այդ ժամանակաշրջանի ընթացքում աշխատող մայրերին պետք է տրամադրվի վճարովի արձակուրդ կամ արձակուրդ՝ սոցիալական ապահովության բավարար նպաստներով հանդերձ»:

Մարդու եւ քաղաքացու սոցիալական ապահովության իրավունքի վերաբերյալ դրույթներ պարունակող միջազգային իրավական ընդհանուր փաստաթղթերից են նաեւ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1975թ. դեկտեմբերի 9-ին ընդունված՝ Հաշմանդամների իրավունքների մասին հռչակագիրը, Կենսաթոշակային ապահովության բնագավառում ԱՊՀ անդամ-պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին 1992թ. մարտի 13-ի համաձայնագիրը, Կենսաթոշակային ապահովության բնագավառում Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությունների համագործակցության մասին համաձայնագիրը, 1994թ. ապրիլի 15-ին Մոսկվայում կնքված Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների ու հաշմանդամների, այլ պետությունների տարածքում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընտանիքների համար արտոնությունների ու երաշխիքների փոխադարձ ձանաչման մասին համաձայնագիրը (վավերացվել է 1995թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ Նախագահի թիվ 527 հրամանագրով) եւ այլն (*Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի ցանկը տե՛ս հավելված 1-ում*):

1.3. Ինչպիսի՞ն է սոցիալական ապահովության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը:

Սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի իրականացման համար չափազանց կարեւոր է այդ առնչությամբ պատշաճ ընթացիկ օրենսդրություն ունենալը: 1992թ. մարտի 20-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքը, իսկ 1993թ. մայիսի 24-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին»:

Օրենքում մի շարք փոփոխություններ կատարվեցին, բայց, այնուամենայնիվ, այդ հարցին վերաբերող նոր օրենքի ընդունման կարիք առաջացավ: ՀՀ Ազգային ժողովը 1995թ.

դեկտեմբերի 6-ին ընդունեց օրենք՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին»: Նոր օրենքն ավելի է համապատասխանեցված միջազգային չափորոշիչներին եւ նոր սոցիալ-տնտեսական պայմաններին համապատասխան ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունում պետական կենսաթոշակային ապահովության իրավական, տնտեսական եւ կազմակերպական դրույթներ:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների եւ ունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների եւ արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները:

Ի լրումն այս օրենքների՝ 1996թ. ապրիլի 4-ին հրապարակվեց «Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանների մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի համար պահանջվող աշխատանքային գործունեության տեսակների ցանկը, մասնագիտական աշխատանքային ստաժի տեւողությունը, տարիքը:

Սակայն հարկ է նշել, որ գործող ՀՀ աշխատանքային օրենսգրքում աշխատավորների՝ գործազրկության եւ օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքն այդ առումով փոխակերպման եւ տեղայնացման (հնալեւնետացիայի) չի ենթարկվել: Միակ օրենսդրական ակտը «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքն է (25 դեկտեմբերի 1996թ., ՀՕ-92) եւ ՀՀ կառավարության 1997թ. մարտի 10-ի «Գործազրկության բազային նպաստի չափը սահմանելու մասին» թիվ 30 որոշումը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունում 1997թ. հունվարի 1-ից գործազրկության բազային նպաստի չափը սահմանվում է 3000 դրամ:

Բնակչության սոցիալական պաշտպանության բնագավառը կարգավորող օրենսդրությունը եւս ամբողջական չէ: Մինչ օրս ընդունվել են «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքը (30 դեկտեմբերի 1997թ., ՀՕ-179), «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ կառավարության 08.06.1998թ. թիվ 352 որոշումը, «ՀՀ-ում ընտանեկան նպաստի համակարգը ներդնելու մասին» ՀՀ կառավարության թիվ 727 որոշումը (19 նոյեմբերի 1998թ.), «Մինչեւ 2 տարեկան երեխա խնամող մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ եւ գործազրկության բազային նպաստների չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 235 որոշումը (19 ապրիլի 1999թ.), եւ մի շարք այլ որոշումներ: Կառավարության 19.04.1999թ. թիվ 235 որոշման համաձայն՝ 1999թ. ապրիլի 1-ից մինչեւ 2 տարեկան երեխա խնամող մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամյա նպաստի չափը սահմանվել է 2300 դրամ, երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ նպաստի չափը՝ 5900 դրամ, իսկ գործազրկության բազային նպաստի չափը՝ 3900 դրամ (կենսաթոշակային ապահովության, սոցիալական ապահովագրության եւ հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական ակտերի ցանկը տես հավելված 2-ում):

1.4. Ինչպե՞ս է որոշվում ՀՀ միջազգային պայմանագրերի եւ սոցիալական ապահովության բնագավառում ներպետական օրենսդրության միջեւ հարաբերակցությունը:

ՀՀ Սահմանադրության 6 հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության անունից կնքված եւ վավերացված միջազգային պայմանագրերում եթե սահմանված են այլ նորմեր, որոնք նախատեսված չեն օրենքով կամ հակասում են օրենքին, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Այսինքն, եթե միջազգային պայմանագրով սահմանվում է մարդու եւ քաղաքացու սոցիալական ապահովության իրավունքների պաշտպանությանը վերաբերող այնպիսի նորմ, որը «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքով կամ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքով, կամ էլ սոցիալական ապահովության եւ առողջության պահպանման իրավունքների պաշտպանությանը վերաբերող ՀՀ մյուս օրենքներով այլ կարգավորում ունի կամ ընդհանրապես այդպիսի նորմ նախատեսված չէ,

ապա կիրառվում է համապատասխան միջազգային պայմանագրի նորմը, բացի այն դեպքերից, երբ միջազգային պայմանագրից բխում է, որ դրա կիրառման համար պահանջվում է ներպետական ակտի հրատարակում:

1.5. Ի՞նչ է նշանակում «սոցիալական ապահովություն» հասկացությունը: Որո՞նք են այն պայմանները, որոնց առկայությունը հիմք է հանդիսանում սոցիալական ապահովության համար:

Սոցիալական ապահովությունը հասարակության կողմից իր այն անդամներին պահելը, սոցիալական երաշխիքներն ապահովելն է, որոնք անաշխատունակ են կամ, իրենց կամքից անկախ, այլ պատճառով գոյության համար բավարար միջոցներ չունեն:

Սահմանադրության 33 հոդվածում եւ սոցիալական ապահովությանը վերաբերող ներպետական օրենսդրության մեջ թվարկված են այն պայմանները, որոնց առկայությունը հիմք է հանդիսանում սոցիալական ապահովության համար: Դրանք են՝ ծերությունը, հաշմանդամությունը, կերակրողին կորցնելը, գործազուրկի կարգավիճակ ձեռք բերելը

1.6. Որո՞նք են քաղաքացիների սոցիալական ապահովության ձեւերը:

Քաղաքացիների սոցիալական ապահովության հիմնական ձեւերն են օրենքով սահմանված պետական կենսաթոշակները եւ սոցիալական նպաստները: Սակայն անհրաժեշտության դեպքում դրամական վճարումները կարող են փոխարինվել կամ լրացվել սոցիալական ապահովության բնավճարի (նատուրալ) ձեւերով՝ ծերերին եւ հաշմանդամներին տուն-ինտերնատներում պահելը, մանկատների, ինտերնատների ծառայությունները, տանը իրականացվող սոցիալական սպասարկումը եւ այլն:

1.7. Սոցիալական նպաստների ի՞նչ տեսակներ գոյություն ունեն:

Սոցիալական նպաստներ են համարվում այն դրամական վճարումները (բացի թոշակներից), որոնք նախատեսված են քաղաքացիների՝ ժամանակավոր անաշխատունակության կամ գործազրկության դեպքում կորսված աշխատավարձի փոխհատուցման եւ հղի ու մինչեւ 2 տարեկան երեխա ունեցող կանանց, ինչպես նաեւ սոցիալական ծանր վիճակում գտնվող ընտանիքների սոցիալական պաշտպանության համար:

Գոյություն ունեն սոցիալական նպաստների հետեւյալ տեսակները՝

և ժամանակավոր անաշխատունակության նպաստ և սոցիալական բնույթի դրամական վճարումներ, որոնք նախատեսված են քաղաքացիների՝ ժամանակավոր անաշխատունակության դեպքում, անաշխատունակության թերթիկի ներկայացման պարագայում, կորսված աշխատավարձի՝ օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման համար,

և գործազրկության նպաստ և սոցիալական բնույթի դրամական վճարումներ, որոնք նախատեսված են քաղաքացիների՝ գործազուրկ ճանաչվելու դեպքում կորսված աշխատավարձի՝ օրենսդրությամբ նախատեսված փոխհատուցման համար («Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենք, 25 դեկտեմբերի 1996թ., ՀՕ-92),

և հղիության եւ ծննդաբերության նպաստ և համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի, կանանց տրվող հղիության եւ ծննդաբերության արձակուրդներ՝ աշխատավարձի պահպանմամբ, 140 օրացուցային օր տեւողությամբ, որից 70 օրը՝ նախածննդյան շրջանի եւ 70 օրը՝ հետծննդյան շրջանի համար: Բարդ ծննդաբերության դեպքում հղիության եւ ծննդաբերության արձակուրդների տեւողությունը 155 օր է, իսկ զույգ եւ ավելի երեխաներ ծնվելու դեպքում՝ 180 օր,

և երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստ և միանվագ տրվող նպաստ, որը վճարվում է ծնողներից որեւէ մեկին՝ յուրաքանչյուր ծնված (որդեգրված) երեխայի համար 5900 դրամի չափով («Մինչեւ 2 տարեկան երեխա խնամող՝ մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ եւ գործազրկության բազային նպաստների չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 19.04.1999թ. թիվ 235 որոշում),

և մինչեւ 2 տարեկան երեխա խնամելու դեպքում տրվող նպաստ և ամենամսյա դրամական վճարումներ, որոնք վճարվում են կանանց, որոնք մինչեւ 2 տարեկան երեխա խնամելու պատճառով գտնվում են մասնակի վճարովի արձակուրդում («Մինչեւ 2 տարեկան երեխա խնամող՝ մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց երեխայի ծննդյան կապակ-

ցությամբ տրվող միանվագ եւ գործազրկության բազային նպաստների չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 19.04.1999թ. թիվ 235 որոշում),

և կենսաթոշակառուի մահվան (հուղարկավորության) դեպքում նրա ընտանիքին կամ հուղարկավորությունը կատարած անձին տրվող նպաստ և միանվագ տրվող նպաստ, որը վճարվում է կենսաթոշակառուի մահվան դեպքում՝ որպես թաղման ծախսերի մասնակի փոխհատուցում՝ մեկ տարվա կենսաթոշակի չափով,

և ընտանեկան նպաստ և առավել անապահով ընտանիքների նկատմամբ հասցեագրված սոցիալական աջակցության քաղաքականություն իրականացնելու նպատակով տրվող ամենամսյա դրամական վճարումներ:

Սակայն անհրաժեշտության դեպքում դրամական նպաստները կարող են փոխարինվել կամ լրացվել սոցիալական ապահովության բնավճարային (նատուրալ) ծեփերով՝ ծեփերին եւ հաշմանդամներին տուն-ինտերնատներում պահելը, մանկատների, ինտերնատների ծառայությունները, տանն իրականացվող սոցիալական սպասարկումը եւ այլն:

Գ Լ ՈՒ Խ 2

ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

2.1) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1.1. Օրենսդրական ո՞ր ակտերով է կարգավորվում Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության իրավունքը կարգավորվում է ՀՀ Սահմանադրության 33 հոդվածով, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 1995թ. դեկտեմբերի 29-ի ՀՀ օրենքով, «Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանների մասին» 1996թ. ապրիլի 4-ի ՀՀ օրենքով, «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» 1998թ. նոյեմբերի 25-ի ՀՀ օրենքով եւ ՀՀ օրենսդրական ու ենթօրենսդրական այլ ակտերով:

2.1.2. Հայաստանի Հանրապետությունում ովքե՞ր ունեն պետական կենսաթոշակային ապահովության իրավունք:

Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական կենսաթոշակային ապահովության իրավունք:

Այդ իրավունքը տարածվում է նաեւ Հայաստանի Հանրապետությունում բնակվող օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց վրա, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան չի նախատեսված («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 1995թ. դեկտեմբերի 29-ի ՀՀ օրենքի 1-ին եւ 2-րդ հոդվածներ):

2.1.3. Որո՞նք են պետական կենսաթոշակային ապահովության հիմքերը:

Պետական կենսաթոշակային ապահովության հիմքերն են՝
 և համապատասխան կենսաթոշակային տարիքի հասնելը,
 և հաշմանդամ դառնալը,
 և ընտանիքի անաշխատունակ անդամների համար՝ կերակրողի մահը,
 և առանձին մասնագիտությունների աշխատողների համար՝ որոշակի պայմաններում կատարած աշխատանքային գործունեությունը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 1995թ. դեկտեմբերի 29-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդված):

2.1.4. Որո՞նք են պետական կենսաթոշակների տեսակները:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքը (հոդված 5) սահմանել է պետական կենսաթոշակների հետևյալ տեսակները՝

- ա) աշխատանքային կենսաթոշակներ՝
 - և տարիքային,
 - և արտոնյալ պայմաններով տարիքային,
 - և երկարամյա ծառայության,
 - և հաշմանդամության,
 - և կերակրողին կորցնելու դեպքում,
- բ) սոցիալական կենսաթոշակներ՝
 - և ծերության,
 - և հաշմանդամության,
 - և կերակրողին կորցնելու դեպքում:

2.1.5. Ովքե՞ր ունեն աշխատանքային կենսաթոշակի իրավունք:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքով (հոդված 6) նախատեսված պայմանների բավարարման եւ սոցիալական ապահովագրության վճարումներ կատարելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի իրավունք են ձեռք բերում՝

1) հիմնարկներում, ձեռնարկություններում, կազմակերպություններում (գործատուներ), անկախ սեփականության ձեւից, աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք,

2) ինքնուրույն աշխատանքով զբաղված անձինք, այդ թվում՝ անհատ ձեռներեցները եւ գյուղացիական տնտեսությամբ զբաղվողները,

3) գիտական եւ ստեղծագործական աշխատանքով զբաղված անձինք,

4) քաղաքացիական պարտքը կատարելիս հաշմանդամ դարձած անձինք:

2.1.6. Պետական տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձին ի՞նչ կենսաթոշակ է նշանակվում:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքով (հոդված 7) սահմանված պետական տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող անձին նշանակվում է մեկ կենսաթոշակ՝ ըստ նրա ընտրության:

2.1.7. Քաղաքացին կենսաթոշակի նշանակման համար ե՞րբ կարող է դիմել:

Քաղաքացին կենսաթոշակի նշանակման համար կարող է դիմել կենսաթոշակի իրավունքն ունենալուց հետո՝ առանց ժամկետի սահմանափակման («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 1995թ. դեկտեմբերի 29-ի ՀՀ օրենքի 8-րդ հոդված):

2.1.8. Որո՞նք են կենսաթոշակների վճարման միջոցների գոյացման աղբյուրները:

Կենսաթոշակների վճարման միջոցների գոյացման աղբյուրներն են՝

ա) գործատուների կողմից աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների ընդհանուր գումարի նկատմամբ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները,

բ) քաղաքացիների աշխատավարձից կատարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները,

գ) ինքնուրույն աշխատանքով զբաղված անձանց, այդ թվում անհատ ձեռներեցների, գյուղացիական տնտեսությամբ, գիտական եւ ստեղծագործական աշխատանքով զբաղվածների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները,

դ) պետական բյուջեի միջոցները,

ե) կամավոր ներդրումները եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարներ:
 Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դրույքաչափերը, հաշվարկման եւ վճարման կարգը սահմանված են «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» 1997թ. դեկտեմբերի 26-ի ՀՀ օրենքով («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքներ՝ 1997թ., մայիսի 12, 1998թ. փետրվարի 3, ՀՕ-196):

2.1.9. Քաղաքացիներն ունե՞ն, արդյոք, լրացուցիչ կենսաթոշակի իրավունք:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքով (հոդված 10) սահմանված կենսաթոշակային ապահովումը զուգահեռ քաղաքացիներն ունեն պետական եւ ոչ պետական ապահովագրական մարմինների հետ լրացուցիչ կենսաթոշակային ապահովության համար պայմանագրեր կնքելու իրավունք:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում պետական եւ ոչ պետական ապահովագրական մարմինների գործունեության կարգը եւ իրավասության շրջանակները սահմանված են «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» 1997թ. դեկտեմբերի 26-ի եւ «Ապահովագրության մասին» 1996թ. հոկտեմբերի 19-ի ՀՀ օրենքներով:

2.1.10. Ինչպիսի՞ն է կենսաթոշակի հաշվարկման կարգը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքով (հոդված 11) նախատեսված կենսաթոշակները հաշվարկվում են՝ բազային (սոցիալական) կենսաթոշակին ավելացնելով յուրաքանչյուր մեկ լրիվ տարվա աշխատանքային (ապահովագրական) ստաժի համար տրվող հավելումը:

Բազային կենսաթոշակի չափը, ինչպես նաեւ աշխատանքային ստաժի համար տրվող հավելման չափը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ («Բազային կենսաթոշակի եւ յուրաքանչյուր տարվա համար աշխատանքային ստաժի համար տրվող հավելման չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 12-ի թիվ 1092 որոշում):

Ներկայումս բազային կենսաթոշակի չափը կազմում է 3000 դրամ, իսկ յուրաքանչյուր մեկ լրիվ տարվա աշխատանքային (ապահովագրական) ստաժի համար տրվող հավելումը կազմում է 60 դրամ:

Օրինակ, եթե քաղաքացին ունի 35 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրա կենսաթոշակը կկազմի՝

$$3000 \text{ դրամ (բազային կենսաթոշակ)} + 35 \times 60 \text{ դրամ (հավելում)} = 3000 \text{ դրամ} + 2100 \text{ դրամ} = 5100 \text{ դրամ:}$$

Սոցիալական ապահովագրության վճարումների անհատական հաշվառման անցնելուց հետո աշխատանքային ստաժի համար տրվող հավելումը որոշվելու է՝ ելնելով սոցիալական ապահովագրության վճարումներից:

75 տարին լրացած կենսաթոշակառուի կենսաթոշակն ավելացվում է բազային կենսաթոշակի 30 տոկոսի չափով («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 1997թ., մայիսի 12):

Օրինակ, եթե 75 տարին լրացած քաղաքացին ունի 35 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրա կենսաթոշակը կկազմի՝

$$3000 \text{ դրամ (բազային կենսաթոշակ)} + 35 \times 60 \text{ դրամ (հավելում)} + 3000 \text{ դրամ} \times 30\% : 100\% = 3000 \text{ դրամ} + 2100 \text{ դրամ} + 900 \text{ դրամ} = 6000 \text{ դրամ:}$$

2.2) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

2.2.1. Ովքե՞ր ունեն տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք եւ ինչպիսի՞ն են դրա նշանակման պայմանները:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքը (հոդված 11) սահմանել է, որ տարիքային

աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն կանայք՝ 63 տարին (նախկին օրենքով սահմանված էր 55 տարեկան հասակը, որոշ դեպքերում՝ 50 տարեկան), տղամարդիկ՝ 65 տարին լրանալու եւ ոչ պակաս 5 տարվա աշխատանքային ստաժի ամբողջության դեպքում (նախկին օրենքով տղամարդկանց համար սահմանված էր 60 տարին եւ ամբողջ 25 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժը):

Օրենքը կանանց եւ տղամարդկանց տարիքային աշխատանքային կենսաթոշակի համար, ըստ տարիների, սահմանել է տարիքային հետեւյալ սանդղակը.

<u>տարեթվեր</u>	<u>տղամարդ</u>	<u>կին</u>
1996թ.	60,5	55,5
1997թ.	61	56
1998թ.	61,5	56,5
1999թ.	62	57
2000թ.	62,5	57,5
2001թ.	63	58
2002թ.	63,5	58,5
2003թ.	64	59
2004թ.	64,5	59,5
2005թ.	65	60
2006թ.	65	60,5
2007թ.	65	61
2008թ.	65	61,5
2009թ.	65	62
2010թ.	65	62,5
2011թ.	65	63:

2.2.2. Ովքե՞ր ունեն արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք եւ ինչպիսի՞ն են նշանակման պայմանները:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքում (հոդված 12) կարգավորված են նաեւ արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունքը եւ նշանակման պայմանները:

Արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն՝ ա) առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում առնվազն 15 տարի աշխատած կանայք՝ 53, տղամարդիկ՝ 58 տարին լրանալու դեպքում:

Ընդ որում, կանանց ու տղամարդկանց համար, ըստ տարիների, սահմանվում է հետեւյալ տարիքային սանդղակը.

<u>տարեթվեր</u>	<u>տղամարդ</u>	<u>կին</u>
1996թ.	50,5	45,5
1997թ.	51	46
1998թ.	51,5	46,5
1999թ.	52	47
2000թ.	52,5	47,5
2001թ.	53	48
2002թ.	53,5	48,5
2003թ.	54	49
2004թ.	54,5	49,5
2005թ.	55	50
2006թ.	55,5	50,5
2007թ.	56	51
2008թ.	56,5	51,5
2009թ.	57	52

2010թ.	57,5	52,5
2011թ.	58	53

բ) վնասակար, ծանր պայմաններում առնվազն 20 տարի աշխատած կանայք՝ 55, տղամարդիկ՝ 60 տարին լրանալու դեպքում:

Ընդ որում, կանանց ու տղամարդկանց համար, ըստ տարիների, սահմանվում է հետևյալ տարիքային սանդղակը.

<u>տարեթվեր</u>	<u>տղամարդ</u>	<u>կին</u>
1996թ.	55,5	50,5
1997թ.	56	51
1998թ.	56,5	51,5
1999թ.	57	52
2000թ.	57,5	52,5
2001թ.	58	53
2002թ.	58,5	53,5
2003թ.	59	54
2004թ.	59,5	54,5
2005թ.	60	55

զ) չորս եւ ավելի երեխա ծնած եւ նրանց մինչեւ ութ տարեկան դառնալը խնամած մայրերը, ինչպես նաեւ մինչեւ 16 տարին լրանալը մանկուց հաշմանդամ ճանաչված երեխա խնամած մայրերը՝ 58 տարին լրանալու եւ ոչ պակաս 5 տարվա աշխատանքային ստաժի ամբողջության դեպքում, որոնց համար, ըստ տարիների, սահմանվում է հետևյալ տարիքային սանդղակը.

<u>տարեթվեր</u>	<u>տարիք</u>	<u>տարեթվեր</u>	<u>տարիք</u>
1996թ.	50,5	2004թ.	54,5
1997թ.	51	2005թ.	55
1998թ.	51,5	2006թ.	55,5
1999թ.	52	2007թ.	56
2000թ.	52,5	2008թ.	56,5
2001թ.	53	2009թ.	57
2002թ.	53,5	2010թ.	57,5
2003թ.	54	2011թ.	58

դ) հիպոֆիզային թզուկությամբ (լիլիպոտներ) հիվանդ, քաղաքացիները տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն

և տղամարդիկ՝ 45 տարին լրանալու եւ առնվազն 20 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում,

և կանայք՝ 40 տարին լրանալու եւ առնվազն 15 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում:

ա) եւ բ) ենթակետերով նախատեսված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների եւ մասնագիտությունների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ Պերագույն խորհրդի 1993թ. մարտի 31-ի որոշմամբ սահմանված է այն արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների եւ ստորգետնյա խիստ վտանգավոր ու ծանր պայմաններում կատարվող աշխատանքների ցուցակը, որը տալիս է արտոնյալ պայմաններով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք (օրինակ՝ հանքային աշխատանքներ, մետաղագործական, քիմիական արտադրության ոլորտի աշխատանքներ, նավթի, գազի, ածխի վերամշակման հետ կապված աշխատանքներ, էլեկտրոնային տեխնիկայի իրերի եւ ռադիոսարքերի, շինարարական նյութերի, արհեստական եւ սինթետիկ թելերի, դեղամիջոցների, բժշկական եւ կենսաբանական պատրաստուկների

արտադրության ոլորտի աշխատանքներ): *Տե՛ս «Տարիքային արտոնյալ աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների եւ պաշտոնների ցուցանիշների հաստատման մասին» ՀՀ կառավարության 1993թ. մարտի 31-ի թիվ 140 որոշում:*

ՀՀ կառավարության 1993թ. սեպտեմբերի 27-ի թիվ 484 որոշմամբ հաստատված է տեքստիլ այն արտադրությունների, արտադրամասերի, ինչպես նաեւ համապատասխան մասնագիտությունների աշխատատեղերի ու պաշտոնների ցանկը, որոնցում հաստոցների եւ մեքենաների վրա բանվորուհիների կատարած աշխատանքը տալիս է տարիքային արտոնյալ աշխատանքային կենսաթոշակի իրավունք:

Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների եւ մասնագիտությունների ցանկը տե՛ս հավելված 4-ում):

2.2.3. Ուլքե՞ր ունեն երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք:

Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն այն անձինք, որոնց աշխատանքային գործունեությունը մինչեւ տարիքային կենսաթոշակի համար պահանջվող տարիքի լրանալը հանգեցրել է մասնագիտական աշխատունակության մասնակի կորստի:

Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի համար պահանջվող աշխատանքային գործունեության տեսակների ցանկը, մասնագիտական աշխատանքային ստաժի տեւողությունը եւ տարիքը հաստատում է ՀՀ Ազգային ժողովը՝ ՀՀ կառավարության ներկայացմամբ (*տե՛ս հավելված 4):*

2.2.4. Ի՞նչ կարգով են կատարվում տարիքային, արտոնյալ պայմաններով տարիքային եւ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակների նշանակումը եւ վճարումը:

Տարիքային, արտոնյալ պայմաններով տարիքային եւ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակները նշանակվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով, այսինքն՝ կենսաթոշակները հաշվարկվում են՝ բազային (սոցիալական) կենսաթոշակին ավելացնելով յուրաքանչյուր մեկ լրիվ տարվա աշխատանքային (ապահովագրական) ստաժի համար տրվող հավելումը:

Տարիքային, արտոնյալ պայմաններով տարիքային եւ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակները նշանակվում են քաղաքացիների՝ ՀՀ կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամի տարածքային մարմիններին տրված սահմանված ձեւի դիմումների հիման վրա: Դիմումի հետ ներկայացվում են՝

1. ա) քաղաքացու տարիքը հաստատող փաստաթուղթ (անձնագիրը կամ ծննդյան վկայականի պատճենը),

բ) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթ (աշխատանքային գրքույկից քաղվածքը՝ վավերացված գործատուի կողմից) կամ այլ անհրաժեշտ փաստաթղթեր,

գ) տեղեկանք սոցիալական ապահովագրության վճարումները կատարելու մասին՝ տրված ՀՀ կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամի մարմինների կողմից:

2. ա) տեղեկանք «Տարիքային արտոնյալ աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների եւ պաշտոնների ցուցանիշների հաստատման մասին» ՀՀ կառավարության 1993թ. մարտի 31-ի թիվ 140 որոշմամբ հաստատված թիվ 1 եւ 2 ցուցակներում նշված աշխատանքների բնույթի մասին (*տե՛ս հավելված 4),*

բ) տեղեկանք բնակչահագործման տեղամասից կամ թաղային կոմիտեից, իսկ գյուղական վայրերում տեղական ինքնակառավարման մարմիններից՝ չորս եւ ավելի երեխա ծնած եւ նրանց մինչեւ ութ տարեկան դառնալը խնամած, ինչպես նաեւ մինչեւ 16 տարին լրանալը մանկուց հաշմանդամ ձանաչված երեխա խնամած մայրերի մասին եւ նշված երեխաների ծննդյան վկայականների պատճենները,

գ) մինչեւ 16 տարին լրանալը մանկուց հաշմանդամ ձանաչված երեխաներին տրված ԲՍՓՀ-ի բժշկական քննության ակտից քաղվածքը եւ սահմանված ձեւի բժշկական եզրակացությունը,

դ) հիպոֆիզային թզուկությամբ (լիլիպուտներ) հիվանդ քաղաքացիներին տրված ԲՄՓՀ-ի բժշկական քննության ակտից քաղվածքը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կենսաթոշակների նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1996թ. հունվարի 22-ի թիվ 15 որոշում):

Սոցիալական ապահովագրության վճարումների անհատական հաշվառման անցնելուց հետո աշխատանքային ստաժի համար տրվող հավելումը որոշվելու է՝ ելնելով սոցիալական ապահովագրության վճարումներից:

75 տարին լրացած կենսաթոշակառուի կենսաթոշակն ավելացվում է բազային կենսաթոշակի 30 տոկոսի չափով («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 1997թ., մայիսի 12):

Կենսաթոշակառուի աշխատելու դեպքում կենսաթոշակը վճարվում է լրիվ չափով:

2.2.5. Կերակրողին կորցնելու դեպքում ընտանիքի ո՞ր անդամներն ունեն աշխատանքային կենսաթոշակի իրավունք:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված կարգով կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն ընտանիքի հետևյալ անդամները՝

ա) 18 տարին չլրացած երեխաները, հաշմանդամ ճանաչված երեխաները, եղբայրները, քույրերը եւ թոռները, ընդ որում, եղբայրները, քույրերը եւ թոռները, եթե չունեն աշխատունակ ծնողներ եւ չեն աշխատում,

բ) կերակրողի մահվան պահին կենսաթոշակային տարիքը լրացած կամ անկախ տարիքից հաշմանդամ ճանաչված ծնողները, ամուսինը, եթե չեն աշխատում,

գ) ծնողներից կամ ամուսիններից մեկը, պապը, տատը, եղբայրները կամ քույրերը՝ անկախ տարիքից ու աշխատունակությունից, եթե նրանք զբաղված են մահացած կերակրողի 8 տարին չլրացած զավակների, եղբայրների, քույրերի կամ թոռների խնամքով եւ չեն աշխատում,

դ) պապը եւ տատը, եթե չեն աշխատում եւ չունեն աշխատունակ զավակներ:

Այս դրույթները տարածվում են նաեւ սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչված կամ մահացած հայտարարված անձանց ընտանիքների վրա:

2.2.6. Կերակրողին կորցնելու դեպքում ինչպիսի՞ք են աշխատանքային կենսաթոշակի նշանակման պայմանները:

Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ է նշանակվում ընտանիքի այն անաշխատունակ անդամներին, որոնք գտնվել են նրա խնամքի տակ:

Կերակրողին կորցրած անչափահաս երեխաներին կենսաթոշակ նշանակվում է անկախ խնամքի տակ գտնվելու հանգամանքից:

Կենսաթոշակի իրավունք ունեցող ընտանիքի բոլոր անդամների համար նշանակվում է մեկ ընդհանուր կենսաթոշակ, սակայն ընտանիքի ցանկացած անդամի պահանջով կենսաթոշակի նրա բաժինը կվճարվի առանձին: Ընդ որում, կենսաթոշակի բաժնի առանձնացումը կատարվում է հաջորդ ամսվա սկզբից:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը սահմանվում է այն ամբողջ ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մահացածի ընտանիքի անդամն անաշխատունակ է համարվել:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակով ապահովվող ընտանիքի անդամների թիվը փոփոխվելիս՝ նրանց կենսաթոշակի բաժնենասը փոխվում է կենսաթոշակի իրավունք ունեցող ընտանիքի անդամների թվին համապատասխան («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված):

Օրինակ, եթե կերակրողին կորցնելու դեպքում 5 անձից բաղկացած ընտանիքին նշանակվել է 3000 դրամ կենսաթոշակ, ապա ընտանիքի յուրաքանչյուր անդամի բաժնենասը կկազմի՝ 3000 դրամ : 5 = 600 դրամ:

Եթե այդ ընտանիքի անդամների թիվը փոխվի (ասենք՝ դառնա 6 անձ), ապա ընտանիքի յուրաքանչյուր անդամի բաժնեմասը կկազմի՝ 3000 դրամ : 6 = 500 դրամ:

Իսկ եթե այդ ընտանիքի անդամների թիվը փոքրանա (ասենք՝ դառնա 3 անձ), ապա ընտանիքի յուրաքանչյուր անդամի բաժնեմասը կկազմի՝ 3000 դրամ : 3 = 1000 դրամ:

2.2.7. Ինչպիսի՞ք են կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափերը:

Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակները նշանակվում են՝
ա) երեխաներին՝

և միակողմանի ծնողազուրկ յուրաքանչյուր երեխային՝ բազային կենսաթոշակի չափով, ավելացնելով մահացած ծնողի աշխատանքային ստաժի համար սահմանվող հավելման 50%-ը:

Օրինակ, եթե մահացած քաղաքացին ունեցել է 15 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրա յուրաքանչյուր երեխային նշանակված կենսաթոշակը կկազմի՝

3000 դրամ (բազային կենսաթոշակ) + 15 X 60 դրամ (հավելում) X 50% : 100% = 3000 դրամ + 900 դրամ X 50% : 100% = 3000 դրամ + 450 դրամ = 3450 դրամ,

և երկկողմանի ծնողազուրկ յուրաքանչյուր երեխային՝ բազային կենսաթոշակի 120%-ի չափով՝ ավելացնելով մահացած երկու ծնողների աշխատանքային ստաժների համար հաշվարկվող հավելումների 50%-ը:

Օրինակ, եթե մահացած ծնողներից մեկն ունեցել է 25 տարվա, իսկ մյուսը՝ 15 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրանց յուրաքանչյուր երեխային նշանակված կենսաթոշակը կկազմի՝

3000 դրամ (բազային կենսաթոշակ) X 120% : 100% + (25 + 15) : 2 X 60 դրամ (հավելում) X 50% : 100% = 3000 դրամ X 1,2 + 1200 դրամ X 50% : 100% = 3600 դրամ + 600 դրամ = 4200 դրամ,

բ) ընտանիքի մյուս անդամներին՝ բազային կենսաթոշակի չափով, ավելացնելով ընտանիքի մահացած անդամի աշխատանքային ստաժի համար սահմանվող հավելման 50%-ը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված):

Օրինակ, եթե մահացած քաղաքացին ունեցել է 20 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրա ընտանիքի մյուս անդամներին նշանակված կենսաթոշակը կկազմի՝

3000 դրամ (բազային կենսաթոշակ) + 20 X 60 դրամ (հավելում) X 50% : 100% = 3000 դրամ + 1200 դրամ X 50% : 100% = 3000 դրամ + 600 դրամ = 3600 դրամ :

2.2.8. Ինչպիսի՞ք են կերակրողին կորցնելու դեպքում որդեգրողներին, որդեգրվածներին, խորթ ծնողներին եւ խորթ զավակներին աշխատանքային կենսաթոշակի նշանակման պայմանները:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 25 եւ 26-րդ հոդվածներով սահմանված կարգով կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ է նշանակվում նաեւ որդեգրողներին եւ որդեգրվածներին, որոնք գտնվել են նրա խնամքի տակ:

Կերակրողին կորցրած որդեգրված երեխաներին կենսաթոշակ նշանակվում է անկախ խնամքի տակ գտնվելու հանգամանքից:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը սահմանվում է այն ամբողջ ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մահացածի ընտանիքի անդամն անաշխատունակ է համարվել:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող անչափահասներն այդ իրավունքները պահպանում են նաեւ որդեգրվելու դեպքում:

Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակները նշանակվում են՝
ա) որդեգրված երեխաներին՝

և միակողմանի ծնողազուրկ յուրաքանչյուր որդեգրված երեխային՝ բազային կենսաթոշակի չափով, ավելացնելով մահացած որդեգրողի աշխատանքային ստաժի համար սահմանվող հավելման 50%-ը:

Օրինակ, եթե մահացած քաղաքացին ունեցել է 10 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրա յուրաքանչյուր որդեգրված երեխային նշանակված կենսաթոշակը կկազմի՝

$3000 \text{ դրամ (բազային կենսաթոշակ)} + 10 \times 60 \text{ դրամ (հավելում)} \times 50\% : 100\% = 3000 \text{ դրամ} + 600 \text{ դրամ} \times 50\% : 100\% = 3000 \text{ դրամ} + 300 \text{ դրամ} = 3300 \text{ դրամ},$

և երկկողմանի ծնողագուրկ որդեգրված յուրաքանչյուր երեխային՝ բազային կենսաթոշակի 120%-ի չափով, ավելացնելով մահացած երկու ծնողների աշխատանքային ստաժների համար հաշվարկվող հավելումների 50%-ը:

Օրինակ, եթե մահացած որդեգրողները ունեցել են 20 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրանց յուրաքանչյուր որդեգրված երեխային նշանակված կենսաթոշակը կկազմի՝

$3000 \text{ դրամ (բազային կենսաթոշակ)} \times 120\% : 100\% + 20 \times 60 \text{ դրամ (հավելում)} \times 50\% : 100\% = 3000 \text{ դրամ} \times 1,2 + 1200 \text{ դրամ} \times 50\% : 100\% = 3600 \text{ դրամ} + 600 \text{ դրամ} = 4200 \text{ դրամ} :$

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող որդեգրվածը որդեգրողի մահվան դեպքում ունի կենսաթոշակի ընտրության իրավունք:

Խորթ ծնողները (ծնողը) ունեն հարազատ ծնողներին (ծնողին) հավասար կենսաթոշակի իրավունք, եթե մահացած խորթ որդուն կամ դստերն անչափահաս տարիքում խնամել են առնվազն 8 տարի:

Խորթ զավակները կենսաթոշակի իրավունք ունեն հարազատ զավակներին հավասար («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդված):

2.2.9. Կերակրողին կորցնելու դեպքում ի՞նչ չափով է կատարվում աշխատանքային կենսաթոշակի վճարումը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով կերակրողին կորցնելու դեպքում նշանակված աշխատանքային կենսաթոշակը վճարվում է լրիվ չափով:

Լիովին պետության խնամքի տակ գտնվող միակողմանի ծնողագուրկ երեխաներին վճարվում է նշանակված կենսաթոշակի 50%-ը, իսկ երկկողմանի ծնողագուրկներին՝ 100%-ը: Այդ գումարները երեխայի անունով հավաքվում են խնայքանկում՝ մինչև երեխայի չափահաս դառնալը:

Կենսաթոշակի բաժնեմասի փոփոխումը կամ ընտանիքի անդամներին դրա վճարման դադարեցումը կատարվում է այդ հանգամանքների առաջացման հաջորդ ամսվա 1-ից:

2.2.10. Ո՞ր դեպքերում է կատարվում աշխատանքային ստաժի արտոնյալ հաշվարկումը:

Աշխատանքային ստաժը հաշվարկվում է՝
եռակի՝

ա) մարտական գործողությունների ընթացքում գործող բանակի կազմում զինվորական ծառայության, պարտիզանական ջոկատներում եւ այլ միավորումներում գտնվելու ժամանակահատվածը,

բ) բռնադատված, անհիմն կերպով քրեական պատասխանատվության ենթարկված եւ հետագայում օրենքով սահմանված կարգով արդարացված անձանց կալանքի տակ պահելու, ազատազրկման վայրերում եւ աքսորավայրերում պատիժ կրելու ժամանակահատվածը,

մեկ եւ կես անգամ՝

առանձնապես վնասակար եւ առանձնապես ծանր պայմաններում աշխատելու ժամանակահատվածը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 1997թ., մայիսի 12):

2.2.11. Ո՞րն է աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը:

Աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է: Աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների բացակայության դեպքում առկա աշխատանքային ստաժի հաստատման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Աշխատանքային կենսաթոշակները նշանակվում են քաղաքացիների՝ ՀՀ կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամի տարածքային մարմիններին տրված սահմանված ձեւի դիմումների հիման վրա: Դիմումի հետ ներկայացվում են՝

ա) քաղաքացու տարիքը հաստատող փաստաթուղթ (անձնագիրը կամ ծննդյան վկայականի պատճենը),

բ) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթ (աշխատանքային գրքույկից բաղվածքը՝ վավերացված գործատուի կողմից) կամ այլ անհրաժեշտ փաստաթղթեր,

գ) տեղեկանք սոցիալական ապահովագրության վճարումները կատարելու մասին՝ տրված ՀՀ կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամի մարմինների կողմից («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կենսաթոշակների նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1996թ. հունվարի 22-ի թիվ 15 որոշում):

2.3) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

2.3.1. Ովքե՞ր ունեն ծերության (տարիքային) կենսաթոշակի իրավունք եւ ինչպիսի՞ք են դրա նշանակման պայմանները:

Տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունեցող անձանց «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակվում է ծերության կենսաթոշակ կանանց՝ 63, իսկ տղամարդկանց՝ 65 տարին լրանալու դեպքում:

Կանանց ու տղամարդկանց ծերության կենսաթոշակ նշանակելու համար, ըստ տարիների, սահմանվում է հետեւյալ տարիքային սանդղակը.

<u>տարեթվեր</u>	<u>տղամարդ</u>	<u>կին</u>
1996թ.	65	60,5
1997թ.	65	61
1998թ.	65	61,5
1999թ.	65	62
2000թ.	65	62,5
2001թ.	65	63:

2.3.2. Որքա՞ն է կազմում ծերության (տարիքային) կենսաթոշակի չափը: Կենսաթոշակառուի աշխատելու դեպքում ի՞նչ չափով է կատարվում դրա վճարումը:

Ծերության կենսաթոշակը նշանակվում է սահմանված բազային կենսաթոշակի չափով (այսինքն՝ 3000 դրամ): Ծերության կենսաթոշակառուի աշխատելու դեպքում կենսաթոշակը վճարվում է լրիվ չափով («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված):

2.3.3. Կերակրողին կորցնելու դեպքում ի՞նչ կարգով են նշանակվում սոցիալական կենսաթոշակները եւ որքա՞ն են դրանց չափերը:

Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակները նշանակվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 24-րդ եւ 28-րդ հոդվածներով սահմանված կարգով, այսինքն՝ կենսաթոշակի իրավունք ունեն ընտանիքի հետեւյալ անդամները՝

ա) 18 տարին չլրացած երեխաները, հաշմանդամ ճանաչված երեխաները, եղբայրները, քույրերը եւ թոռները, ընդ որում, եղբայրները, քույրերը եւ թոռները, եթե չունեն աշխատունակ ծնողներ եւ չեն աշխատում,

բ) կերակրողի մահվան պահին կենսաթոշակային տարիքը լրացած կամ անկախ տարիքից հաշմանդամ ճանաչված ծնողները, ամուսինը, եթե չեն աշխատում,

գ) ծնողներից կամ ամուսիններից մեկը, պապը, տատը, եղբայրները կամ քույրերը՝ անկախ տարիքից ու աշխատունակությունից, եթե նրանք զբաղված են մահացած կերակրողի

8 տարին չլրացած զավակների, եղբայրների, քույրերի կամ թոռների խնամքով եւ չեն աշխատում,

դ) պապը եւ տատը, եթե չեն աշխատում եւ չունեն աշխատունակ զավակներ:

Այս դրույթները տարածվում են նաեւ սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչված կամ մահացած հայտարարված անձանց ընտանիքների վրա:

Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակները նշանակվում են հետեւյալ չափերով՝

ա) երեխաներին՝

և միակողմանի ծնողազուրկ յուրաքանչյուր երեխային՝ բազային կենսաթոշակի չափով (այսինքն՝ 3000 դրամ),

և երկկողմանի ծնողազուրկ յուրաքանչյուր երեխային՝ բազային կենսաթոշակի 120%-ի չափով (այսինքն՝ 3600 դրամ),

բ) ընտանիքի մյուս անդամներին՝

և բազային կենսաթոշակի չափով (այսինքն՝ 3000 դրամ):

Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակները վճարվում են լրիվ չափով:

2.4) ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

2.4.1. Ինչպիսի՞ն է կենսաթոշակների նշանակման համար դիմելու կարգը:

Կենսաթոշակները նշանակում են ՀՀ կենսաթոշակներ նշանակող մարմինները (տվյալ դեպքում՝ ՀՀ կենսաթոշակային հիմնադրամը)՝ քաղաքացիների գրավոր դիմումների հիման վրա, ըստ նրանց մշտական բնակության վայրի:

Գործատուները, ինչպես նաեւ համապատասխան պետական մարմինները պարտավոր են քաղաքացիներին ապահովել կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերով, որոնց ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կենսաթոշակների նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1996թ. հունվարի 22-ի թիվ 15 որոշում):

Համաձայն վերոհիշյալ որոշման, աշխատանքային կենսաթոշակները նշանակվում են քաղաքացիների ՀՀ կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամի տարածքային մարմիններին տրված սահմանված ձեւի դիմումների հիման վրա: Դիմումի հետ ներկայացվում են՝

1. ա) քաղաքացու տարիքը հաստատող փաստաթուղթ (անձնագիրը կամ ծննդյան վկայականի պատճենը),

բ) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթ (աշխատանքային գրքույկից քաղվածքը՝ վավերացված գործատուի կողմից) կամ այլ անհրաժեշտ փաստաթղթեր,

գ) տեղեկանք սոցիալական ապահովագրության վճարումները կատարելու մասին՝ տրված ՀՀ կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամի մարմինների կողմից:

2. ա) տեղեկանք «Տարիքային արտոնյալ աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների եւ պաշտոնների ցուցանիշների հաստատման մասին» ՀՀ կառավարության 1993թ. մարտի 31-ի թիվ 140 որոշմամբ հաստատված թիվ 1 եւ 2 ցուցակներում նշված աշխատանքների բնույթի մասին (տե՛ս հավելված 4),

բ) տեղեկանք բնակչահագործման տեղամասից կամ թաղային կոմիտեից, իսկ գյուղական վայրերում տեղական ինքնակառավարման մարմիններից՝ չորս եւ ավելի երեխա ծնած եւ նրանց մինչեւ ութ տարեկան դառնալը խնամած, ինչպես նաեւ մինչեւ 16 տարին լրանալը մանկուց հաշմանդամ ճանաչված երեխա խնամած մայրերի մասին եւ նշված երեխաների ծննդյան վկայականների պատճենները,

գ) մինչեւ 16 տարին լրանալը մանկուց հաշմանդամ ճանաչված երեխաներին տրված ԲՄՓՀ-ի բժշկական քննության ակտից քաղվածքը եւ սահմանված ձեւի բժշկական եզրակացությունը,

դ) հիպոֆիզային թզուկությամբ (լիլիպոտոսներ) հիվանդ քաղաքացիներին տրված ԲՄՓՀ-ի բժշկական քննության ակտից քաղվածքը:

3. Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակելիս լրացուցիչ ներկայացվում է ԲՄՓՀ-ի բժշկական քննության ակտից քաղվածքը: Եթե հաշմանդամությունն

առաջացել է աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետեւանքով, ապա ներկայացվում է նաեւ դժբախտ դեպքի մասին ակտը (կամ այլ փաստաթուղթ):

4. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակելիս լրացուցիչ ներկայացվում են՝

ա) կերակրողի մահվան վկայականը (կամ նրան անհայտ բացակայող կամ մեռած ճանաչելու մասին ժողդատարանի որոշումից քաղվածքը),

բ) տեղեկանք բնակչահագործման տեղամասից կամ թաղային կոմիտեից, իսկ գյուղական վայրերում տեղական ինքնակառավարման մարմիններից՝ կերակրողի ընտանիքի այն անդամների մասին, ովքեր գտնվել են նրա խնամքի տակ, ինչպես նաեւ նրանց ծննդյան վկայականների պատճենները,

գ) տեղեկանք բնակչահագործման տեղամասից կամ թաղային կոմիտեից, իսկ գյուղական վայրերում տեղական ինքնակառավարման մարմիններից՝ կերակրողի ութ տարին չլրացած երեխաների, եղբայրների, քույրերի կամ թոռների խնամքով զբաղված անձանց չաշխատելու մասին,

դ) ԲՍՓՀ-ի բժշկական քննության ակտից քաղվածքն ընտանիքի չափահաս այն անդամների մասին, որոնց կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք տրվում է հաշմանդամության պատճառով:

Կենսաթոշակ նշանակող մարմիններն իրավունք ունեն գործատուներից, պետական մարմիններից կամ առանձին անհատներից պահանջելու համապատասխան փաստաթղթեր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ստուգելու դրանց հավաստիությունը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդված):

2.4.2. Ինչպիսի՞ն է կենսաթոշակների նշանակման կարգը:

Կենսաթոշակների նշանակման հարցը քննարկում եւ որոշում է կենսաթոշակ նշանակող մարմինը՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում:

Մերժման որոշում ընդունելուց հետո՝ 5-օրյա ժամկետում, կենսաթոշակ նշանակող մարմինը գրավոր ծանուցում է դիմողին՝ նշելով մերժման պատճառը եւ գանգատարկման կարգը, միաժամանակ վերադարձնելով բոլոր փաստաթղթերը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված):

2.4.3. Ինչպիսի՞ք են կենսաթոշակների նշանակման ժամկետները:

Կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից, եթե առկա են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Փաստաթղթերի՝ փոստով առաքման դեպքում դիմելու օրը համարվում է դրանց ուղարկման օրը:

Անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության դեպքում քաղաքացուն հայտնվում է այդ մասին: Դրանք երեք ամսվա ընթացքում ներկայացնելու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմելու օրվանից («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդված):

2.4.4. Ո՞ր դեպքերում է կենսաթոշակի նշանակումը կատարվում ավելի վաղ ժամկետում:

Կենսաթոշակն ավելի վաղ ժամկետում նշանակվում է հետեւյալ դեպքերում՝

ա) ԲՍՓՀ-ի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից՝ եթե կենսաթոշակի նշանակման դիմումը տրվել է 6-ամսյա ժամկետում,

բ) կերակրողին կորցնելու դեպքում՝ եթե կենսաթոշակի նշանակման դիմումը տրվել է կերակրողի մահվան օրվանից՝ 12-ամսյա ժամկետում («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդված):

2.4.5. Ե՞րբ է եւ ի՞նչ կարգով է կատարվում կենսաթոշակի տեսակի փոփոխությունը:

Կենսաթոշակառուի ցանկությամբ կենսաթոշակ նշանակող մարմինը կատարում է կենսաթոշակի փոփոխություն՝ դիմումը տալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

2.4.6. Ովքե՞ր ունեն հաշմանդամության կենսաթոշակի վերահաշվարկման իրավունք:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված կարգով հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակելուց հետո առնվազն 2 տարի աշխատած կենսաթոշակառուն ունի կենսաթոշակի վերահաշվարկման իրավունք: Վերահաշվարկումը կատարվում է դիմումը տալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բոլոր կենսաթոշակները վերահաշվարկվում են այդ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով. այն է՝ բազային (սոցիալական) կենսաթոշակին ավելացնելով յուրաքանչյուր մեկ լրիվ տարվա աշխատանքային (ապահովագրական) ստաժի համար տրվող հավելումը:

Ներկայումս բազային կենսաթոշակի չափը կազմում է 3000 դրամ, իսկ յուրաքանչյուր մեկ լրիվ տարվա աշխատանքային (ապահովագրական) ստաժի համար տրվող հավելումը կազմում է 60 դրամ:

Օրինակ, եթե քաղաքացին ունեցել է 20 տարվա աշխատանքային ստաժ, իսկ վերահաշվարկելուց հետո նրա ստաժը կազմել է 25 տարի, ապա նրա վերահաշվարկված կենսաթոշակը կկազմի՝

3000 դրամ (բազային կենսաթոշակ) + 25 X 60 դրամ (հավելում) = 3000 դրամ + 1500 դրամ = 4500 դրամ:

75 տարին լրացած կենսաթոշակառուի կենսաթոշակն ավելացվում է բազային կենսաթոշակի 30 տոկոսի չափով («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 1997թ., մայիսի 12):

Օրինակ, եթե 75 տարին լրացած քաղաքացին ունի 30 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրա կենսաթոշակը կկազմի՝

3000 դրամ (բազային կենսաթոշակ) + 30 X 60 դրամ (հավելում) + 3000 դրամ X 30% : 100% = 3000 դրամ + 1800 դրամ + 900 դրամ = 5700 դրամ:

2.4.7. Ինչպիսի՞ն է նախկին օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակների վերահաշվարկման կարգը:

Նախկին օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակները վերահաշվարկվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Եթե վերահաշվարկված կենսաթոշակը ցածր է նախկին օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Օրինակ, եթե նախկին օրենսդրությամբ քաղաքացուն նշանակված կենսաթոշակը եղել է 6000 դրամ, իսկ վերահաշվարկված կենսաթոշակը կազմել է 5400 դրամ, այսինքն՝ ցածր է նախկին օրենսդրությամբ նշանակված կենսաթոշակից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով, այսինքն՝ 6000 դրամ:

2.4.8. Ինչպիսի՞ն է կենսաթոշակների վճարման ընդհանուր կարգը:

Կենսաթոշակները վճարվում են տվյալ ամսվա ընթացքում՝ ըստ կենսաթոշակառուի փաստացի բնակության վայրի («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդված):

2.4.9. Կարո՞ղ է արդյոք կենսաթոշակը կենսաթոշակառուի փոխարեն վճարվել այլ անձի:

Կենսաթոշակը լիազորագրով կարող է վճարվել 3 ամիս: Լիազորագրի տրման կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ: Որպես կանոն լիազորագրի համար պահանջվում է նոտարական վավերացում, բայց

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321 հոդվածի 4-րդ կետը սահմանում է՝

«4. Աշխատավարձ եւ աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, հեղինակների ու գյուտարարների վարձատրություն, կենսաթոշակներ, նպաստներ եւ կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ ու փոստային առաքումներ, այդ թվում՝ դրամական եւ ծանրոցային, ստանալու լիազորագիրը կարող է հաստատել նաեւ այն կազմակերպությունը, որտեղ լիազորագիր ստացողն աշխատում կամ սովորում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը եւ այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա գտնվում է բուժման մեջ»:

2.4.10. Ինչպե՞ս է կատարվում կենսաթոշակների վճարումն անցած ժամանակահատվածի համար:

Եթե քաղաքացուն կենսաթոշակ է նշանակվել, բայց նա այն ինչ-ինչ պատճառներով չի ստացել, ապա այդ չպահանջված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ժամանակահատվածի համար, բայց 3 տարուց ոչ ավելի ժամկետով:

Կենսաթոշակ նշանակող կամ վճարող մարմնի մեղքով չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են առանց ժամկետի սահմանափակման («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդված):

2.4.11. Ի՞նչ չափով է կատարվում կենսաթոշակի վճարումը լիովին պետության խնամքի տակ գտնվող կենսաթոշակառուներին:

Այն անձինք, ովքեր լիովին գտնվում են պետության խնամքի տակ եւ ապրում են համապատասխան պետական հաստատություններում, ստանում են նշանակված կենսաթոշակի 25%-ը:

Օրինակ, եթե քաղաքացին լիովին գտնվում են պետության խնամքի տակ եւ ապրում է տուն-ինտերնատում, իսկ նրա կենսաթոշակի չափը կազմում է 6000 դրամ, ապա նա կստանա՝
 $6000 \text{ դրամ} \times 25\% : 100\% = 1500 \text{ դրամ}:$

2.4.12. Ի՞նչ կարգով է կատարվում կենսաթոշակի վճարման դադարեցումը, կասեցումը եւ վերսկսումը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածին համապատասխան՝ կենսաթոշակի վճարումը դադարեցվում է՝

ա) կենսաթոշակառուի մահվան դեպքում՝ հաջորդ ամսվա 1-ից,

բ) կենսաթոշակի նշանակման համար կեղծ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում՝ կեղծիքի հայտնաբերման օրվանից: Այդ դեպքում վճարված գումարները հետ են գանձվում դատական կարգով:

Կենսաթոշակ ստանալու հետագա իրավունքի հարցը պարզելուց եւ չափը ճշտելուց հետո վճարումը վերսկսվում է այն դադարեցնելու օրվանից:

Կենսաթոշակի վճարումը կասեցվում է կենսաթոշակառուի 6 ամսից ավելի բացակայության դեպքում:

2.4.13. Արդյոք կենսաթոշակները հարկվում են, թե՛ ոչ: Ի՞նչ պահումներ են կատարվում կենսաթոշակից:

Կենսաթոշակները հարկման ենթակա չեն:

Կենսաթոշակներից պահումներ կարող են կատարվել՝

ա) դատական որոշումների, վճիռների, դատավճիռների հիման վրա,

բ) սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու, ընտանիքի անդամների կազմի փոփոխությունների մասին տեղեկություններ չներկայացնելու եւ այլ խախտումների

հետեւանքով կենսաթոշակառուներին ավելի վճարված գումարների բռնագանձմամբ՝ կենսաթոշակ նշանակող մարմնի որոշման հիման վրա, բայց նշանակված կենսաթոշակի 20%-ից ոչ ավելի :

Կենսաթոշակից կատարվող պահումների չափը հաշվարկվում է կենսաթոշակառուին վճարվելիք ամսական գումարից:

Կենսաթոշակից կատարվող բոլոր պահումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի կենսաթոշակի 50%-ը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 1997թ., մայիսի 12):

2.4.14. Ի՞նչ կարգով եւ չափով է կատարվում թաղման ծախսերի հետ կապված մասնակի փոխհատուցումը:

Կենսաթոշակառուի մահվան դեպքում նրա ընտանիքին կամ հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման ծախսերի մասնակի փոխհատուցում՝ մեկ տարվա կենսաթոշակի չափով:

«Կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման ծախսերի մասնակի փոխհատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը եւ դրանց ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 1997թ. սեպտեմբերի 24-ի թիվ 415 որոշման համաձայն՝

1. Կենսաթոշակառուի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամը կամ հուղարկավորությունը կատարած անձը թաղման ծախսերի մասնակի փոխհատուցման համար ՀՀ կենսաթոշակային եւ զբաղվածության տարածքային կենտրոն է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

ա) դիմում (որում նշվում են կենսաթոշակառուի ընտանիքի անդամի կամ հուղարկավորությունը կատարած անձի անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, անձնագրի սերիան եւ համարը),

բ) կենսաթոշակառուի մահվան վկայականի պատճենը:

2. Կենսաթոշակառուի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամը կամ հուղարկավորությունը կատարած անձը թաղման ծախսերի մասնակի փոխհատուցում կատարվում է կենսաթոշակների վճարման համար սահմանված կարգով:

Նշված գումարները վճարվում են, եթե դրանց համար անհրաժեշտ փաստաթղթերով դիմումը տրվել է կենսաթոշակառուի մահվանից ոչ ուշ, քան 6-ամսյա ժամկետում:

Կենսաթոշակառուին հասանելիք եւ նրա մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարները ժառանգության կարգով կարող են ստանալ նրանց ժառանգները («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 1997թ., մայիսի 12):

2.5) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

2.5.1. Ովքե՞ր են համարվում զինծառայողներ եւ զինծառայողներին հավասարեցված անձինք:

Զինծառայող են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ներքին գործերի, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմինների համակարգի հրամանատարական եւ շարքային անձնակազմի ծառայողները:

Զինծառայողներին հավասարեցված անձինք են՝

ա) վարժական հավաքներին կանչված զինապարտները,

բ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները («Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 2, 3):

Վերոհիշյալ օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, տարածվում են նաեւ՝

ա) ծառայությունից սահմանված կարգով արձակված եւ, անկախ ժամանակաշրջանից, մահացած այն զինծառայողների ընտանիքների վրա, որոնց մահվան պատճառը ծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղուճը կամ առաջացած հիվանդությունը,

բ) ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ձանաչված զինծառայողների ընտանիքների վրա («Ջինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, 11 հունիսի 2001թ., ՀՕ -186):

2.5.2. Որո՞նք են զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամներին տրվող պետական կենսաթոշակի տեսակները:

Ջինծառայողներին նշանակվում են պետական կենսաթոշակներ՝

ա) երկարամյա ծառայության համար,

բ) հաշմանդամության համար:

Ձուկված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին նշանակվում է սոցիալական կենսաթոշակ՝ կերակրողին կորցնելու դեպքում («Ջինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք, հոդված 6):

2.5.3. Որո՞նք են կենսաթոշակի նշանակման պայմանները:

«Ջինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակվում եւ վճարվում է ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո:

Երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ստացած եւ զինվորական ծառայությունը շարունակող զինծառայողների ամսական դրամական բավարարմանը նշանակվում են հավելումներ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով եւ չափերով («Ջինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության բարելավման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 1994թ. հուլիսի 14-ի թիվ 319 որոշում):

Ջինծառայողներին՝ հաշմանդամության կենսաթոշակ, իսկ կերակրողին կորցնելու դեպքում՝ նրանց ընտանիքների անդամներին սոցիալական կենսաթոշակ է նշանակվում անկախ ծառայության տեսողությունից:

2.5.4. Ջինծառայողներն ունե՞ն, արդյոք, կենսաթոշակի ընտրության իրավունք:

Այո, ունեն:

Պետական տարբեր կենսաթոշակների իրավունք ունեցող զինծառայողներին նշանակվում է «Ջինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» եւ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված մեկ կենսաթոշակ իրենց ընտրությամբ:

2.5.5. Որո՞նք են երկարամյա ծառայության կենսաթոշակի նշանակման պայմանները:

Երկարամյա ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքից օգտվում են այն զինծառայողները, ովքեր՝

ա) ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին ունեն 20 եւ ավելի տարվա զինվորական ծառայության ստաժ,

բ) տարիքի, առողջական վիճակի կամ հաստիքների կրճատման պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու պահին, 50 տարին լրանալու դեպքում, ունեն 25 եւ ավելի տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ, որից ութ տարուց ոչ պակասը կազմում է զինվորական ծառայությունը:

Անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժի բացակայության դեպքում զինծառայողների կենսաթոշակային ապահովումն իրականացվում է «Հայաստանի Հանրապե-

տության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի համաձայն:

2.5.6. Որքա՞ն են երկարամյա ծառայության կենսաթոշակի չափերը:

Երկարամյա ծառայության կենսաթոշակը նշանակվում է հետևյալ չափերով՝

ա) ծառայությունից սահմանված կարգով արձակվելու պահին 20 եւ ավելի տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողներին՝ ամսական դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի 70%-ի չափով: 20 տարուց ավելի ծառայած յուրաքանչյուր լրիվ տարվա դիմաց կենսաթոշակին ավելանում է փոխհատուցման գումարի 2%-ի, իսկ զինվորական ծառայության հետ չկապված յուրաքանչյուր աշխատած տարվա համար 1%-ի չափով,

բ) տարիքի, առողջական վիճակի կամ հաստիքների կրճատման պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու պահին, 50 տարին լրանալու դեպքում, 25 եւ ավելի տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ ունեցող զինծառայողներին՝ ամսական դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի 65% -ի չափով: 25 տարուց ավելի աշխատած եւ զինվորական ծառայության հետ չկապված յուրաքանչյուր մեկ տարվա համար կենսաթոշակին ավելանում է փոխհատուցման գումարի 1%-ի չափով:

Բոլոր դեպքերում, կենսաթոշակը չի կարող գերազանցել ամսական դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի չափը եւ ցածր լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված բազային կենսաթոշակի 150% -ից (այսինքն՝ 4500 դրամից):

2.5.7. Որո՞նք են հաշմանդամության կենսաթոշակի նշանակման պայմանները:

Զինծառայողներին հաշմանդամության կենսաթոշակ է նշանակվում աշխատունակության լրիվ կամ մասնակի կորստի հետեւանքով հաշմանդամ ձանաչվելու դեպքում, եթե հաշմանդամությունն առաջացել է՝

և զինվորական ծառայության ընթացքում,

և ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում,

և այդ ժամկետից ուշ, սակայն ծառայության ժամանակ ծագած հաշմանդամության պատճառով:

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամության կենսաթոշակի իրավունք տվող հաշմանդամության պատճառներն են՝ զինվորական ծառայության ժամանակ ստացած վնասվածքները, խեղումները եւ առաջացած հիվանդությունները:

Հաշմանդամության պատճառները, խումբը, ինչպես նաեւ հաշմանդամության վրա հասնելու ժամանակը որոշում են բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները (ԲՍՓՀ):

2.5.8. Որքա՞ն են զինծառայողների հաշմանդամության կենսաթոշակի չափերը:

Զինծառայողների հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է հետևյալ չափերով՝

ա) 1-ին խմբի հաշմանդամներին՝ ամսական դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի 70% -ի չափով, բայց բազային կենսաթոշակի 200% -ից ոչ պակաս,

բ) 2-րդ խմբի հաշմանդամներին՝ ամսական դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի 60% -ի չափով, բայց բազային կենսաթոշակի 150% -ից ոչ պակաս,

գ) 3-րդ խմբի հաշմանդամներին՝ ամսական դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի 40% -ի չափով, բայց բազային կենսաթոշակից ոչ պակաս («Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված):

2.5.9. Կերակրողին կորցնելու դեպքում որո՞նք են սոցիալական կենսաթոշակի նշանակման պայմանները:

Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ նշանակվում է զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի այն անդամներին, ովքեր գտնվել են նրա խնամքի տակ, իսկ անաշխատունակ զավակներին, ծնողներին եւ ամուսնուն՝ անկախ այն բանից, նրանք զոհված (մահացած) կերակրողի խնամքի տակ եղել են, թե՛ ոչ:

Կերակրողին կորցնելու դեպքում զինծառայողի ընտանիքի անդամներին սոցիալական կենսաթոշակ նշանակվում է՝ անկախ կերակրողի զոհվելու (մահանալու) պատճառից եւ անցած ժամանակաշրջանից:

Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի իրավունք ունեցող ընտանիքի բոլոր անդամների համար նշանակվում եւ վճարվում է մեկ ընդհանուր կենսաթոշակ:

Կենսաթոշակի իրավունք ունեցող ընտանիքի բոլոր անդամների համար նշանակվում է մեկ ընդհանուր կենսաթոշակ, սակայն ընտանիքի ցանկացած անդամի պահանջով կենսաթոշակի նրա բաժինը կվճարվի առանձին: Ընդ որում, կենսաթոշակի բաժնի առանձնացումը կատարվում է հաջորդ ամսվա սկզբից:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը սահմանվում է այն ամբողջ ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մահացածի ընտանիքի անդամն անաշխատունակ է համարվել:

Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակով ապահովվող ընտանիքի անդամների թիվը փոփոխվելիս՝ նրանց կենսաթոշակի բաժնենասը փոխվում է կենսաթոշակի իրավունք ունեցող ընտանիքի անդամների թվին համապատասխան («Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված):

Օրինակ, եթե կերակրողին կորցնելու դեպքում 5 անձից բաղկացած ընտանիքին նշանակվել է 6000 դրամ կենսաթոշակ, ապա ընտանիքի յուրաքանչյուր անդամի բաժնենասը կկազմի՝ 6000 դրամ : 5 = 1200 դրամ:

Եթե այդ ընտանիքի անդամների թիվը փոխվի (դառնա 6 անձ), ապա ընտանիքի յուրաքանչյուր անդամի բաժնենասը կկազմի՝ 6000 դրամ : 6=1000 դրամ:

2.5.10. Զինծառայողի մահվան դեպքում ովքե՞ր կերակրողին կորցնելու համար սոցիալական կենսաթոշակի իրավունք ունեն:

Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակները նշանակվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 24 եւ 28-րդ հոդվածներով սահմանված կարգով, այսինքն՝ կենսաթոշակի իրավունք ունեն ընտանիքի հետեւյալ անդամները՝

ա) 18 տարին չլրացած երեխաները, հաշմանդամ ճանաչված երեխաները, եղբայրները, քույրերը եւ թոռները, ընդ որում, եղբայրները, քույրերը եւ թոռները, եթե չունեն աշխատունակ ծնողներ եւ չեն աշխատում,

բ) կերակրողի մահվան պահին կենսաթոշակային տարիքը լրացած կամ անկախ տարիքից հաշմանդամ ճանաչված ծնողները, ամուսինը, եթե չեն աշխատում,

գ) ծնողներից կամ ամուսիններից մեկը, պապը, տատը, եղբայրները կամ քույրերը՝ անկախ տարիքից ու աշխատունակությունից, եթե նրանք զբաղված են մահացած կերակրողի 8 տարին չլրացած զավակների, եղբայրների, քույրերի կամ թոռների խնամքով եւ չեն աշխատում,

դ) պապը եւ տատը, եթե չեն աշխատում եւ չունեն աշխատունակ զավակներ («Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված):

2.5.11. Կերակրողին կորցնելու դեպքում ի՞նչ կարգով են նշանակվում եւ վճարվում սոցիալական կենսաթոշակներն ամբողջովին պետական խնամքի տակ գտնվող երեխաներին:

Կերակրողին կորցնելու դեպքում ամբողջովին պետական խնամքի տակ գտնվող երեխաներին վճարվում է նշանակված սոցիալական կենսաթոշակի 50 տոկոսը:

Մինչեւ որք երեխայի չափահաս դառնալը վճարվող գումարները փոխանցվում են վերջինիս հաշվին եւ որեւէ մեկը չի կարող տնօրինել դրանք («Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված):

2.5.12. Կերակրողին կորցնելու դեպքում որքա՞ն են նշանակվող սոցիալական կենսաթոշակի չափերը:

Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ նշանակվում է՝

- ա) յուրաքանչյուր երեխային՝ կերակրողի դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի 40% -ի չափով, բայց բազային կենսաթոշակից ոչ պակաս,
- բ) ծնողներին կորցրած (զոհվածի, մահացածի) զավակներից յուրաքանչյուրին՝ կերակրողի ամսական դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի 60% -ի չափով, բայց բազային կենսաթոշակի 200% -ից ոչ պակաս,
- գ) ընտանիքի յուրաքանչյուր անաշխատունակ անդամին՝ կերակրողի դրամական բավարարման եւ սննդի փոխհատուցման գումարի 30% -ի չափով, բայց բազային կենսաթոշակից ոչ պակաս:

Կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ նշանակվում եւ վճարվում է անկախ այն բանից, թե կենսաթոշակի իրավունք ունեցող անձը սահմանված կարգով այլ կենսաթոշակներ կամ սոցիալական նպաստներ ստանում է, թե՛ ոչ («Ձինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված):

2.5.13. Ինչպիսի՞ն է կենսաթոշակների նշանակման եւ մերժման կարգը:

«Ձինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների համար սահմանվող կենսաթոշակների նշանակման հարցը որոշում է համապատասխան մարմինների՝ սոցիալական ապահովության խնդիրներն իրականացնող ստորաբաժանումը՝ դիմում (զեկուցագիր) եւ անհրաժեշտ այլ փաստաթղթեր ներկայացնելուց հետո՝ ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում:

Մերժման որոշում ընդունելու դեպքում ամենաուշը 5 օրվա ընթացքում համապատասխան մարմինն այդ մասին գրավոր ծանուցում է դիմողին՝ նշելով մերժման պատճառը եւ գանգատարկման կարգը, միաժամանակ վերադարձնելով բոլոր փաստաթղթերը:

2.5.14. Ինչպիսի՞ք են զինծառայողների կենսաթոշակների նշանակման ժամկետները:

«Ձինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն հաշվարկվող կենսաթոշակները նշանակվում են՝

- ա) երկարամյա ծառայության եւ հաշմանդամության կենսաթոշակները՝ զինծառայությունից ազատվելու կամ ԲՍՓՀ-ի կողմից հաշմանդամությունը հաստատվելու օրվանից, եթե կենսաթոշակ ստանալու դիմումը տրվել է զինծառայությունից սահմանված կարգով արձակվելուց կամ հաշմանդամությունը հաստատվելուց հետո՝ 12 ամսից ոչ ուշ,

- բ) կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակը՝ կենսաթոշակի իրավունք առաջանալու օրվանից, եթե կենսաթոշակ ստանալու դիմումը տրվել է կերակրողին կորցնելու օրվանից հետո՝ 12 ամսից ոչ ուշ:

Այս ժամկետներից ավելի ուշ դիմում տալու դեպքում կենսաթոշակը նշանակվում է դիմում տալու օրվանից:

60 տարեկանից բարձր տղամարդկանց եւ 55 տարեկանից բարձր կանանց հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է ցմահ: Այդ հաշմանդամների բժշկական վերազննությունը կատարվում է միայն նրանց դիմումի համաձայն:

Ձինծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակները նույնպես նշանակվում են ցմահ, իսկ կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակը նշանակվում է այն ամբողջ ժամանակահատվածի համար, որի ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամը պահպանում է կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունքը:

Կենսաթոշակի չափի փոփոխումը կամ ընտանիքի անդամների կենսաթոշակի վճարման դադարեցումը կատարվում է այն ամսվան հաջորդող ամսվա սկզբից, որի ընթացքում առաջացել են կենսաթոշակի չափի փոփոխման կամ վճարման դադարեցումը պայմանավորող հանգամանքներ:

2.5.15. Ի՞նչ կարգով է կատարվում զինծառայողների կենսաթոշակների հետագա վերահաշվարկը:

Եթե վերազննության հետեւանքով ԲՍՓՀ-ն զինծառայողների հաշմանդամության խումբը փոխելու վերաբերյալ որոշում է կայացնում, ապա հաշմանդամության կենսաթոշակը վճարվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 21 եւ 22-րդ հոդվածներով սահմանված կարգով, ըստ որի հաշմանդամության խմբի փոփոխման դեպքում կենսաթոշակը նոր չափով վճարվում է նշանակման ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ աշխատունակության վերականգնման դեպքում կենսաթոշակը վճարվում է մինչեւ հաշմանդամին աշխատունակ ճանաչելու ամսվա վերջը: Մինչեւ 6 ամիս վերազննության չներկայանալու եւ այդ ժամանակահատվածում ԲՍՓՀ-ի կողմից հաշմանդամ ճանաչվելու դեպքում կենսաթոշակի վճարումը շարունակվում է կասեցման օրվանից: Վերազննմամբ հաշմանդամության այլ խումբ փոխադրվելու դեպքում կենսաթոշակն այդ ժամանակամիջոցի համար վճարվում է ըստ նախկին խմբի: Ընդ որում, եթե հաշմանդամության խումբը բարձրանում է, ապա հաշմանդամության կենսաթոշակի չափը որոշվում է «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անկախ հաշմանդամության խմբի փոփոխման հանգեցնող պատճառներից:

2.5.16. Ինչպիսի՞ն է կենսաթոշակների հավելումների հաշվարկման կարգը:

Զինծառայողների կենսաթոշակները հաշվարկելիս եւ նշանակելիս սահմանվում են հետեւյալ հավելումները՝

ա) պատերազմի, ինչպես նաեւ ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հաշմանդամ դարձածների համար՝ ըստ հաշմանդամության խմբերի, «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով հաշվարկվող՝ հաշմանդամության կենսաթոշակի նվազագույն (այսինքն՝ 1-ին խմբի հաշմանդամներին՝ բազային կենսաթոշակի 200% -ի, 2-րդ խմբի հաշմանդամներին՝ բազային կենսաթոշակի 150% -ի, իսկ 3-րդ խմբի հաշմանդամներին՝ բազային կենսաթոշակի) չափով,

բ) պատերազմի մասնակիցների համար՝ բազային կենսաթոշակի 60% -ի չափով,

գ) իրենց խնամքի տակ անաշխատունակ խնամարկյալներ ունեցող կենսաթոշակառուների համար՝ յուրաքանչյուր անաշխատունակ խնամարկյալին՝ բազային կենսաթոշակի 30% -ի չափով,

դ) 1-ին խմբի հաշմանդամների համար՝ բազային կենսաթոշակի 60% -ի, իսկ 2-րդ խմբի հաշմանդամների, ինչպես նաեւ 70 եւ բարձր տարիքի կենսաթոշակառուների համար՝ բազային կենսաթոշակի 40% -ի չափով,

ե) ՀՀ ազգային հերոսների, նախկին ԽՍՀՄ հերոսների, 1-ին եւ 2-րդ աստիճանի Մարտական խաչ, ինչպես նաեւ Փառքի 3 աստիճանների շքանշանակիրների համար՝ բազային կենսաթոշակի չափով:

2.6) ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

2.6.1. Ի՞նչ պատասխանատվություն է նախատեսված կենսաթոշակների նշանակման եւ վճարման նպատակով տրված փաստաթղթերի հավաստիությունը չապահովելու համար:

Գործատուները եւ քաղաքացիները պատասխանատվություն են կրում կենսաթոշակների նշանակման եւ վճարման նպատակով տրված փաստաթղթերի հավաստիությունը չապահովելու համար:

Փաստաթղթերում նշված ոչ ճիշտ տեղեկությունների հիման վրա կենսաթոշակի վճարման դեպքում մեղավոր անձը փոխհատուցում է պատճառված վնասը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդված):

2.6.2. Ի՞նչ կարգով է կատարվում կենսաթոշակների նշանակման վերաբերյալ որոշումների գանգատարկումը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սահմանված կարգով կենսաթոշակների նշանակման վերաբերյալ կենսաթոշակ նշանակող մարմնի որոշումները կարող են գանգատարկվել վերադասության, իսկ վերադասի որոշման հետ անհամաձայնության դեպքում՝ դատական կարգով:

Գ Լ ՈՒ Խ 3

ՀԱՇՎԱՆՆԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1.1. Որո՞նք են հաշմանդամների իրավունքների հիմունքները:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամներն ունեն սոցիալ-տնտեսական, քաղաքական եւ անձնական բոլոր այն իրավունքները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1975թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Հաշմանդամների իրավունքների մասին» հռչակագրում, ՀՀ Սահմանադրությունում, մարդու եւ քաղաքացու սոցիալական ապահովության իրավունքների պաշտպանությանը նվիրված միջազգային իրավական փաստաթղթերում, «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում եւ օրենսդրական այլ ակտերում:

Պետությունը երաշխավորում է հաշմանդամների անհատական զարգացման, նրանց կողմից իրենց ընդունակությունների, իրավունքների եւ ազատությունների իրացման, Հայաստանի Հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հասարակական կյանքի տնտեսական եւ սոցիալական բնագավառներին մասնակցելու պայմանների եւ հնարավորությունների ապահովումը:

3.1.2. Ովքե՞ր են համարվում հաշմանդամ:

Հաշմանդամ են համարվում այն քաղաքացիները, որոնք մտավոր կամ ֆիզիկական անլիարժեքությամբ պայմանավորված՝ կենսագործունեության սահմանափակումների պատճառով սոցիալական օգնության եւ պաշտպանության կարիք են զգում:

Անձի կենսագործունեության սահմանափակումներ են համարվում կողմնորոշման ու տեղաշարժման, հաղորդակցման, սեփական վարքագծի վերահսկման, ինչպես նաեւ աշխատանքային գործունեությամբ զբաղվելու ունակության լրիվ կամ մասնակի կորուստը («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված):

3.1.3. Որո՞նք են անձին հաշմանդամ ճանաչող մարմինները:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ անձի ճանաչումը որպես հաշմանդամ իրականացվում է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների (ԲՄՓՀ) կողմից:

ՀՀ քաղաքացիներն իրավունք ունեն դատական կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգով բողոքարկել համապատասխան իրավասու պետական մարմնի որոշումը՝ իրենց հաշմանդամ ճանաչելու կամ չճանաչելու, ինչպես նաեւ հաշմանդամության այս կամ այն խումը սահմանելու վերաբերյալ:

3.1.4. Հաշմանդամության ի՞նչ խմբեր են սահմանված:

Աշխատունակության կորստի աստիճանից ելնելով՝ սահմանվում են հաշմանդամության 1-ին, 2-րդ եւ 3-րդ խմբեր:

Աշխատանքային սովորական պայմաններում տեւական մասնագիտական աշխատունակությունը լրիվ կորցրած քաղաքացիների համար, մշտական խնամքի կարիք

ունենալու դեպքում, սահմանվում է հաշմանդամության 1-ին, կողմնակի խնամքի կարիք չունենալու դեպքում՝ 2-րդ, կանոնավոր մասնագիտական աշխատունակության մասնակի կորստի դեպքում՝ 3-րդ խումբ («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված):

3.1.5. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամության խմբերի, պատճառների եւ առաջացման ժամանակի որոշումը :

Հաշմանդամության խմբերը, պատճառները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հաշմանդամության առաջացման ժամանակը սահմանում են բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները՝ ԲՍՓՀ («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 2000թ. նոյեմբերի 6, ՀՕ-94):

Հաշմանդամության խումբը սահմանվում է 16 տարեկանից («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված):

3.1.6. Որ՞ն է համարվում աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետեւանքով առաջացած հաշմանդամություն:

Հաշմանդամությունը համարվում է աշխատանքային խեղման հետեւանք, եթե հաշմանդամության պատճառ հանդիսացող դեպքը (բացի հակաիրավական գործողությունների հետեւանքով առաջացած հաշմանդամությունից) տեղի է ունեցել՝

ա) աշխատանքային պարտականությունները (այդ թվում՝ գործուղման ժամանակ), ինչպես նաեւ առանց հանձնարարության հոգուտ գործատուի որեւէ գործողություն կատարելիս,

բ) աշխատանքի գնալու կամ աշխատանքից վերադառնալու ճանապարհին,

գ) գործատուի տարածքում կամ աշխատանքի բերումով այլ աշխատավայրում աշխատանքի ժամերին (ներառյալ նաեւ սահմանված ընդմիջումները), աշխատանքն սկսվելուց առաջ կամ ավարտվելուց հետո արտադրության գործիքները, հագուստը եւ այլն կարգի բերելու ժամանակամիջոցում,

դ) գործատուի աշխատավայրի մոտակայքում՝ աշխատանքի ժամերին (ներառյալ նաեւ սահմանված ընդմիջումները), որտեղ գտնվելը չի հակասել ներքին աշխատանքային կարգապահության կանոններին,

ե) քաղաքացիական պարտքը կատարելիս:

Հաշմանդամությունը համարվում է մասնագիտական հիվանդության հետեւանք, եթե այն ձեռք է բերվել տվյալ աշխատանքը կատարելու հետեւանքով:

Մասնագիտական հիվանդությունների ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված):

3.1.7. Ինչպե՞ս է ապահովվում հաշմանդամների իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում:

Հաշմանդամների իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի պաշտպանությունը ապահովվում է պետության կողմից՝ դատական կամ օրենսդրությամբ նախատեսված այլ կարգով:

Հաշմանդամների իրավունքների, ազատությունների եւ օրինական շահերի ոտնահարման հարցում մեղավոր պաշտոնատար անձինք եւ քաղաքացիները ենթակա են պատասխանատվության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող գործատուի (անկախ սեփականության ձեւից) մեղքով աշխատանքային խեղում կամ մասնագիտական հիվանդություն ստացած եւ սահմանված կարգով հաշմանդամ ճանաչված քաղաքացիների աշխատունակության կործանող հետ կապված նպաստների, առողջարանային բուժման, նրանց տրանսպորտային միջոցներով, թիկնասայլերով, պրոթեզային իրերով եւ այլ տեխնիկական միջոցներով ապահովելու ծախսերի հատուցումը կատարվում է գործատուի միջոցների հաշվին

(«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված):

3.1.8. Ինչպիսի՞ արտոնություններից են օգտվում ՀՀ տարածքում գործող ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, որոնք մասնակցում են հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, որոնք մասնակցում են հաշմանդամների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության իրականացմանը (հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնության միջոցառումների ֆինանսավորում, հաշմանդամների համար նախատեսված տեխնիկական եւ այլ միջոցների արտադրություն, ծառայությունների տրամադրում, հաշմանդամներին սպասարկող սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների շինարարություն եւ սպասարկում, գերազանցապես հաշմանդամների աշխատանքն օգտագործող արտադրությունների կազմակերպում եւ այլն), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվում են հարկման եւ այլ արտոնություններից («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված):

3.2) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՎՈՂ ԿԵՆՍԱԹՅՈՒՆՆԵՐ

3.2.1. Ո՞ր դեպքում է նշանակվում հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ:

Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է աշխատունակության լրիվ կամ մասնակի կորստի հետեւանքով հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝

ա) աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության դեպքում անկախ աշխատանքային ստաժի տեւողությունից,

բ) ընդհանուր հիվանդության (այդ թվում՝ աշխատանքի հետ չկապված խեղման) հետեւանքով՝ ոչ պակաս 5 տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում:

Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակաշրջանի համար («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված):

3.2.2. Որքա՞ն են հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակների չափերը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակները նշանակվում են՝

1-ին խմբի հաշմանդամներին՝ բազային կենսաթոշակի 120%-ի չափով (այսինքն՝ 3000 դրամ \times 120% : 100% = 3000 դրամ \times 1,2 = 3600 դրամ),

2-րդ խմբի հաշմանդամներին՝ բազային կենսաթոշակի 100%-ի չափով (այսինքն՝ 3000 դրամ \times 100% : 100% = 3000 դրամ),

3-րդ խմբի հաշմանդամներին՝ բազային կենսաթոշակի 80%-ի չափով (այսինքն՝ 3000 դրամ \times 80% : 100% = 3000 դրամ \times 0,8 = 2400 դրամ), որոնց ավելացվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված աշխատանքային ստաժի համար հավելումը:

Ներկայումս բազային կենսաթոշակի չափը կազմում է 3000 դրամ, իսկ յուրաքանչյուր մեկ լրիվ տարվա աշխատանքային (ապահովագրական) ստաժի համար տրվող հավելումը կազմում է 60 դրամ:

Օրինակ, եթե 1-ին խմբի հաշմանդամ քաղաքացին ունի 15 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրա կենսաթոշակը կկազմի՝

3000 դրամ (բազային կենսաթոշակ) \times 120% : 100% + 15 \times 60 դրամ (հավելում) = 3000 դրամ \times 1,2 + 900 դրամ = 3600 դրամ + 900 դրամ = 4500 դրամ:

Կամ եթե 2-րդ խմբի հաշմանդամ քաղաքացին ունի 20 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրա կենսաթոշակը կկազմի՝

$3000 \text{ դրամ (բազային կենսաթոշակ)} \times 100\% : 100\% + 20 \times 60 \text{ դրամ (հավելում)} = 3000 \text{ դրամ} + 1200 \text{ դրամ} = 4200 \text{ դրամ:}$

Իսկ եթե 3-րդ խմբի հաշմանդամ քաղաքացին ունի 10 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրա կենսաթոշակը կկազմի՝

$3000 \text{ դրամ (բազային կենսաթոշակ)} \times 80\% : 100\% + 10 \times 60 \text{ դրամ (հավելում)} = 3000 \text{ դրամ} \times 0,8 + 600 \text{ դրամ} = 2400 \text{ դրամ} + 600 \text{ դրամ} = 3000 \text{ դրամ:}$

Սոցիալական ապահովագրության վճարումների անհատական հաշվառման անցնելուց հետո աշխատանքային ստաժի համար տրվող հավելումը որոշվելու է՝ ելնելով սոցիալական ապահովագրության վճարումներից:

75 տարին լրացած կենսաթոշակառուի կենսաթոշակն ավելացվում է բազային կենսաթոշակի 30 տոկոսի չափով («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 1997թ., մայիսի 12):

Օրինակ, եթե 75 տարին լրացած 1-ին խմբի հաշմանդամ քաղաքացին ունի 15 տարվա աշխատանքային ստաժ, ապա նրա կենսաթոշակը կկազմի՝

$3000 \text{ դրամ (բազային կենսաթոշակ)} \times 120\% : 100\% + 15 \times 60 \text{ դրամ (հավելում)} + 3000 \text{ դրամ} \times 30\% : 100\% = 3000 \text{ դրամ} \times 1,2 + 900 \text{ դրամ} + 900 \text{ դրամ} = 3600 \text{ դրամ} + 1800 \text{ դրամ} = 5400 \text{ դրամ:}$

3.2.3. Հաշմանդամության խմբի փոփոխման կամ աշխատունակության վերականգնման դեպքում նոր չափով հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ ե՞րբ է վճարվում :

Հաշմանդամության խմբի փոփոխման դեպքում կենսաթոշակը նոր չափով վճարվում է նշանակման ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Աշխատունակության վերականգնման դեպքում կենսաթոշակը վճարվում է մինչև հաշմանդամին աշխատունակ ճանաչելու ամսվա վերջը («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված):

3.2.4. Հաշմանդամության վերազննության ժամկետը բաց թողնելու դեպքում ե՞րբ է վճարվում հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ:

Մինչև 6 ամիս վերազննության չներկայանալու եւ այդ ժամանակահատվածում ԲՄՓՀ-ի կողմից հաշմանդամ ճանաչվելու դեպքում կենսաթոշակի վճարումը շարունակվում է կասեցման օրվանից:

Վերազննմամբ հաշմանդամության այլ խումբ փոխադրվելու դեպքում կենսաթոշակն այդ ժամանակամիջոցի համար վճարվում է ըստ նախկին խմբի («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 1997թ., մայիսի 12):

3.2.5. Ինչպե՞ս է կատարվում հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակների վճարումը:

Հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակները վճարվում են լրիվ չափով՝ անկախ աշխատելու հանգամանքից: Ընդ որում, աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետեւանքով հաշմանդամության կենսաթոշակները վճարում են սոցիալական ապահովագրության մարմինները՝ գործատուի, գործատուի լուծարման դեպքում՝ նրա իրավահաջորդի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սեփական միջոցների հաշվին («Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 1997թ., մայիսի 12):

3.2.6. Ովքե՞ր ունեն հաշմանդամության սոցիալական կենսաթոշակի իրավունք:

Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակի իրավունք ունեն աշխատանքային ստաժ չունեցող հաշմանդամները, ինչպես նաեւ մինչև 16 տարեկան մանկուց հաշմանդամները («Հա-

յաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդված):

3.2.7. Որքա՞ն են հաշմանդամության սոցիալական կենսաթոշակների չափերը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված կարգով հաշմանդամության սոցիալական կենսաթոշակները նշանակվում են՝

1-ին խմբի հաշմանդամներին՝ եւ մինչեւ 16 տարեկան մանկուց հաշմանդամ երեխաներին՝ բազային կենսաթոշակի 120%-ի չափով (այսինքն՝ 3000 դրամ \times 120% : 100% = 3000 դրամ \times 1,2 = 3600 դրամ),

2-րդ խմբի հաշմանդամներին՝ բազային կենսաթոշակի 100%-ի չափով (այսինքն՝ 3000 դրամ \times 100% : 100% = 3000 դրամ),

3-րդ խմբի հաշմանդամներին՝ բազային կենսաթոշակի 80%-ի չափով (այսինքն՝ 3000 դրամ \times 80% : 100% = 3000 դրամ \times 0,8 = 2400 դրամ):

3.2.8. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամության սոցիալական կենսաթոշակների վճարումը:

Հաշմանդամության սոցիալական կենսաթոշակները վճարվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 21 եւ 22-րդ հոդվածներով սահմանված կարգով, այսինքն՝ աշխատունակության վերականգնման դեպքում կենսաթոշակը վճարվում է մինչեւ հաշմանդամին աշխատունակ ճանաչելու ամսվա վերջը եւ հաշմանդամության կենսաթոշակները վճարվում են լրիվ չափով՝ անկախ աշխատելու հանգամանքից: Ընդ որում, աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետեւանքով հաշմանդամության կենսաթոշակները վճարում են սոցիալական ապահովագրության մարմինները՝ գործատուի, գործատուի լուծարման դեպքում՝ նրա իրավահաջորդի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սեփական միջոցների հաշվին:

3.3) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

3.3.1. Ի՞նչ է ներառում հաշմանդամության կանխարգելման պետական ծրագիրը:

Հաշմանդամության կանխարգելման պետական ծրագիրը ներառում է բնակչության առողջ կենսաձեւի ապահովման, բնապահպանական անվտանգության, աշխատանքի անվտանգ պայմանների ստեղծման, հիվանդների ժամանակին բուժման եւ ժառանգական հիվանդությունների կանխման սոցիալ-տնտեսական համալիր միջոցառումների համակարգ, որը նշակվում եւ իրականացվում է պետական իշխանության եւ կառավարման շահագրգիռ մարմինների կողմից՝ հաշմանդամների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված):

3.3.2. Ի՞նչ է իրենից ներկայացնում հաշմանդամների բժշկական եւ բժշկամասնագիտական վերականգնման համակարգը:

Հաշմանդամների բժշկական վերականգնումը տարբեր հիվանդությունների, վնասվածքների, ֆիզիկական ու մտավոր եւ այլ խանգարումների բուժման միջոցառումների համակարգն է՝ հաշմանդամության հանգեցրած խեղումների եւ հիվանդությունների զարգացումն ու ծանրացումը կանխելու նպատակով:

Բժշկական վերականգնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համակարգի մարմինների, գերատեսչական, ապահովագրական, բարեգործական եւ այլ բուժական հիմնարկների կողմից («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված):

Նշված օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ բժշկամասնագիտական վերականգնումն ուղղված է հաշմանդամների նվազած կամ կորսված մասնագիտական ֆունկցիաների

վերականգնմանը, մասնագիտության ընտրությանն ու դրան ընտելանալուն եւ նախկին կամ նոր մասնագիտությամբ աշխատանքային գործունեությունը վերսկսելը հաշմանդամի համար հնարավոր դարձնելուն:

3.3.3. Ի՞նչ է իրենից ներկայացնում հաշմանդամների վերականգնման անհատական ծրագիրը:

Հաշմանդամների բժշկական, բժշկամասնագիտական եւ սոցիալական վերականգնումն իրականացվում է վերականգնման անհատական ծրագրին համապատասխան, որը մշակվում է հաստատվում է բժշկաաշխատանքային փորձաքննության հիման վրա՝ բժշկասոցիալական փորձաքննության մասնագիտացված պետական ծառայության մարմինների կողմից՝ հաշմանդամների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով եւ պայմաններով:

Հաշմանդամ քաղաքացու համար վերականգնման անհատական ծրագիրն ունի երաշխավորական բնույթ:

Վերականգնման անհատական ծրագրում սահմանվում են վերականգնողական միջոցառումների կոնկրետ ծավալները, տեսակները եւ ժամկետները, սոցիալական օգնության ձեւերը, աշխատանքային անհրաժեշտ պայմանները, ինչպես նաեւ կենսագործունեության սահմանափակվածությամբ պայմանավորված հատուկ տեխնիկական միջոցների եւ ծառայությունների տեսակները, որոնց տրամադրմանն ու ֆինանսավորման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ կառավարության կողմից:

Վերականգնման անհատական ծրագիրը ենթակա է պարտադիր կատարման համապատասխան պետական մարմինների կողմից («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված):

3.3.4. Որո՞նք են հաշմանդամների վերականգնման հիմնական տեսակները:

Հաշմանդամների վերականգնման հիմնական տեսակներն են՝

ա) վերականգնողական թերապիան եւ վերականգնողական վիրաբուժությունը՝ հետագա պրոթեզավորմամբ (սոցիալական վերականգնում),

բ) մասնագիտական կողմնորոշումը, մասնագիտական ուսուցումը կամ վերաուսուցումը, արդյունավետ աշխատանքի տեղավորումը (մասնագիտական վերականգնում),

գ) կենցաղի կարգավորումը եւ սոցիալ-կենցաղային հարմարեցումը (սոցիալ-կենցաղային վերականգնում),

դ) սոցիալ-հոգեբանական վերականգնումը:

3.3.5. Ո՞ր մարմիններն են կազմում եւ իրականացնում հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագիրը:

Վերականգնողական անհատական ծրագիրը հաշմանդամների կամ այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների եւ անձամբ հաշմանդամի մասնակցությամբ կազմում է իրականացնում են լիազորված հիմնարկները՝ ԲՍՓՀ-երը, բուժհիմնարկները, բուժօժանդակությունները, բուժսոցիալական ծառայությունները՝ կլինիկական-փորձաքննական, մասնագիտական, հոգեբանական-ֆիզիոլոգիական եւ սոցիալ-միջավայրային ախտորոշման տվյալների հիման վրա:

3.3.6. Ի՞նչ կարգով է իրականացվում հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրի ֆինանսավորումը:

Հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է հանրապետական եւ տեղական բյուջեների, ինչպես նաեւ հասարակական ու այլ կազմակերպությունների եւ քաղաքացիների կամավոր մուծումների հաշվին:

Հանրապետական բյուջեի հաշվին ֆինանսավորվում են վերականգնողական անհատական ծրագիրը կազմող եւ իրականացնող հանրապետական ու տեղական պետական մարմինները եւ հիմնարկները՝ անհրաժեշտ սարքավորումներով ապահովելու համար:

Տեղական բյուջեների հաշվին ֆինանսավորվում են հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրում նախատեսված միջոցառումների անցկացումը և ծրագրի կազմումն իրականացնող հիմնարկների գործունեության հետ կապված ընթացիկ ծախսերը:

Հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրի կազմման և դրա իրականացման համար լիազորված բուժօժանդակական ծառայությունը որոշում է ծրագրի իրականացման անհրաժեշտ միջոցառումների ընդհանուր ծախսերի չափը և բոլոր մասնակիցների մասնակցության չափը:

3.3.7. Ի՞նչ պատասխանատվություն է նախատեսվում հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագիրը չկատարելու դեպքում:

Հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրի իրականացման միջոցառումները չկատարող պետական մարմինները, ձեռնարկությունները և հիմնարկները, որոնք կատարողներ են համարվում վերականգնողական անհատական ծրագրում, փոխհատուցման գումարի չափով միջոցներ են հատկացնում սոցիալական ապահովության մարմիններին վերջիններիս ներկայացրած հաշիվներին համապատասխան:

Սոցիալական ապահովության մարմինների և վերականգնման միջոցառումներն իրականացնելու համար ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների միջև վեճերը լուծվում են դատական կարգով:

Հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագիրը մշակող բուժօժանդակական ծառայությունը պատասխանատվություն է կրում ծրագրի որակի և դրա կատարման կազմակերպման համար: Ծրագիրը որակով և ժամանակին (մեկամսյա ժամկետում) չկատարելու հետևանքով հաշմանդամին վնաս պատճառելու դեպքում այդ մարմինները սահմանված դատական կարգով հաշմանդամներին փոխհատուցում են համապատասխան ծախսերը:

3.3.8. Ո՞վ է իրականացնում հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրի իրականացման վերահսկողությունը:

Հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրի իրականացման վերահսկողությունն իրականացնում է բուժօժանդակական ծառայությունը՝ հաշմանդամների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, տեղական ինքնակառավարման մարմինների և արհմիությունների հետ համատեղ:

3.3.9. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների բժշկական և առողջարանային սպասարկումը:

Հաշմանդամներին երաշխավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին որակյալ անվճար բժշկական օգնություն պետական բժշկական հիմնարկներում:

1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաները՝ ըստ դեղատոմսերի, ապահովվում են անվճար դեղորայքով, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից:

Հաշմանդամներն իրավունք ունեն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում և դեղատներում առաջնահերթ կարգով ապահովվելու սպասարկմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդհանուր և մասնագիտացված տիպի առողջարաններում՝ առողջարանային բուժմամբ:

ԲՍՓՀ-ի եզրակացության համաձայն հաշմանդամների առողջարանային բուժման ուղեգրերով ապահովումը կատարվում է անվճար («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

3.4) ՀԱՇՎԱՆՂԱՄՆԵՐԻ ՂԱՍՏԻԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆԸ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

3.4.1. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների համար կրթության եւ մասնագիտական ուսուցման պայմանների ապահովումը:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը հաշմանդամների համար երաշխավորում է կրթության եւ մասնագիտական ուսուցման իրավունք, ինչպես նաեւ պատրաստում է դրա համար անհրաժեշտ մանկավարժական կադրեր:

Կրթության պետական համակարգի մարմինները՝ սոցիալական ապահովության եւ առողջապահության մարմինների հետ համատեղ, հաշմանդամի վերականգնման անհատական ծրագրին համապատասխան ապահովում են հաշմանդամ երեխաների նախադպրոցական դաստիարակությունը, հաշմանդամների միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական եւ բարձրագույն կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

3.4.2. Ինչպե՞ս է իրականացվում նախադպրոցական տարիքի հաշմանդամ երեխաների դաստիարակությունը:

Նախադպրոցական տարիքի հաշմանդամ երեխաների դաստիարակության եւ անհրաժեշտ վերականգնողական օգնության համար առավել բարենպաստ հնարավորություններ ստեղծելու նպատակով ընդհանուր տիպի մանկական նախադպրոցական հիմնարկներում նրանց համար ստեղծվում են հատուկ պայմաններ:

Այն հաշմանդամ երեխաների համար, որոնց առողջական վիճակը թույլ չի տալիս նրանց դաստիարակությունն իրականացնել ընդհանուր տիպի նախադպրոցական հիմնարկներում, ստեղծվում են հատուկ նախադպրոցական հիմնարկներ:

Ընդհանուր կամ հատուկ նախադպրոցական հիմնարկներում հաշմանդամ երեխաների դաստիարակության դեպքում նրանց ծնողների համաձայնությամբ, այն կարող է իրականացվել տնային պայմաններում: Այդպիսի դեպքերում ծնողներից մեկին կամ նրան փոխարինող անձին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում են նյութական ապահովություն եւ արտոնություններ: Նման հաշմանդամ երեխաների խնամքի ժամկետը խնամողի համար հաշվվում է որպես աշխատանքային ստաժ (ՀՀ կառավարության 16.02.1996թ., թիվ 41 որոշում):

Համապատասխան կրթօջախները եւ նախադպրոցական հիմնարկները հաշմանդամ երեխաների ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց օգնություն են ցույց տալիս տնային պայմաններում նրանց դաստիարակությունն իրականացնելու գործում:

Օգնության ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 6 նոյեմբերի 1999թ., ՀՕ-10):

3.4.3. Ինչպե՞ս է իրականացվում հաշմանդամների միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական եւ բարձրագույն կրթությունը:

Հաշմանդամների միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական եւ բարձրագույն կրթությունն իրականացվում է ընդհանուր տիպի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ուսումնական հաստատություններում:

Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած հաշմանդամները այլ հավասար պայմանների դեպքում օգտվում են բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու առաջնահերթ իրավունքից:

Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած առաջին եւ երկրորդ խմբերի հաշմանդամներն ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ:

Պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված առաջին եւ երկրորդ խմբերի հաշմանդամների ուսուցման

ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Նրանց թվից ցերեկային ուսուցման հաշմանդամներին, անհրաժեշտ առաջադիմության դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:

Ուսումնական պարապմունքներ կազմակերպվում են նաեւ բուժկանխարգելիչ կամ վերականգնողական հիմնարկներում բուժման կուրս անցնող հաշմանդամ երեխաների համար:

Ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 6 նոյեմբերի 1999թ., ՀՕ-10):

3.4.4. Ինչպե՞ս են իրականացվում հաշմանդամների մասնագիտական ուսուցումը, վերաորակավորումը եւ որակավորման բարձրացումը:

Հաշմանդամների մասնագիտական ուսուցումը, վերաորակավորումը եւ որակավորման բարձրացումն իրականացվում են վերականգնման անհատական ծրագրերին համապատասխան՝ մասնագիտացված կամ ընդհանուր տիպի ուսումնական հաստատություններում, ձեռնարկություններում (այդ թվում՝ ուսումնաարտադրական) եւ կազմակերպություններում:

Մասնագիտական նախապատրաստման, վերաորակավորման եւ որակավորման բարձրացման ընթացքում հաշմանդամների նյութական ապահովումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Ուսումնական պարապմունքների ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 6 նոյեմբերի 1999թ., ՀՕ-10):

3.4.5. Հաշմանդամների համար որո՞նք են համարվում անձնական շփման եւ հաղորդակցման միջոցներ:

Պետության կողմից շարժուձեւերի լեզուն ընդունվում է որպես անձնական շփման, ուսման եւ թարգմանական ծառայությունների տրամադրման միջոց:

Տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար երաշխավորվում է Բրայլի համակարգով կատարվող ուսուցման ապահովումը, լսողական միջոցների եւ խոշոր տառատեսակների մատչելիությունը:

Մտավոր թերություններ ունեցող անձանց համար կազմակերպվում է լեզվի մատչելի ըմբռնման ուսուցման համակարգ:

Խոսակցական խանգարումներով անձանց տրամադրվում են հաղորդակցման տեխնիկական միջոցներ:

Հաշմանդամների հասարակական կազմակերպությունները սեփական միջոցների հաշվին եւ կանոնադրական խնդիրների շրջանակներում կարող են տրամադրել նաեւ անձնական շփման եւ հաղորդակցման այլ միջոցներ («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված):

3.5) ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

3.5.1. Ինչպե՞ս է իրականացվում հաշմանդամների աշխատանքի իրավունքը:

Հաշմանդամները՝ իրենց ստեղծագործական եւ արտադրական ընդունակությունների իրացման նպատակով եւ վերականգնման անհատական ծրագրերին համապատասխան ապահովվում են աշխատանքի սովորական պայմաններ ունեցող ձեռնարկություններում, հիմնարկներում եւ կազմակերպություններում, հաշմանդամների աշխատանքը կիրառող մասնագիտացված (այդ թվում՝ ուսումնաարտադրական) ձեռնարկություններում, արտադրամասերում եւ տեղամասերում աշխատելու, ինչպես նաեւ ձեռնարկատիրական եւ օրենքով չարգելված այլ գործունեությամբ զբաղվելու իրավունքով:

Անթույլատրելի են հաշմանդամության պատճառով հաշմանդամի հետ աշխատանքային պայմանագրի կնքման կամ պաշտոնի բարձրացման մերժումը, ադմինիստրացիայի

նախաձեռնությամբ աշխատանքից հեռացումը կամ այլ աշխատանքի փոխադրումը, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկաաշխատանքային փորձաքննության մարմինների եզրակացությամբ նրա առողջական վիճակը խոչընդոտում է մասնագիտական պարտականությունների կատարմանը կամ սպառնում է այլ անձանց առողջությանը եւ աշխատանքի անվտանգությանը:

Ադմինիստրացիային չի թույլատրվում աշխատանքից հեռացնել համապատասխան հիմնարկներում բժշկական, մասնագիտական եւ սոցիալական վերականգնում անցնող անձանց («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված):

3.5.2. Ինչպե՞ս է իրականացվում հաշմանդամների զբաղվածության ապահովումը:

Հաշմանդամների զբաղվածության ապահովման պետական երաշխիքների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքով, որի 11-րդ հոդվածը նվիրված է հաշմանդամներին տրվող լրացուցիչ երաշխիքներին եւ դրանց իրականացման պայմաններին: Սույն հոդվածը նախատեսում է, որ.

«Հաշմանդամներին աշխատանքի տեղավորելու նպատակով ՀՀ կառավարությունը գործատուների համար սահմանում է աշխատանքի տեղավորման կամ համապատասխան նոր աշխատատեղերի ստեղծման կայուն քվոտաներ: Եթե գործատուն, անկախ պատճառներից, ըստ սահմանված քվոտայի չի կատարում աշխատանքի տեղավորման կամ համապատասխան նոր աշխատատեղերի ստեղծման պահանջները, յուրաքանչյուր չհատկացված կամ չստեղծված աշխատատեղի դիմաց զբաղվածության հիմնադրամ է մուծում տուգանք՝ իր մեկ աշխատողի տարեկան միջին աշխատավարձի չափով:

Հաշմանդամներին աշխատանքի տեղավորելու նպատակով զբաղվածության պետական ծառայությունը, գործատուների հետ համաձայնեցնելով, նրանց մոտ կարող է հիմնել առանձին մասնագիտացված ձեռնարկություններ, կազմակերպել հաշմանդամների մասնագիտական ուսուցումը՝ զբաղվածության հիմնադրամի եւ համայնքի բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով» (25 դեկտեմբերի 1996թ., ՀՕ-92):

3.5.3. Ինչպիսի՞ն պետք է լինեն հաշմանդամների աշխատանքային պայմանները:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր կարգի գործատուների մոտ զբաղված հաշմանդամների համար վերականգնման անհատական ծրագրին համապատասխան ստեղծվում են աշխատանքային անհրաժեշտ պայմաններ:

Կուլեկտիվ կամ անհատական աշխատանքային պայմանագրով սահմանվող պայմանները, այդ թվում աշխատանքի վարձատրությունը, աշխատանքային եւ հանգստի ժամանակի ռեժիմը, տարեկան եւ լրացուցիչ արձակուրդների տեւողությունը չեն կարող վատթարացնել հաշմանդամի վիճակը կամ սահմանափակել նրա իրավունքներն այլ աշխատողների համեմատությամբ:

Հաշմանդամների ներգրավումն արտաժամյա, ոչ աշխատանքային օրերին կամ գիշերային աշխատանքներում թույլատրվում է միայն նրանց համաձայնությամբ եւ պայմանով, եթե նման աշխատանքները բժշկական եզրակացությամբ նրանց արգելված չեն:

1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամների համար սահմանվում է աշխատաժամերի կրճատված տեւողություն՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի:

Հաշմանդամների պահանջով եւ վերականգնման անհատական ծրագրերին համապատասխան գործատուն պարտավոր է նրանց համար սահմանել ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ: Նման դեպքերում հաշմանդամների աշխատանքի վարձատրությունը կատարվում է՝ ելնելով փաստացի աշխատած աշխատաժամանակից կամ թողարկած արտադրանքի քանակից:

3.5.4. Աշխատանքի ընդունելիս հաշմանդամների համար արդյոք փորձաշրջան սահմանվում է:

Աշխատանքի ընդունելիս հաշմանդամների համար փորձաշրջան չի սահմանվում: Աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման ժամանակ աշխատանքի հավասար

արտադրողականության եւ նույն որակավորման դեպքում հաշմանդամներն օգտվում են աշխատանքում մնալու առավելությունից:

3.5.5. Պետական իշխանության եւ կառավարման տեղական մարմինները ի՞նչպիսի պայմաններ են պարտավոր ստեղծել հաշմանդամների ձեռնարկատիրական եւ աշխատանքային գործունեության կազմակերպման համար:

Պետական իշխանության եւ կառավարման տեղական մարմինները հաշմանդամների ձեռնարկատիրական գործունեության (այդ թվում՝ տնային պայմաններում) կազմակերպման համար պարտավոր են ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ այդ նպատակով ոչ բնակելի տարածությունների արտահերթ տրամադրման, ինչպես նաեւ հումքի ձեռքբերման եւ արտադրանքի իրացման գործում օժանդակություն ցույց տալու միջոցով:

Աշխատանքային գործունեությամբ զբաղվող հաշմանդամները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվում են եկամուտների հարկման եւ այլ արտոնություններից («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված):

3.5.6. Եթե աշխատողի հետ՝ աշխատանքային պարտականությունները կատարելիս, իր մեղքով դժբախտ պատահար է տեղի ունեցել, ապա պարտավո՞ր է, արդյոք, հիմնարկը, ձեռնարկությունը, կազմակերպությունը պահպանել նրա աշխատանքի տեղը:

Այո, պարտավոր է: Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 36-րդ հոդվածի 5-րդ կետի՝ աշխատանքային խեղման կամ պրոֆեսիոնալ հիվանդության հետեւանքով աշխատունակությունը կորցրած բանվորների եւ ծառայողների համար աշխատանքի տեղը պահպանվում է մինչեւ աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության որոշելը:

3.5.7. Հաշմանդամին խնամելու եւ գործազրկության նպաստ ստանալու ժամանակահատվածը հաշվվո՞ւմ է, արդյոք, աշխատանքային ստաժի մեջ, թե՛ ոչ:

Այո, հաշվվում է: Բացի անհատ ձեռներեցությամբ զբաղվելուց եւ գործատուների մոտ (անկախ սեփականության ձեւից) աշխատանքային պայմանագրերի հիման վրա աշխատած ժամանակից, աշխատանքային ստաժի մեջ հաշվվում է նաեւ՝

ա) առաջին կարգի հաշմանդամներին կամ մինչեւ տասնվեց տարեկան մանկուց հաշմանդամ երեխային խնամելու ժամանակահատվածը՝ 10 տարուց ոչ ավելի,

բ) գործազրկության նպաստ ստանալու ժամանակաշրջանը (ՀՀ կառավարության 16.02.1996թ. թիվ 41 որոշում):

3.5.8. Հաշմանդամները կարո՞ղ են ներգրավվել գիշերային աշխատանքներում:

Հաշմանդամները կարող են գիշերային աշխատանքներում ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ եւ պայմանով, եթե այդպիսի աշխատանքը բժշկի խորհրդով նրանց արգելված չէ:

[3.6\) ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ](#)

3.6.1. Ինչպիսի՞ պետական քաղաքականություն է վարվում հաշմանդամների համար սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների (կինոթատրոնների, թատրոնների, համերգասրահների, տրանսպորտային եւ այլն) մատչելիության ապահովման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության պետական իշխանության եւ կառավարման մարմինները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար պարտավոր են ապահովել սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների (կինոթատրոնների, թատրոնների, համերգասրահների, տրանսպորտային եւ այլն), բնակելի, հասարակական, արտադրական շենքերի եւ կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից եւ տրանսպորտային հաղորդակցության, կապի

եւ տեղեկատվության միջոցներից, հանգստի եւ ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված):

3.6.2. Արդյո՞ք հաշմանդամների պահանջմունքները հաշվի են առնվում սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների (կինոթատրոնների, թատրոնների, համերգասրահների, տրանսպորտային եւ այլն) նախագծման եւ շինարարության ընթացքում:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգի համաձայն, չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձեւավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների (կինոթատրոնների, թատրոնների, համերգասրահների, տրանսպորտային եւ այլն), ներառյալ օդանավակայանների եւ երկաթուղային կայարանների շինարարությունն ու վերակառուցումը, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների, այդ թվում անհատական, կապի եւ տեղեկատվության միջոցների մշակումն ու արտադրությունը, եթե դրանք հաշմանդամների համար մատչելիությանը եւ օգտագործմանը հարմարեցված չեն:

ՀՀ կառավարության 1993թ. նոյեմբերի 30-ի թիվ 600 որոշմամբ ՀՀ ճարտարապետության եւ քաղաքաշինության պետական վարչությանը (ներկայումս՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն) հանձնարարվել է տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական գործող միջոցների, ինչպես նաեւ սոցիալական ենթակառուցվածքի մյուս օբյեկտների հարմարեցման առումով հաշմանդամների պահանջմունքների բավարարման նպատակով սկսել վերանայել հանրապետության քաղաքների եւ մյուս բնակավայրերի բարեկարգման, շենքերի ու կառույցների շինարարության ու վերակառուցման գործող նորմատիվային փաստաթղթերը՝ հաշվի առնելով հաշմանդամների համար դրանց մատչելիությունը եւ ուժեղացնել վերահսկողությունը՝ սահմանված նորմաներից շեղումներ եւ խախտումներ թույլ չտալու համար:

Տրանսպորտի, կապի եւ տեղեկատվության միջոցները եւ սոցիալական ենթակառուցվածքի մյուս օբյեկտները պետք է հարմարեցվեն հաշմանդամների պահանջմունքների բավարարմանը՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով, պայմաններով եւ ժամկետներում («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 6 նոյեմբերի 1999թ., ՀՕ-10):

Այն դեպքում, եթե նշված օբյեկտները հնարավոր չէ հարմարեցնել հաշմանդամների օգտագործմանը, համապատասխան իրավասու պետական մարմինները հաշմանդամների պահանջմունքների բավարարման նպատակով պետք է մշակեն եւ իրականացնեն անհրաժեշտ միջոցառումներ:

3.6.3. Ու՞մ կողմից եւ ի՞նչ կարգով է կատարվում բնակելի շինությունների հարմարեցումը հաշմանդամների համար:

Հաշմանդամների կամ իրենց կազմում հաշմանդամ ունեցող ընտանիքների կողմից զբաղեցրած բնակելի շինությունները, հաշմանդամի վերականգնման անհատական ծրագրին համապատասխան, պետք է սարքավորվեն հատուկ միջոցներով եւ հարմարանքներով:

Նշված բնակելի շինությունների սարքավորումն իրականացվում է պետական իշխանության տեղական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների, այդ թվում՝ հաշմանդամների աշխատանքը կիրառող մասնագիտացված ուսումնասիրտադրական ձեռնարկությունների կողմից, որոնց տնօրինության տակ է գտնվում բնակելի ֆոնդը:

Անհատական բնակելի տների սարքավորումն իրականացվում է պետական իշխանության տեղական մարմինների կողմից՝ հաշմանդամների հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:

Նշված միջոցառումների ֆինանսավորումն իրականացվում է բնակելի ֆոնդի ընթացիկ եւ հիմնանորոգման համար հատկացվող միջոցների հաշվին: Այդ նպատակների համար կարող են օգտագործվել նաեւ հասարակական բարեգործական կազմակերպությունների միջոցները:

« Կառավարության 1993թ. նոյեմբերի 30-ի թիվ 600 որոշմամբ « Կառավարություններին, վարչություններին, գերատեսչություններին, ձեռնարկություններին, հիմնարկներին ու կազմակերպություններին հանձնարարվել է նախատեսել նոր կառուցվող եւ վերակառուցվող բնակավայրերի բարեկարգումը, ինչպես նաեւ շենքերի եւ կառույցների վերակառուցումը՝ հաշմանդամների համար մատչելիության պահանջների ապահովման նպատակով:

3.6.4. Ու՞մ կողմից եւ ի՞նչ կարգով է կատարվում տրանսպորտային միջոցների եւ երթուղիների հարմարեցումը հաշմանդամների օգտագործմանը:

«Հաշմանդամների կարիքների բավարարման նպատակով տրանսպորտային միջոցների պատրաստման եւ վերասարքավորման ծրագրի իրականացման հիմնական սկզբունքներն ու լրացուցիչ պահանջները մշակվում են « Կառավարության կողմից:

Ծրագրում պետք է նախատեսվեն.

ա) երկաթուղային, ավտոբուսային հանգուցային կայանների եւ օդանավակայանների վերասարքավորման եւ հաշմանդամների համար մատչելի դարձնելու ժամկետները,

բ) հաշմանդամներին փոխադրող (այդ թվում՝ հաշմանդամային սայլակներով) տրանսպորտային միջոցների հատուկ հարմարանքներ,

գ) երթուղիների նախապես սահմանված գրաֆիկներով հատուկ երթուղիներ,

դ) տրանսպորտային միջոցների կանգառներ՝ հաշմանդամների պահանջով:

« Կառավարության 1993թ. նոյեմբերի 30-ի թիվ 600 որոշմամբ « Էկոնոմիկայի նախարարությանը (ներկայումս՝ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն) հանձնարարվել է « արդյունաբերության նախարարության եւ մյուս շահագրգիռ կազմակերպությունների հետ համատեղ մշակել հաշմանդամների կարիքների բավարարման նպատակով տրանսպորտային միջոցների պատրաստման եւ վերասարքավորման ծրագրերի իրականացման հիմնական սկզբունքները ու դրանց նկատմամբ լրացուցիչ պահանջները:

3.6.5. Ու՞մ կողմից պետք է ապահովվի հաշմանդամների համար մարզական կառույցների եւ մշակութային հիմնարկների մատչելիությունը:

Պետական իշխանության եւ կառավարման տեղական մարմինները պետք է ապահովեն հաշմանդամների համար մարզական կառույցների եւ մշակութային հիմնարկների մատչելիությունը եւ դրանցից օգտվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը եւ հատուկ մարզական գույքի տրամադրումը:

«Հաշմանդամները վերոհիշյալ ծառայություններից օգտվում են « Կառավարության կողմից սահմանվող արտոնյալ պայմաններով:

« Կառավարության 1993թ. նոյեմբերի 30-ի թիվ 600 որոշմամբ « Կառավարություններին, վարչություններին, գերատեսչություններին, « Կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի եւ երիտասարդության հարցերի վարչությանն (ներկայումս՝ « մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի նախարարություն) ու բոլոր գործատուներին (անկախ սեփականության ձեւից) հանձնարարվել է թույլատրել հաշմանդամներին անվճար, արտահերթ օգտվելու մարզական հատուկ գույքից, ինչպես նաեւ մարզական կառույցների ծառայություններից:

3.6.6. Ու՞մ կողմից եւ ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների ապահովումը կապի միջոցներով:

« Երանսպորտի եւ կապի նախարարությունն ապահովում է հաշմանդամների սպասարկման համար անհրաժեշտ պայմաններ՝ հատուկ հեռուստահաղորդակցման միջոցների, իսկ լսողության խանգարումներ ունեցող բաժանորդների համար՝ հատուկ հեռախոսային սարքերի եւ կոլեկտիվ օգտագործման խոսակցական կետերի ներդրմամբ:

« Կառավարության 1993թ. նոյեմբերի 30-ի թիվ 600 որոշմամբ « Կապի նախարարությանը (ներկայումս՝ տրանսպորտի եւ կապի նախարարություն) հանձնարարվել է տեխնիկական հնարավորության դեպքում 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամներին արտահերթ ապահովել հեռախոսներով, այդ թվում՝ հատուկ հեռախոսային սարքերով: Այդ որոշմամբ

սահմանվել է, որ հաշմանդամների հեռախոսների տեղադրման ծախսերը փոխհատուցվում են համապատասխան տեղական բյուջեների միջոցների հաշվին:

Իրենց կազմում 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ունեցող ընտանիքները ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով օգտվում են հեռախոսների, իսկ հաշմանդամները՝ հատուկ կառուցվածքի հեռախոսների արտահերթ եւ անվճար տեղադրման իրավունքից («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 31 հոկտեմբերի 1994թ., ՀՕ-120):

3.7) ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՑՈՒՅՑ ՏՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

3.7.1. Հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնության ի՞նչ տեսակներ գոյություն ունեն:

Պետությունը երաշխավորում է հաշմանդամների սոցիալական օգնությունը, որը կարող է իրականացվել դրամական վճարումների (թոշակներ, նպաստներ, միանվագ վճարումներ) ձեւով, տեխնիկական եւ այլ միջոցների ապահովմամբ (ներառյալ ավտոմեքենաներ, թիկնասայլակներ, պրոթեզաօրթոպեդիկ սարքեր, հատուկ տառատեսակներով տպագիր արտադրանք, ձայնի ուժեղացուցիչ սարքավորումներ եւ ազդանշանային համակարգեր), ինչպես նաեւ հաշմանդամների կենցաղային սպասարկման եւ բժշկական, մասնագիտական սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրմամբ:

Հաշմանդամներին թոշակներով ապահովելու կարգն ու պայմանները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքով:

3.7.2. Ու՞մ կողմից եւ ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամներին տեխնիկական կամ այլ միջոցների տրամադրումը:

Տեխնիկական կամ այլ միջոցները հաշմանդամներին տրամադրվում են վերականգնման անհատական ծրագրին համապատասխան, ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Հաշմանդամին ըստ վերականգնման ծրագրերի նախատեսված տեխնիկական կամ այլ միջոցներ չտրամադրելու դեպքում ՀՀ կառավարության կողմից սահմանվող կարգով վճարվում է փոխհատուցում:

Վերականգնման անհատական ծրագրին համապատասխան տրանսպորտային միջոց ստացած հաշմանդամին ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով վճարվում է փոխհատուցում այդ միջոցի տեխնիկական արտահերթ սպասարկման եւ նորոգման համար, արտահերթ տրամադրվում է վառելանյութ («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդված):

3.7.3. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների տրանսպորտային սպասարկումը:

1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամներին, ինչպես նաեւ մանկուց հաշմանդամ երեխաներին Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքային, մերձքաղաքային եւ միջքաղաքային ուղեւորատար տրանսպորտի բոլոր տեսակներով, անկախ սեփականության ձեւից (բացի տաքսուց), երթելու համար տրվում է դրամական փոխհատուցում՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 9 հունիսի 1997թ., ՀՕ-123):

3.7.4. Ինչպիսի՞ք են հաշմանդամների պրոթեզավորման կարգն ու պայմանները:

ՀՀ կառավարության սահմանած կարգով հաշմանդամներն ունեն ՀՀ պետական բյուջեի եւ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների եւ բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզների) անվճար պատվիրման, նորոգման եւ այդպիսիք ստանալու իրավունք («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական

պաշտպանության մասին ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 9 դեկտեմբերի 2000թ., ՀՕ-113):

3.7.5. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների բնակարանային ապահովումը:

Բնակտարածությունների բաշխման ընթացքում պետական իշխանության տեղական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, այդ թվում՝ հաշմանդամների աշխատանքը կիրառող մասնագիտացված ուսումնաարտադրական ձեռնարկությունները հաշվի են առնում հաշմանդամների պահանջները՝ կապված նրանց աշխատանքի կամ հարազատների բնակության վայրին, վերականգնողական հիմնարկին կամ կենցաղային սպասարկման օբյեկտներին մոտ լինելու հանգամանքի հետ:

Հաշմանդամներին տրամադրվող բնակտարածության շինարարությունը պետք է իրականացվի հաշմանդամների հասարակական կազմակերպություններից ստացված պատվերի հիման վրա կազմված նախագծերին համապատասխան եւ բավարարի հաշմանդամների առողջական վիճակով պայմանավորված սանիտարատեխնիկական պահանջները:

Հենաշարժական ապարատի խանգարումներով հաշմանդամներին տրվում է բնակության վայրին մոտ ավտոտնակ կառուցելու իրավունք:

Հաշմանդամներին բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ճանաչելու եւ բնակարան ստանալու համար հերթագրման արտոնությունները սահմանվում են ՀՀ կառավարության կողմից («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդված):

3.7.6. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների ապահովումը պարենային եւ արդյունաբերական ապրանքներով:

Հաշմանդամներն օգտվում են պարենային եւ արդյունաբերական ապրանքներով ապահովման, այդ թվում՝ տնային պայմաններում սպասարկման արտոնյալ իրավունքներից, որոնք կարող են իրականացվել նաեւ հաշմանդամների հասարակական կազմակերպությունների միջոցների հաշվին ստեղծվող հատուկ առեւտրական օբյեկտների միջոցով: Արտոնյալ սպասարկման իրավունք տվող հիվանդությունների ցանկը եւ սպասարկման կարգը սահմանվում են ՀՀ կառավարության կողմից:

ՀՀ կառավարության 1993թ. նոյեմբերի 30-ի թիվ 600 որոշմամբ ՀՀ կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովին հանձնարարվել է մարդասիրական օգնության կարգով պարենամթերք եւ արդյունաբերական ապրանքներ ստանալիս, հաշվի առնելով հաշմանդամների կարիքները, պարբերաբար, առաջնահերթ կարգով, որոշակի քանակի հատկացումներ կատարել՝ համապատասխան կազմակերպությունների միջոցով հաշմանդամներին բաշխելու համար:

3.7.7. Ի՞նչ կարգով է կատարվում հաշմանդամների կենցաղային սպասարկումը:

1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամներին, ինչպես նաեւ մանկուց հաշմանդամ երեխաներին էլեկտրաէներգիայի, գազի, ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման, աղբահանման, ինչպես նաեւ հեռախոսի եւ ռադիոյի բաժանորդային վարձի վճարման համար տրվում է դրամական փոխհատուցում ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքներ, 31 հոկտեմբերի 1994թ., ՀՕ-120 եւ 9 հունիսի 1997թ., ՀՕ-123):

3.7.8. Ի՞նչ իրավունքներ ունեն սոցիալական օգնության ստացիոնար հիմնարկներում գտնվող հաշմանդամները:

Եթե վերականգնողական միջոցառումների իրականացման շնորհիվ վերացել է սոցիալական օգնության ստացիոնար հիմնարկում հաշմանդամի հետագա գտնվելու անհրաժեշտությունը, ապա պետական իշխանության տեղական մարմինների որոշմամբ նրան տրամադրվում է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքներ, 31 հոկտեմբերի 1994թ., ՀՕ-120 եւ 9 հունիսի 1997թ., ՀՕ-123):

պանության մասին» ՀՀ օրենքի 24 եւ 32-րդ հոդվածների պահանջներին համապատասխանող բնակարան:

Ստացիոնար հիմնարկներում գտնվող որբ կամ ծնողների խնամքից զրկված հաշմանդամ երեխաները չափահաս տարիքի հասնելուց հետո, վերականգնման անհատական ծրագրին համապատասխան, արտահերթ ապահովվում են բնակտարածությամբ:

3.7.9. Պետական իշխանության տեղական մարմինները եւ գործատուները ինչպիսի՞ իրավասություններ ունեն հաշմանդամների կենսաապահովման բարելավման ուղղությամբ:

Պետական իշխանության տեղական մարմինները եւ ՀՀ տարածքում օրենսդրությամբ սահմանված կարգով գործունեություն իրականացնող գործատուները (անկախ սեփականության ձեւից) կարող են սեփական միջոցների հաշվին սահմանել հաշմանդամներին վճարվող պետական թոշակներին կամ նպաստներին հավելավճարներ, ինչպես նաեւ լրացուցիչ արտոնություններ սահմանել հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնության բոլոր տեսակների գծով («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդված):

3.7.10. Որո՞նք են սոցիալական օգնության ֆինանսավորման աղբյուրները:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամների սոցիալական պաշտպանության միջոցառումների ֆինանսավորումը կատարվում է հանրապետական եւ տեղական բյուջեների միջոցների, ՀՀ կենսաթոշակային ֆոնդի, զբաղվածության ֆոնդի, սոցիալական ապահովագրության ֆոնդի միջոցների հաշվին:

3.7.11. Որո՞նք են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության եւ սպասարկման իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով եւ առանձին (հատուկ) խմբերը:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության եւ սպասարկման իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով եւ առանձին (հատուկ) խմբերն են՝

- և աղքատության (ընտանեկան) նպաստի համակարգում ընդգրկված անձինք,
- և 1-ին խմբի հաշմանդամները,
- և 2-րդ խմբի հաշմանդամները,
- և 3-րդ խմբի հաշմանդամները,
- և հայրենական պատերազմի մասնակիցները եւ նրանց հավասարեցված անձինք,
- և միայնակ մայրերի երեխաները (մինչեւ 18 տարեկան),
- և ծնողազուրկ երեխաներին (միակողմանի, երկկողմանի՝ մինչեւ 18 տարեկան),
- և հաշմանդամ երեխաները (մինչեւ 16 տարեկան),
- և բազմազավակ ընտանիքի երեխաներին (բազմազավակ են համարվում մինչեւ 18 տարեկան չորս եւ ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքները),
- և ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքների անդամները,
- և Չեռնոբիլի վթարի վերացման աշխատանքների մասնակիցները,
- և բռնադատվածները,
- և բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովներում քննվողները,
- և Հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաները (մինչեւ 18 տարեկան),
- և մինչեւ 7 տարեկան երեխաներին՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում,
- և մինչեւ 3 տարեկան մանուկներին՝ հիվանդանոցային բուժհաստատություններում,
- և զորակոչային տարիքի անձինք,
- և զինծառայողները,
- և ձերբակալվածները եւ ազատագրված դատապարտվածները:

3. 7. 12. Ի՞նչ կարգով են իրականացվում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունը եւ սպասարկումը:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունը եւ սպասարկումն իրականացվում են առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Առողջապահական պետական նպատակային ծրագրերը՝ ամենամյա ծրագրեր են, որոնք ուղղված են բնակչության առողջության պահպանմանը եւ որոնց ֆինանսավորումն արտահայտված է ՀՀ պետական բյուջեում:

Առողջապահական պետական նպատակային ամենամյա ծրագրի մասին ՀՀ օրենքի նախագիծը՝ պետբյուջեի նախագծի հետ ՀՀ կառավարությունը ներկայացնում է Ազգային ժողով: Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է առողջապահության բնագավառի պահպանումը եւ զարգացումը, որի ծավալները որոշվում են առողջապահության պետական նպատակային ծրագրերին համապատասխան («Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, 18 ապրիլի 2000թ., ՀՕ -43):

3.8) ՀԱՇՎԱՆՂԱՄՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՅՆԱԿ ՏԱՐԵՑՆԵՐԻ՝ ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԸ

3.8.1. Որո՞նք են միայնակ տարեցների եւ հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու ծրագրի նպատակները:

ՀՀ կառավարության 1997թ. նոյեմբերի 4-ի թիվ 485 որոշմամբ հաստատված «Միայնակ տարեցների եւ հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու վերաբերյալ» ծրագիրը նախատեսված է միայնակ տարեցների եւ հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու համար:

Միայնակ տարեցների եւ հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու ծրագրի հիմնական նպատակներն են՝

ա) միայնակ տարեցների եւ հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկման բարելավումն ու ընդլայնումը,

բ) տնային պայմաններում սոցիալական սպասարկման հարցերով զբաղվող առանձին կազմակերպությունների աշխատանքների համակարգումը,

գ) տնային պայմաններում սոցիալական սպասարկման կարիք ունեցող բոլոր միայնակ տարեցների եւ հաշմանդամների համար սպասարկման անհրաժեշտ մակարդակի ապահովումը,

դ) տնային պայմաններում կենցաղային, իրավաբանական, բժշկական եւ սոցիալ-հոգեբանական օգնության կազմակերպումը՝ ապահովելով սոցիալական սպասարկման մատչելիությունը:

3.8.2. Ինչպիսի՞ն է տնային պայմաններում սոցիալական սպասարկման իրականացման կարգը:

Տնային պայմաններում սոցիալական սպասարկումն իրականացվում է ինքնասպասարկման եւ տեղաշարժման ունակության սահմանափակման հետեւանքով իրենց հիմնական կենսական պահանջները բավարարելու հնարավորությունից մասամբ կամ լրիվ զրկված հետեւյալ անձանց համար՝

և 75-ից բարձր տարիք ունեցող, միայնակ բնակվող քաղաքացիներ,

և միայնակ բնակվող 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամներ,

և 75-ից բարձր տարիք ունեցող քաղաքացիներից կամ 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամներից բաղկացած ընտանիքներ, որոնց կազմում չկան չափահաս, աշխատունակ անդամներ:

Տնային պայմաններում սոցիալական սպասարկումն իրականացվում է քաղաքացիների դիմումի հիման վրա՝ ԲՍՓՀ-ի եզրակացության առկայության դեպքում:

Միայնակ տարեցների եւ հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկումն իրականացվում է անվճար:

Նշված պայմանների բացակայության դեպքում միայնակ տարեցների եւ հաշմանդամների համար, նրանց ցանկությամբ, կազմակերպվում է վճարովի սոցիալական սպասարկում:

Տնային պայմաններում սոցիալական սպասարկման վճարովի ծառայությունների տեսակները եւ սակագները տարեկան մեկ անգամ սահմանում է ՀՀ սոցիալական

ապահովության նախարարությունը՝ համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հետ:

3.8.3. Որո՞նք են տնային պայմաններում սոցիալական սպասարկման ծառայությունների տեսակները:

Միայնակ տարեցների եւ հաշմանդամների համար տնային պայմաններում մատուցվում են սոցիալական սպասարկման ծառայությունների հետեւյալ տեսակները՝

1. Կենցաղային սպասարկում

ա) սպասարկվողի միջոցներով անհրաժեշտ ապրանքների գնումների կատարում, բնակարանի, կոմունալ ծառայությունների դիմաց վարձավճարների մուծումներ, ինչպես նաեւ բարեգործական ճաշարաններից, առանձին կազմակերպություններից մարդասիրական օգնության կարգով տրված սննդամթերքի եւ այլ ապրանքների տեղափոխում,

բ) տնային իրերի եւ կենցաղային առարկաների վերանորոգման, հագուստի քիմիական մաքրման եւ սպիտակեղենի լվացման աշխատանքների կատարում,

գ) բնակարանի մաքրման եւ խոհանոցային աշխատանքների կատարում,

դ) ջեռուցման ապահովման եւ բնակարանի փոքրածավալ վերանորոգման հարցերում աջակցության ցուցաբերում,

ե) տուն-ինտերնատում տեղավորվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեւակերպման գործում օժանդակում,

զ) ծիսակատարությունների կազմակերպում:

2. Իրավաբանական խորհրդատվություն

ա) բնակարանների սեփականաշնորհման, փոխանակման եւ կտակի կամ նվիրատվության ու այլ բնույթի փաստաթղթերի ձեւակերպման գործում իրավաբանական օգնության կազմակերպում,

բ) գործող օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման համար աջակցության ցուցաբերում:

3. Բժշկական օգնություն

ա) անհրաժեշտության դեպքում առաջին բուժօգնության կազմակերպում,

բ) բուժկանխարգելիչ հիմնարկներում տեղավորման գործում աջակցության ցուցաբերում,

գ) առաջին անհրաժեշտության դեղամիջոցներով եւ հիգիենիկ պարագաներով ապահովման կազմակերպում,

դ) առողջարանների, հանգստյան տների ուղեգրերի ձեռքբերման գործում օգնության կազմակերպում:

4. Սոցիալ-հոգեբանական օգնություն

ա) հոգեբանական օգնության կազմակերպում (տնային այցելություն, զրույց, հատուկ հեռախոսակապ, հոգեբանի մասնագիտական եւ, առանձին դեպքերում, հոգեւորականների խորհրդատվություններ),

բ) գրքերով, թերթերով, ամսագրերով ապահովման, համերգներ, ցուցահանդեսներ այցելության հարցերում աջակցության ցուցաբերում:

3.8.4. Քանի՞ փուլով եւ պետական իշխանության ո՞ր ստորաբաժանումների ու ոչ պետական կազմակերպությունների միջոցով է իրականացվում ՀՀ կառավարության 1997թ. նոյեմբերի 4-ի թիվ 485 որոշմամբ հաստատված «Միայնակ տարեցների եւ հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու վերաբերյալ» ծրագիրը:

ՀՀ կառավարության 1997թ. նոյեմբերի 4-ի թիվ 485 որոշմամբ հաստատված «Միայնակ տարեցների եւ հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկումը բարելավելու վերաբերյալ» ծրագիրն իրականացվում է 3 փուլով:

Աշխատանքները կազմակերպվում են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կենսաթոշակառուների սոցիալական սպասարկման կենտրոնի՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկման բաժանմունքի միջոցով՝ սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների եւ թաղապետարանների հետ համագործակցությամբ:

Խիստ սահմանափակ ինքնասպասարկման հնարավորություն ունեցող կամ ինքնասպասարկման հնարավորությունից իսպառ զուրկ անձանց տնային պայմաններում

սոցիալական սպասարկման աշխատանքներում ներգրավվում են Հայկական կարմիր խաչի ընկերությունը և միայնակ տարեցների ու հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկման աշխատանքներով զբաղվող ոչ պետական կազմակերպությունները («Առաքելություն Հայաստան» բարեգործական միություն և այլն):

Սահմանափակ ինքնասպասարկման հնարավորություն ունեցող անձանց տնային պայմաններում սոցիալական սպասարկման աշխատանքներում ներգրավվում են կամավորները՝ հիմնականում Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուսանողները (հետագայում՝ նաեւ այլ բուհերի ուսանողները), որոնք տնային պայմաններում միայնակ տարեցներին ու հաշմանդամներին սպասարկում են ուսանողական 10-ամսյա պրակտիկայի ընթացքում: Յուրաքանչյուր ուսանող սպասարկում է 2-3 անձի:

Ուսանողների կողմից իրականացվող նշված սոցիալական սպասարկման աշխատանքները ղեկավարում և համակարգում են տնային պայմաններում սոցիալական սպասարկման բաժանմունքի հաստիքային աշխատողները:

2000 թվականից սկսած տնային պայմաններում սոցիալական սպասարկման աշխատանքներն ամբողջովին դրված են մարզերի (Երեւան քաղաքի) ենթակայության սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների վրա:

Ծրագրի իրականացման գործում համագործակցություն է կազմակերպվում Հայաստանի Հանրապետությունում գործող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ:

3.9) ՀԱՇՄԱՆՂԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.9.1. Ինչպիսի՞ն է հաշմանդամների հասարակական կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը:

Հաշմանդամների հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների համագործակցությունը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ լուծել հաշմանդամների սոցիալական հիմնախնդիրները: Նման համագործակցությունը կարող է իրականացվել ամենատարբեր բնագավառներում՝ սոցիալական պահանջմունքների ձեւավորման և հասարակական կարծիքի բացահայտման, հաշմանդամների առաջնային կարելուրության հիմնախնդիրների լուծմանը բնակչության լայն խավերի ներգրավման, քաղաքացիական հասարակության սոցիալական ինստիտուտների ստեղծման և այլ բնագավառներում:

Իրենց շահերի և իրավունքների պաշտպանության, փոխադարձ օգնության և ծառայությունների մատուցման նպատակով հաշմանդամները և նրանց ներկայացնող անձինք << օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն ստեղծելու հասարակական կազմակերպություններ:

Հաշմանդամների շահերին առնչվող հարցերի քննարկումն ու լուծումը պետական իշխանության և կառավարման մարմինների կողմից իրականացվում է հաշմանդամների համապատասխան հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ կամ նրանց համաձայնությամբ («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» << օրենքի 37-րդ հոդված):

3.9.2. Հաշմանդամների հասարակական կազմակերպություններն, արդյոք, իրավունք ունե՞ն զբաղվել տնտեսական գործունեությամբ և ի՞նչ արտոնություններից կարող են օգտվել:

<< Սահմանադրության 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է սոցիալական պետություն: Սոցիալական պետությունը պարտավոր է ձանաչել հաշմանդամների սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում հաշմանդամների հասարակական կազմակերպությունների կարելուր դերը և նրանց թույլատրել զբաղվելու տնտեսական գործունեությամբ և տրամադրել հարկային արտոնություններ և գրանտներ (շնորհադրամ), ֆինանսավորել հասարակական կազմակերպությունների կողմից մշակված առավել կարելուրություն ներկայացնող սոցիալական ծրագրերն ու միջոցառումները:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների հասարակական կազմակերպությունները << օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն զբաղվելու տնտեսական գործունեությամբ:

Հաշմանդամների հասարակական կազմակերպությունների այն ուսումնաարտադրական եւ մյուս ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, որոնցում աշխատողների ընդհանուր թվաքանակի առնվազն 50 տոկոսը կազմում են հաշմանդամները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվում են հարկային արտոնություններից («Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 31 հոկտեմբերի 1994թ., ՀՕ-120):

ՀՀ կառավարության 1996թ. հունիսի 25-ի թիվ 193 որոշման համաձայն՝ ՀՀ հաշմանդամների հասարակական կազմակերպությունների այն ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, որոնցում աշխատողների ընդհանուր թվաքանակի առնվազն 50 տոկոսը կազմում են հաշմանդամները, եւ որոնք մինչեւ սույն որոշման ընդունումը չեն վճարել ավելացված արժեքի հարկը, ազատվում են այդ հարկը չվճարելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված տույժերից ու տուգանքներից:

3.9.3. Ինչպիսի՞ն է հաշմանդամների հասարակական կազմակերպությունների սեփականության տնօրինման կարգը:

Հաշմանդամների հասարակական կազմակերպությունները սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի ֆոնդը եւ այլ գույքը տնօրինում, տիրապետում եւ օգտագործում են իրենց կանոնադրություններին համապատասխան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.9.4. Հաշմանդամների ինչպիսի՞ հասարակական կազմակերպություններ են գործում Հայաստանի Հանրապետությունում: Նշել դրանց տվյալները:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում են հաշմանդամների շուրջ 100 հասարակական կազմակերպություններ: Դրանցից առավել ակտիվ գործունեություն են ծավալել հետեւյալ կազմակերպությունները՝

- 1) Հաշմանդամների Հայկական Հանրապետական ընկերությունը (հեռ. 44-34-79),
- 2) Հայաստանի կույրերի միավորում (հեռ. 56 - 05 - 21),
- 3) Հայաստանի խուլերի միավորում (հեռ. 26 - 27 - 20),
- 4) «Կամք եւ կորով» երիտասարդ հաշմանդամների միություն (հեռ. 53 - 85 - 41),
- 5) Սպինալ հաշմանդամների «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամ (հեռ. 23 - 85 - 19),
- 6) Հաշմանդամների «Փյունիկ» միություն (հեռ. 56 - 07 - 07),
- 7) Աֆղանական պատերազմի մասնակիցների եւ հաշմանդամների խորհուրդ (հեռ. 53 - 83 - 99),
- 8) Հաշմանդամ երեխաների ծնողներ «Աստղիկ» միություն (հեռ. 57 - 51 - 85),
- 9) «Հույսի կամուրջ» հաշմանդամ երեխաների հասարակական կազմակերպություն (հեռ. 58 - 91 - 86),
- 10) «Առաքելություն Հայաստան» բարեգործական միություն (հեռ. 44 - 47 - 93):

Գ Լ ՈՒ Խ 4

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳ

4.1. Ի՞նչ նպատակով եւ երբվանի՞ց է ներդրվել ընտանեկան նպաստի համակարգը:

Հայաստանի Հանրապետությունում գործող տարաբնույթ նպաստների եւ փոխհատուցումների համակարգից մեկ միասնական նպաստի համակարգի անցնելու եւ առավել անապահով ընտանիքների նկատմամբ հասցեագրված սոցիալական աջակցության քաղաքականություն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 19-ի թիվ 727 որոշմամբ 1999թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ընտանեկան նպաստի համակարգ:

4.2. Ինչպիսի՞ն է ընտանեկան նպաստի նշանակման եւ վճարման կարգը:

Ընտանեկան նպաստի վճարումը կատարվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Նպաստ նշանակելու համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմում է ներկայացնում փաստացի բնակության վայրի սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն: Կենտրոնը նպաստ նշանակելու մասին դիմումը քննարկում է ոչ ուշ, քան դիմումն ու անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում:

Նպաստի նշանակումը մերժելու դեպքում Կենտրոնը 5-օրյա ժամկետում պարտավոր է տեղեկացնել դիմողին՝ նշելով մերժման պատճառը:

Նպաստ նշանակող մարմնի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

4.3. Ովքե՞ր ունեն ընտանեկան նպաստ ստանալու իրավունք եւ ինչպե՞ս է կատարվում նպաստի հաշվարկումը:

Ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունեն՝

ա) ընտանիքի անապահովության աստիճանի գնահատման «Փարոս» համակարգում հաշվառված այն ընտանիքները, որոնց անապահովության աստիճանի գնահատման միավորը բարձր է անապահովության սահմանային մեծության միավորից,

բ) այն ընտանիքները, որոնք ընդգրկվել են համայնքի ղեկավարի կողմից հաստատված եւ համապատասխան կենտրոն ներկայացված ցուցակներում՝ համայնքներին հատկացված առավել անապահով ընտանիքների քվոտայի սահմաններում:

Ծանոթագրություն: ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 19-ի թիվ 727 որոշմամբ սահմանվել է առավել անապահով ընտանիքների քվոտա՝ յուրաքանչյուր համայնքի նպաստառու ընտանիքների թվաքանակի 5%-ի չափով:

Համայնքի ղեկավարը համայնքին հատկացված առավել անապահով ընտանիքների քվոտայի սահմաններում կազմում է «Փարոս»-ում հաշվառված այն առավել անապահով ընտանիքների ցուցակները, որոնց անապահովության աստիճանի գնահատման միավորը ցածր է անապահովության սահմանային մեծության միավորից:

Համայնքի ավագանու նիստում քննարկվելուց եւ համայնքի ղեկավարի կողմից հաստատվելուց հետո այդ ցուցակները ներկայացվում են Կենտրոն, որտեղ դրանք ընդգրկվում են նպաստի վճարման ցուցակներում՝ պահպանելով «Փարոս»-ի հաշվառման կանոնները:

Համայնքների ղեկավարները պարտավոր են ապահովել այդ ցուցակների հրապարակայնությունը, այդ նպատակով օգտագործելով տեղեկատվության բոլոր միջոցները (լրատվության տեղական միջոցներ՝ լրագիր, ռադիո, հեռուստատեսություն, ժողովներ, դիտողական նյութեր եւ այլն):

Նպաստը հաշվարկվում է՝ բազային նպաստին (3000 դրամ) ավելացնելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը (1300 դրամ):

Օրինակ, եթե անապահով ընտանիքը բաղկացած է 5 անձից, ապա նպաստը կկազմի՝
 $3000 \text{ դրամ (բազային նպաստ)} + 5 \times 1300 \text{ դրամ (հավելում)} = 3000 \text{ դրամ} + 6500 \text{ դրամ} = 9500 \text{ դրամ:}$

Յուրաքանչյուր տարվա համար անապահովության սահմանային մեծության միավորը, բազային նպաստի, ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելման եւ համայնքներին հատկացվող առավել անապահով ընտանիքների քվոտայի չափերը սահմանում է ՀՀ կառավարությունը:

4.4. Ինչպիսի՞ք են ընտանեկան նպաստի նշանակման եւ վճարման ժամկետները:

«Փարոս»-ում հաշվառված այն ընտանիքներին, որոնց անապահովության աստիճանի գնահատման միավորը բարձր է անապահովության սահմանային մեծության միավորից, եւ որոնք նպաստի նշանակման համար դիմել են մինչեւ տվյալ տարվա ապրիլի 1-ը, նպաստ նշանակվում է տարեսկզբից: Ապրիլի 1-ից հետո դիմելու դեպքում նպաստը նշանակվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

«Փարոս»-ում չհաշվառված ընտանիքները դիմումի հետ միասին Կենտրոն են ներկայացնում նաեւ «Փարոս»-ում հաշվառվելու համար սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը: Եթե նշված ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման միավորը բարձր է անապահովության սահմանային մեծության միավորից (այսինքն՝ 35,42 միավորից), ապա նրանց նպաստ նշանակվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

«Փարոս»-ում հաշվառված եւ ընտանիքի կազմի, դրա նյութական, բնակարանային պայմանների փոփոխությունների հետեւանքով նպաստի նշանակման համար դիմած ընտանիքներին նպաստ նշանակվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Համայնքին հատկացված առավել անապահով ընտանիքների քվոտայի սահմաններում նպաստ նշանակվում է հունվարից, եթե նշված ընտանիքների ցուցակները Կենտրոն են ներկայացվել մինչեւ տվյալ տարվա ապրիլի 1-ը: Նշված ժամկետից հետո նպաստ նշանակվում է ցուցակները ներկայացվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Ընտանիքի կազմում փոփոխություն կատարվելու դեպքում նպաստը վերահաշվարկվում եւ վճարվում է կատարված փոփոխությունների մասին դիմելու ամսվան հաջորդող ամսվանից:

Նպաստը վճարվում է ոչ ավելի, քան մինչեւ օրացուցային տարվա վերջը: Եթե ընտանիքում կան այնպիսի անդամներ, որոնց սոցիալական որել է խմբի պատկանելու ժամկետը լրանում է տվյալ օրացուցային տարվա ընթացքում, ապա նպաստը վճարվում է այդ ժամկետը լրանալու ամիսը ներառյալ:

Օրինակ՝ եթե ընտանիքում կա մինչեւ 2 տարեկան երեխա, որի 2 տարին լրանում է մարտին, ապա նպաստը նշանակվում է մինչեւ մարտը ներառյալ:

Եթե ընտանիքի անդամների սոցիալական որել է խմբի պատկանելու ժամկետը լրանում է տվյալ տարիքի հետ կապված, սակայն այդ ընտանիքը պահպանում է նպաստի իրավունքը, ապա նպաստի վճարումը շարունակվում է:

Օրինակ, եթե ընտանիքում կա մինչեւ 2 տարեկան երեխա եւ տվյալ ընտանիքն ունի նպաստի իրավունք (այսինքն՝ միավորը բարձր է 35,42-ից) եւ նրա 2 տարին լրանալուց հետո ընտանիքի նպաստի իրավունքը պահպանվում է, ապա նպաստի վճարումը շարունակվում է:

Եթե ընտանիքի անդամների սոցիալական որել է խմբի պատկանելու ժամկետը լրանում է, սակայն այդ ընտանիքը պահպանում է նպաստի իրավունքը, ապա նպաստի վճարումը շարունակվում է:

Օրինակ, եթե ընտանիքում կա 1-ին խմբի հաշմանդամ եւ տվյալ ընտանիքն ունի նպաստի իրավունք (այսինքն՝ միավորը բարձր է 35,42-ից) եւ նրա հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո ընտանիքի նպաստի իրավունքը պահպանվում է, ապա նպաստի վճարումը շարունակվում է:

Եթե ընտանիքի անդամների սոցիալական որել է խմբի պատկանելու ժամկետը լրանում է եւ այդ ընտանիքը պահպանում է նպաստի իրավունքը, սակայն ժամկետը լրանալու պահին չի ներկայացնում համապատասխան փաստաթուղթ, ապա նպաստի վճարումը դադարեցվում է 2 ամսով:

Նպաստի իրավունքը կասեցվում է նաեւ քաղաքացու կողմից անընդմեջ երեք ամիս նպաստը չստանալու դեպքում:

Տվյալ ժամկետը լրանալուց հետո նպաստը վճարվում է կասեցման ամսվանից:

Օրինակ, եթե ընտանիքում կա 1-ին խմբի հաշմանդամ եւ տվյալ ընտանիքն ունի նպաստի իրավունք (այսինքն՝ միավորը բարձր է 35,42-ից) եւ նրա հաշմանդամության ժամկետը լրանալուց (հուլիս) հետո սեպտեմբերին ներկայացնում է սոցիալական խումբը պահպանելու մասին փաստաթուղթ (ընդ որում, անկախ խմբից) եւ ընտանիքի նպաստի իրավունքը վերականգնվում է, ապա նպաստի վճարումը շարունակվում է օգոստոսից:

Եթե ընտանիքի անդամների սոցիալական որել է խմբի պատկանելու ժամկետը լրանում է եւ այդ ընտանիքը պահպանում է նպաստի իրավունքը, սակայն ժամկետը լրանալու պահին 2 ամսվա ընթացքում չի ներկայացնում համապատասխան փաստաթուղթ, բայց նպաստի իրավունք է ձեռք բերում ընտանիքում կատարված այլ փոփոխությունների արդյունքում, ապա նպաստի վճարումը շարունակվում է դիմելու ամսին հաջորդող ամսից:

Օրինակ, եթե ընտանիքում կա 1-ին խմբի հաշմանդամ եւ տվյալ ընտանիքն ունի նպաստի իրավունք (այսինքն՝ միավորը բարձր է 35,42-ից) եւ նրա հաշմանդամության ժամկետը լրանալուց (օգոստոս) հետո սեպտեմբերին ընտանիքի այլ անդամ դարձել է 2-րդ խմբի հաշմանդամ, որի արդյունքում տվյալ ընտանիքը նորից ձեռք է բերել նպաստի իրավունք (այսինքն՝ միավորը բարձր է 35,42-ից), ապա սեպտեմբերին դիմելու դեպքում նպաստի վճարումը շարունակվում է հոկտեմբերից:

Համայնքի ներկայացրած ցուցակում ընդգրկված ընտանիքներին նպաստ վճարվում է վեց ամիս, բայց ոչ ավելի, քան մինչեւ տվյալ օրացուցային տարվա վերջը:

4.5. Նպաստ նշանակելու համար ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ եւ ինչպիսի՞ն է նպաստի վճարման կարգը:

ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 19-ի թիվ 727 որոշման համաձայն՝ նպաստ նշանակելու եւ վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեւերը եւ ձեւաթղթերը (ընտանիքի անապահովության աստիճանի գնահատման «Փարոս» համակարգի տեղեկանքը, ընտանիքի սոցիալական անձնագիրը, սոցիալական խմբերը հաստատող փաստաթղթերը եւ այլն) հաստատում է ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունը:

Նպաստ նշանակելու եւ վճարելու համար փաստաթղթերը պահվում են Կենտրոնում:

Նպաստը նշանակվում եւ վճարվում է ընտանիքի չափահաս անդամներից մեկին՝ մյուս չափահաս անդամների փոխադարձ համաձայնությամբ: Անհամաձայնության դեպքում ընտանիքի չափահաս անդամի պահանջով նրան կարող է նպաստ նշանակվել իր բաժնեմասով:

Ընտանիքի այն անդամի բացակայության դեպքում, որի անվամբ նշանակված է նպաստը, այն վճարվում է ընտանիքի այլ չափահաս անդամի:

Կենտրոնի նշանակած նպաստի վճարումը կատարվում է «ՀայՓոստ» պետական փակ բաժնետիրական ընկերության դուստր ընկերությունների միջոցով:

Ընտանիքի բնակության վայրի փոփոխության դեպքում նպաստի վճարումը դադարեցվում է եւ այդ պահից այն վերսկսվում է նոր բնակավայրի Կենտրոնի կողմից: Այս դեպքում նպաստի գործը՝ նպաստ ստացողի դիմումի համաձայն, ուղարկվում է նոր բնակության վայրի Կենտրոն՝ նշելով նպաստի վճարման դադարեցման ամիսը:

Նշանակված, բայց չստացված նպաստի գումարը վճարվում է միայն անցած երեք ամսվա ժամանակահատվածի համար: Կենտրոնի կամ դուստր ընկերության մեղքով չվճարված գումարը վճարվում է առանց ժամկետի սահմանափակման:

4.6. Երբևանի՞ց է դադարեցվում նպաստի վճարումը:

Նպաստի վճարումը դադարեցվում է դրա իրավունքը կորցնելու ամսվան հաջորդող ամսվանից:

Նպաստ ստացողի կողմից ակնհայտ սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու, եկամուտները եւ ընտանիքում կատարված փոփոխությունները թաքցնելու դեպքերում նպաստի վճարումը դադարեցվում է դրանց հայտնաբերման ամսվանից, եւ ընտանիքը մեկ տարի ժամկետով զրկվում է նպաստ ստանալու իրավունքից:

4.7. Ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման ժամանակ ի՞նչ ցուցանիշներ են օգտագործվում:

Ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման ժամանակ օգտագործվում - են հետևյալ ցուցանիշները՝

- և ընտանիքի անդամների պատկանելությունը որոշակի սոցիալական խմբերի,
- և ընտանիքի անաշխատունակ տարիքի անդամների եւ 1-ին ու 2-րդ խմբերի հաշվանդամների թիվը,
- և բնակավայրը,
- և ընտանիքի բնակարանային պայմանները,
- և անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունը,
- և ընտանեկան ձեռնարկության առկայությունը եւ անհատ ձեռներեցությամբ զբաղվելը,
- և ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների կամ համայնքի ավագանու եզրակացությունը,
- և ընտանիքի ամբողջական եկամուտը:

4.8. Ի՞նչ կարգով է որոշվում ընտանիքի անդամների պատկանելությունը որոշակի սոցիալական խմբերի եւ որքա՞ն են դրանց թվային արժեքները եւ գործակիցների մեծությունները:

Սոցիալական խմբերի անվանումները, դրանց համապատասխան ծածկագրերը եւ անապահովության աստիճանը բնութագրող միավորները (P) բերված են ներքոհիշյալ աղյուսակում:

<u>Սոցիալական խմբի անվանումը</u>	<u>Ծածկագիրը</u>	<u>Անապահով. միավորը</u>
Հաշմանդամ՝ 1-ին խումբ	< 11	48
Հաշմանդամ՝ 2-րդ խումբ	< 22	39
Հաշմանդամ՝ 3-րդ խումբ	< 33	28
Հաշմանդամ երեխա՝ մինչև 16 տար.	< 44	45
Անչափահաս երեխա՝ մինչև 2 տար.	Ա 55	35
Անչափահաս երեխա՝ 2-18 տարեկան	Ա 66	33
Կենսաթոշակառու	Կ 88	34
Գործազուրկ	Գ 99	27
Ուսանող՝ մինչև 23 տար. (պետպատվեր)	Ս12	22
Հղի կին (20 շաբաթական եւ ավելի ժամ.)	< 00	30
Միակողմանի ծնողազուրկ երեխա	Մ 23	43
Միայնակ մոր երեխա	Մ 45	26
Ամուսնալուծված ընտանիքի երեխա	Ա 34	26
Երկկողմանի ծնողազուրկ երեխա	Ե 56	50
Միայնակ կենսաթոշակառու	Կ 87	36
Տարեց կենսաթոշակառու (75 տար. բարձր)	Կ 86	39
Որեւէ սոց. խմբի չպատկանող անձ	և	20

Երրորդ խմբի հաշմանդամների կենսաթոշակային տարիքը լրանալիս՝ նրանց անապահովության աստիճանը բնութագրող միավորը հաշվարկվում է կենսաթոշակառուների համար սահմանված միավորով:

Միաժամանակ մի քանի սոցիալական խմբերի պատկանելու դեպքում ընտանիքի անդամի անապահովության միավորը հաշվարկվում է յուրաքանչյուր սոցիալական խմբին համապատասխանող անապահովության միավորների գումարման միջոցով՝ օգտագործելով ճշգրտման գործակիցներ: Այս դեպքում սոցիալական տարբեր խմբերին համապատասխանող անապահովության միավորները դիտարկվում են նվազող հաջորդականությամբ՝ առաջին միավորը վերցվում է ամբողջությամբ, երկրորդը՝ 0,3, իսկ երրորդը եւ չորրորդը՝ 0,1 ճշգրտման գործակիցներով կամ $P_i = P_1 + 0,3P_2 + 0,1(P_3 + P_4)$, որտեղ P_i -ն ընտանիքի i -րդ անդամի անապահովության անմիջական միավորն է, իսկ $P_1 > P_2 > P_3 > P_4$ -ը ընտանիքի i -րդ անդամի սոցիալական խմբերի միավորներն են:

Ընդ որում, կենսաթոշակային տարիքի հասած եւ հաշմանդամության 1-ին եւ 2-րդ խմբեր ունեցող անձանց անապահովության միավորը հաշվելիս՝ կենսաթոշակառու եւ տարեց կենսաթոշակառու (Կ 86, Կ 88) սոցիալական խմբերը որպես 2-րդ սոցիալական խումբ նկատի չեն առնվում:

Օրինակ 1. 14 տարեկան երկկողմանի ծնողազուրկ երեխան միաժամանակ պատկանում է երկու սոցիալական խմբերի՝ Ե 56 եւ Ա 66: Նրա անապահովության ամբողջական միավորը կկազմի՝

$$P = 50 + 0,3 \times 33 = 50 + 9,9 = 59,9:$$

Օրինակ 2. 17 տարեկան միակողմանի ծնողազուրկ, 3-րդ խմբի հաշմանդամ երեխան միաժամանակ պատկանում է Մ 23, Ա 66, < 33 սոցիալական խմբերին: Նրա անապահովության ամբողջական միավորը կկազմի՝

$$P = 43 + 0,3 \times 33 + 0,1 \times 28 = 43 + 9,9 + 2,8 = 55,7:$$

Օրինակ 3. 68 տարեկան 2-րդ խմբի հաշմանդամը միաժամանակ պատկանում է երկու սոցիալական խմբերի՝ < 22 եւ Կ 88: Սակայն այս դեպքում չի դիտարկվում Կ 88 սոցիալական խումբը եւ տվյալ անձի անապահովության միավորը՝ $P = 39$:

Այնուհետեւ որոշվում է ընտանիքի անապահովության միջին միավորը (P միջ.), որի համար ընտանիքի բոլոր անդամների անապահովության միավորների գումարը բաժանվում է ընտանիքի սոցիալական անձնագրի լրացման պահին ներկա անդամների թվի վրա:

Օրինակ 1. Ընտանիքը բաղկացած է 4 անդամից՝ որեւէ սոցիալական խմբի չպատկանող անձից ($P = 20$), 62 տարեկան 2-րդ խմբի մեկ հաշմանդամից ($< 22 = 39$), 16 տարեկան միակողմանի ծնողազուրկ, 3-րդ խմբի հաշմանդամ մեկ երեխայից ($Մ 23, Ա 66, < 33 = 55,7$) եւ 13 տարեկան միակողմանի ծնողազուրկ մեկ երեխայից ($Մ 23, Ա 66 = 52,9$):

Այս ընտանիքի անապահովության միջին միավորը կկազմի՝
 P միջ. = $(20 + 39 + 55,7 + 52,9) : 4 = 167,6 : 4 = 41,9:$

4.9. Ի՞նչ ազդեցություն է գործում ընտանիքի անաշխատունակ անդամների թիվն ընտանիքի անապահովության աստիճանի վրա:

Ընտանիքի անաշխատունակ անդամների թիվն ընտանիքի անապահովության աստիճանի վրա ազդեցություն է գործում $K_{ընտ}$ գործակցով՝

$$K_{ընտ} = 1,00 + 0,02 m,$$

որտեղ m -ն ընտանիքի սոցիալական անձնագրի լրացման պահին ներկա անաշխատունակ անդամների թիվն է:

Անաշխատունակ են համարվում մինչև 16 տարեկան երեխաները, 63-ից բարձր տարիքի կանայք, 65-ից բարձր տարիքի տղամարդիկ, 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամները:

Օրինակ 1. *Ընտանիքը բաղկացած է 1 անաշխատունակ անդամից:*

$$\text{Այս դեպքում } K_{ընտ} = 1,00 + 0,02 \times 1 = 1,02:$$

Օրինակ 2. *Ընտանիքը բաղկացած է 11 անդամից, որից 3-ն անաշխատունակ են:*

$$\text{Այս դեպքում } K_{ընտ} = 1,00 + 0,02 \times 3 = 1,06:$$

4.10. Ի՞նչ ազդեցություն են գործում ընտանիքի բնակարանային պայմաններն ընտանիքի անապահովության աստիճանի վրա:

Բնակարանային պայմանների ազդեցությունն ընտանիքի անապահովության աստիճանի վրա որոշվում է $K_{բն}$ գործակցով, որի արժեքները բերված են ներքոհիշյալ աղյուսակում:

<u>Բնակարանային պայմաններ</u>	<u>Կբն</u>
Տնակ	1,2
Անօթեւան	1,07
Վթարային (3-րդ, 4-րդ աստիճանի)	1,05
Հանրակացարան	1,03
Այլ	1,02
Մշտական կացարան	1,00:

4.11. Ի՞նչ ազդեցություն է գործում անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունն ընտանիքի անապահովության աստիճանի վրա:

Անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունն ընտանիքի անապահովության աստիճանի վրա ազդեցություն է գործում $K_{ավ}$ գործակցով, որը հավասարվում է 0-ի, եթե՝
ա) ավտոմեքենան ձեռք է բերվել 1991-93թթ. ընթացքում՝ հեռավոր արտասահմանի երկրներից,

բ) ավտոմեքենան (1990թ. հետո արտադրության) ձեռք է բերվել 1991-93թթ. ընթացքում՝ ԱՊՀ եւ մերձբալթյան երկրներից,

գ) ավտոմեքենան ձեռք է բերվել 1993թ. հետո, անկախ արտադրության տարեթվից:

Այս դեպքերում ընտանիքը զրկվում է ընտանեկան նպաստ ստանալու իրավունքից:

Մնացած դեպքերում $K_{ավ}$ գործակցիցը հավասարվում է 1-ի:

4.12. Ի՞նչ ազդեցություն է գործում ընտանեկան ձեռնարկություն ունենալը կամ անհատ ձեռներեցությամբ զբաղվելն ընտանիքի անապահովության աստիճանի վրա:

Ընտանեկան ձեռնարկություն ունենալը կամ ընտանիքի որեւէ անդամի անհատ ձեռներեցությամբ զբաղվելն ընտանիքի անապահովության աստիճանի վրա ազդեցություն է գործում $K_{ձ}$ գործակցով, որը հավասար է 0-ի, այսինքն՝ ընտանիքը զրկվում է ընտանեկան նպաստ ստանալու իրավունքից:

Ընտանեկան ձեռնարկության կամ ընտանիքի որեւէ անդամի անհատ ձեռներեցության գործունեության դադարեցման դեպքում ընտանիքի անապահովության միավորը վերականգնվում է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից տրված տեղեկանքի հիման վրա: Այս դեպքում $K_{ձ} = 1$:

4.13. Ո՞ր ընտանիքներն ունեն նպաստի իրավունք:

Նպաստի իրավունք ունեն այն ընտանիքները, որոնց կարիքավորության աստիճանը գնահատող միավորը «Փարոս» համակարգում բարձր է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարիքավորության սահմանային մեծության միավորից: *Օրինակ, եթե ՀՀ կառավարության կողմից որպես կարիքավորության սահմանային մեծության միավոր որոշվել է 35,42 միավորը, ապա նպաստի իրավունք ունեն 35,43 եւ բարձր միավորներ ունեցող ընտանիքները:*

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Քաղվածք «Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանների մասին» 1996թ. մարտի 5-ի ՀՀ օրենքից

Հոդված 1. Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային գործունեության բնագավառները

Սույն օրենքը սահմանում է կրթության, մշակույթի, քաղաքացիական ավիացիայի, սպորտի բնագավառներում առանձին մասնագիտություններով աշխատող անձանց երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակների նշանակման պայմանները:

Հոդված 2. Կրթության, մշակույթի բնագավառների առանձին աշխատողների երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանները

Կրթության, մշակույթի բնագավառների աշխատողների երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակվում են՝ 50 տարին լրացած եւ 25 տարվա

մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն կանանց, 55 տարին լրացած եւ 30 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն տղամարդկանց, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետեւյալ տեսակներով՝

ա) միջնակարգ հանրակրթական դպրոցների, գիմնազիաների, բոլոր անվանումների գիշերօթիկ դպրոցների եւ դպրոց-գիշերօթիկների, խուլ-համրերի, կույրերի, նյարդային եւ այլ հիվանդ երեխաների համար նախատեսված բոլոր տիպի դպրոցների, առողջարանային դպրոցների, մանկական առողջարաններին կից դպրոցների եւ ուսումնական խմբերի, երաժշտական, արվեստի եւ գեղարվեստի դպրոցների, երաժշտական դպրոց-յոթնամյակների, երաժիշտ սաների դպրոցների, զինվորական միջնակարգ մասնագիտական դպրոցների եւ ուսումնարանների տնօրենները, ուսուցիչները, ուսուցիչ-լոգոպեդները, դասատուները, խուլ-համրերի մանկավարժները /սուրդոմանկավարժները/, կույրերի մանկավարժները /տիֆլոմանկավարժներ/, մանկավարժ-դաստիարակները, դաստիարակ-ղեկավարները /դաստիարակներ/, ավագ ջոկատավարները, ջոկատավարները, լսողական կաբինետների վարիչները եւ հրահանգիչները, վարիչները եւ ուսումնադաստիարակչական, ուսումնաարտադրական մասի կամ արտադրական ուսուցման գծով տեղակալները, ուսումնական եւ ուսումնադաստիարակչական մասի վարիչները, հանրակրթության համակարգի մեթոդիստները, բնակչահագործման գրասենյակների մանկավարժ-կազմակերպիչները.

բ) մանկատների, մանկական աշխատանքային-դաստիարակչական գաղութների, մանկական ընդունարանների եւ մանկական ընդունման կետերի, մանկական ընդունող բաշխիչների, լոգոպեդիկ կետերի եւ ստացիոնարների, դպրոց-կլինիկաների, երեխաների աշխատանքային դաստիարակության հատուկ դպրոցների տնօրենները, վարիչները, ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով /մասով/ տնօրենների տեղակալները, ուսուցիչները, մանկավարժ-դաստիարակները, դաստիարակ-ղեկավարները /դաստիարակներ/, խուլ-համրերի մանկավարժները /սուրդոմանկավարժներ/.

գ) տեխնիկումների եւ միջնակարգ մասնագիտական ուսումնական այլ հաստատությունների /մանկավարժական, բժշկական, գյուղատնտեսական եւ այլն/, քոլեջների, աշխատանքային ռեզերվների համակարգի ուսումնական հաստատությունների, այլ տիպի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոցների եւ ուսումնարանների /բացի բարձրագույն ուսումնական հաստատություններից/ դասատուները, մանկավարժները, տնօրենները, տնօրենների տեղակալները, գրադարանավարները, խմբագիրները, մեթոդիստները.

դ) մանկապարտեզների եւ միացյալ մուր-մանկապարտեզների վարիչները, ղեկավար դաստիարակները, դաստիարակները, մեթոդիստ-դաստիարակները, մանկապարտեզների /մանկական օջախներ եւ մանկական հրապարակներ/ եւ միացյալ մուր-մանկապարտեզների մանկավարժ դաստիարակները, մանկավարժները, մանկավարժ-ղեկավարները, ղեկավարները, երաժշտական ղեկավարները /դաստիարակներ, երաժշտական աշխատողներ/, բուժքույր-դաստիարակները.

ե) մանկական կլինիկաների, հիվանդանոցների, առողջարանների եւ դիսպանսերների, մսուրների, երեխայի տների, հիվանդանոցներում, առողջարաններում եւ գաղութներում մանկական բաժանմունքների ուսուցիչները, մանկավարժ-դաստիարակները, լոգոպեդները եւ խուլ-համրերի մանկավարժները /սուրդոմանկավարժներ/.

զ) գրադարանների, Մատենադարանի տնօրենները, փոխտնօրենները, գիտական քարտուղարները, բաժինների վարիչները, ենթաբաժինների վարիչները, մասնաձյուղերի վարիչները, գլխավոր գրադարանավարները, գլխավոր մասնագետները, առաջատար գրադարանավարները, առաջին եւ երկրորդ կարգի գրադարանավարները, առաջին եւ երկրորդ կարգի խմբագիրները,

է) թանգարանների, Մատենադարանի էքսկուրսավարները, կրտսեր, ավագ, առաջատար գիտաշխատողները, ֆոնդերի եւ ցուցանմուշների պահպանողները, վերականգնող նկարիչները, թանգարանային հիմնական գործունեության մասնագետները, ֆոնդային եւ գիտահետազոտական բաժինների մասնագետները, թատրոնների մանկավարժ-դաստիարակները.

ը) ֆոնդապահները՝ ֆոնդապահ, ավագ ֆոնդապահ, գլխավոր ֆոնդապահ, պահպանող, ավագ պահպանող.

արխիվագետները՝ արխիվագետ, առաջին եւ երկրորդ կարգի արխիվագետ, առաջատար արխիվագետ, գլխավոր արխիվագետ, մասնագետ, առաջին եւ երկրորդ կարգի մասնագետներ, առաջատար մասնագետ, գլխավոր մասնագետ, կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, ավագ գիտաշխատող, առաջատար գիտաշխատող, դիվանապահ /արխիվարիուս/, մեթոդիստ, փորձագետ-մեթոդիստ, առաջին եւ երկրորդ կարգի մեթոդիստներ, ավագ մեթոդիստ, առաջատար

մեթոդիստ, գլխավոր մեթոդիստ, առաջինից վեցերորդ կարգի արխիվ կարգավորողներ եւ բրիգադավարներ, տեսուչ, ավագ տեսուչ.

հնագիրները /պալեոգրաֆ/ հնագիր, առաջին եւ երկրորդ կարգի հնագիրներ, ավագ հնագիր, առաջատար հնագիր, թարգմանիչ, գրադարանավար, ավագ գրադարանավար, մասնագետ /բիբլիոգրաֆ/, ավագ մասնագետ.

հնագետները /արխեոգրաֆ/ հնագրագետ, առաջին եւ երկրորդ կարգի հնագրագետներ, ավագ հնագրագետ, առաջատար հնագրագետ, գլխավոր հնագրագետ, սրբագրիչ, առաջին եւ երկրորդ կարգի սրբագրիչներ, խմբագիր, առաջին եւ երկրորդ կարգի խմբագիրներ, ավագ խմբագիր, տեխնիկական խմբագիր.

ապարատավարները՝ ապարատավար, ավագ ապարատավար, համակարգչի ապարատավար, ինժեներ, ավագ ինժեներ, օպերատոր, հսկող, հսկող վարպետ, ավագ հսկող վարպետ ստուգող, տեխնիկ, վարպետ տեխնիկ, հերթապահ տեխնիկ, ավագ հերթապահ տեխնիկ, լաբորանտ, ավագ լաբորանտ մոնտաժող, հայտածող.

երեսակողները՝ երեսակող, վարպետ, ավագ վարպետ երեսակող, լաբորանտ, ավագ լաբորանտ, լուսանկարիչ.

վերականգնողները՝ վերականգնող, վարպետ վերականգնող, ախտահանող, լաբորանտ.

կազմարարները՝ կազմարար, վարպետ-կազմարար, ավագ վարպետ-կազմարար, լաբորանտ.

արխիվային վարչության, պետական արխիվի, գերատեսչական արխիվի, պետական արխիվի մասնաձյուղի, բաժինների, գրադարանների, լաբորատորիաների, արխիվային ծառայությունների կենտրոնի, արխիվ կարգավորող գրասենյակի, ընթերցասրահի, արխիվադարանի պետերը եւ տեղակալները, տնօրենները եւ փոխտնօրենները, վարիչները եւ տեղակալները.

թ) մանկապատանեկան դպրոցների եւ օլիմպիական հերթափոխի ուսումնարանների մարզիչ-մանկավարժները:

Հոդված 3. Քաղաքացիական ավիացիայի առանձին կատեգորիայի աշխատողների երկարամյա ծառայության կենսաթոշակներ նշանակելու պայմանները

Քաղաքացիական ավիացիայի առանձին կատեգորիայի աշխատողների երկարամյա ծառայության կենսաթոշակներ նշանակվում են՝

1. Թռիչքային եւ թռիչքահրահանգչական անձնակազմի անդամներին՝ 40 տարին լրացած եւ առնվազն 20 տարի ծառայած այն կանանց, 45 տարին լրացած եւ առնվազն 25 տարի ծառայած այն տղամարդկանց, ովքեր զբաղեցրել են հետեւյալ պաշտոնները կամ զբաղվել են աշխատանքային գործունեության հետեւյալ տեսակներով՝

և օդային նավատորմի եւ թռչող այլ ապարատների անձնակազմի անդամները.

և թռիչքահրահանգչական անձնակազմի անդամները.

և թռիչքահրամանատարական անձնակազմի անդամները՝ գերատեսչությունների, վարչությունների, միավորումների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների եւ նրանց կառուցվածքային ստորաբաժանումների թռիչքային ծառայության /թռիչքային աշխատանքի/ ղեկավարները, նրանց տեղակալները, տեսուչները եւ այն մասնագետները, ովքեր ունեն թռիչքային գործող վկայականներ եւ մասնակցում են թռիչքներին՝ օդանավի կամ թռչող այլ ապարատի անձնակազմում.

և բոլոր անվանումների պարաշուտիստները, փրկարարները:

Երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն նաեւ վերը նշված պաշտոնները զբաղեցրած այն աշխատողները, ովքեր թռիչքային աշխատանքներից ազատվել են առողջական վիճակի պատճառով եւ ծառայել են՝ կանայք՝ առնվազն 15 տարի եւ տղամարդիկ՝ առնվազն 20 տարի:

2. Օդային երթևեկության կառավարումն իրականացնող ծառայությունների անձնակազմի անդամներին՝ 45 տարին լրացած եւ առնվազն 12 տարի ծառայած այն կանանց, 50 տարին լրացած եւ առնվազն 15 տարի ծառայած այն տղամարդկանց, ովքեր զբաղեցրել են հետեւյալ պաշտոնները կամ զբաղվել են աշխատանքային գործունեության հետեւյալ տեսակներով՝

և դիսպետչերները

և ավագ դիսպետչերները

և դիսպետչեր-հրահանգիչները

և դիսպետչերական կետերի հրահանգիչները

և թռիչքների ղեկավարները

և օդային երթևեկության կառավարման ծառայության պետերը.

և օդանավակայանների պետերը.

և օդային երթևեկության կառավարման գծով տեղակալները:

Երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն նաեւ վերը նշված պաշտոնները զբաղեցրած այն աշխատողները, ովքեր օդային երթևեկության անմիջական կառավարման աշխատանքներից ազատվել են առողջական վիճակի պատճառով եւ ծառայել են՝ կանայք՝ առնվազն 7 տարի եւ տղամարդիկ՝ առնվազն 10 տարի:

Թռիչքային եւ թռիչքահրահանգչային անձնակազմում ծառայության ժամանակաշրջանի մեջ հաշվառվում է նաեւ օդային երթևեկության կառավարման աշխատանքը:

3. Ինժեներատեխնիկական անձնակազմի անդամներին՝ 50 տարին լրացած եւ առնվազն 15 տարի ծառայած այն կանանց, 55 տարին լրացած եւ առնվազն 20 տարի ծառայած այն տղամարդկանց, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետեւյալ տեսակներով՝

և բոլոր անվանումների ավիացիոն տեխնիկները /մեխանիկներ, մոտորիստներ եւ այլն/.

և բոլոր անվանումների ինժեներները.

և օդային նավատորմի եւ թռչող այլ ապարատների տեխնիկական սպասարկման արտադրամասերի, հերթափոխերի, տեղամասերի, ծառայությունների, խմբերի պետերը.

և բորտ-օպերատորները եւ բորտ-ուղեկցորդները:

Ինժեներատեխնիկական անձնակազմի ծառայության ժամանակաշրջանի մեջ հաշվառվում է նաեւ թռիչքային, թռիչքահրահանգչական եւ օդային երթևեկության կառավարման աշխատանքների ժամանակաշրջանը:

4. Ավիացիայի թռիչքային, ինժեներատեխնիկական անձնակազմի, ինչպես նաեւ օդային երթևեկության կառավարման ծառայության աշխատողների երկարամյա ծառայության ժամկետները հաշվարկվում են՝

ա/ մխոցային օդանավերի վրա /բացի սույն կետի «բ» եւ «դ» ենթակետերով նախատեսված թռիչքներից եւ աշխատանքներից/ յուրաքանչյուր 20 ժամ թռիչքը՝ որպես մեկ ամսվա ծառայություն.

բ/ ռեակտիվ օդանավերի, ուղղաթիռների վրա, հատուկ կիրառման ավիացիայում /սանիտարական թռիչքները, ավիաքիմիական աշխատանքներ, ավիալուսանկարահանում, պարեկություն, մթնոլորտի զոնդում եւ այլ տեսակի աշխատանքներ/, այլ պետությունների օդանավերին ուղեկցող խմբերի թռիչքային անձնակազմի պաշտոններում, թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական անձնակազմի, այդ թվում՝ ավիացիայի թռիչքային անձնակազմի կադրերի պատրաստման եւ որակավորման բարձրացման բարձրագույն եւ միջնակարգ ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր 12 ժամ թռիչքը՝ որպես մեկ ամսվա ծառայություն.

գ/ վթարային-փրկարար /որոնող-փրկարար/ ստորաբաժանումներում օդանավերի թռչող անձնակազմի մեկ տարվա աշխատանքը՝ որպես մեկ եւ կես տարվա ծառայություն.

դ/ նախկին ԴՕՍԱԱՖ-ի ուսումնական եւ սպորտային ավիացիայի կազմակերպությունների թռչող անձնակազմի պաշտոններում մեկ տարվա աշխատանքը հաշվարկվում է որպես՝

և մեկ եւ կես տարվա ծառայություն, եթե կատարվել է ուսումնաթռիչքային պատրաստման պլանը.

և երկու տարվա ծառայություն, եթե կատարվել են թռիչքային բարդ կամ բարձրակարգ հնարքներ.

ե/ պարաշուտիստների եւ փրկարարների մեկ տարվա աշխատանքը հաշվարկվում է որպես՝ մեկ եւ կես տարվա ծառայություն, եթե կատարվել է մխոցային օդանավերից, ուղղաթիռներից, դիրիժաբլներից եւ աէրոստատներից թռչելու, 10 մետրից ոչ պակաս բարձրության վրա կախման ռեժիմում գտնվող ուղղաթիռներից հատուկ իջեցնող /բարձրացնող/ հարմարանքներից վայրէջքի /վերելքի/ տարեկան նորման.

և երկու տարվա ծառայություն, եթե կատարվել է ռեակտիվ ինքնաթիռներից եւ ուղղաթիռներից թռիչքի տարեկան նորման:

Սույն կետի «ա» եւ «բ» ենթակետերին համապատասխան ծառայության ժամկետները հաշվարկվում են թռիչքային անձնակազմի պաշտոններում աշխատանքի ամբողջ ժամանակամիջոցի փաստացի թռիչքային ժամերը համապատասխանաբար 20-ի եւ 12-ի վրա բաժանելու միջոցով: Ծառայության տարեկան հաշվարկը կատարվում է ծառայության լրիվ ամիսների թիվը 12-ի վրա բաժանելու միջոցով:

Տարվա ընթացքում սույն կետում նշված տարբեր աշխատանքների կատարման դեպքում երկարամյա ծառայության ժամկետը հաշվարկվում է յուրաքանչյուր աշխատանքում ժամերի /զբաղվածության/ համամասնական չափերով:

Թռիչքային անձնակազմի երկարամյա ծառայության ժամկետների մեջ հաշվի են առնվում՝

և զինված ուժերի թռիչքային անձնակազմի պաշտոններում ծառայելու եւ թռիչքափորձարկման անձնակազմի պաշտոններում աշխատելու ժամանակը.

և այլ պետությունների քաղաքացիական ավիացիայի թռիչքային անձնակազմի պաշտոններում աշխատած ժամանակը՝ համապատասխան տեսակի թռիչքային աշխատանքների համար սույն կետով սահմանված կարգով, պայմանով, որ կատարվել են ապահովագրական վճարումները Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամ.

և երեխաների խնամքի համար կանանց տրվող վճարովի արձակուրդը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեսողությամբ:

Ինժեներատեխնիկական անձնակազմի եւ օդային երթուղիների կառավարման ծառայության աշխատողների երկարամյա ծառայության ստաժի մեջ հաշվարկվում է ավիացիայի թռիչքային անձնակազմում կատարած աշխատանքը՝ սույն կետով նախատեսված կարգով, ըստ համապատասխան աշխատանքի տեսակի:

Հոդված 4. Թատերական եւ թատերահանդիսային կազմակերպությունների /ձեռնարկությունների/ առանձին կատեգորիայի դերասաններին /արտիստներին/ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանները

Թատերական եւ թատերահանդիսային կազմակերպությունների /ձեռնարկությունների/ առանձին կատեգորիայի դերասաններին /արտիստներին/ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակվում են՝

ա/ 45 տարին լրացած եւ 20 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն անձանց, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետեւյալ տեսակներով՝

բալետի պարողները, պրոֆեսիոնալ-զեղարվեստական կոլեկտիվների պարային համարներ կատարող դերասանները, կրկեսի եւ համերգային կազմակերպությունների օդային մարմնամարզիկները, սարքերի վրա աշխատող մարմնամարզիկները, մոտոհեծանվաֆիզուրիստները, ակրոբատները, լարախաղացները, վայրի գազաններ վարժեցնողները, կրկեսային բոլոր ժանրերի թզուկ-դերասանները, կրկեսային համարներ կատարող ծաղրածուները, կասկադյորները.

բ/ 50 տարին լրացած եւ 25 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն անձանց, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետեւյալ տեսակներով՝

օպերայի եւ բալետի, երաժշտական կոմեդիայի, երաժշտական-դրամատիկական, պատանի հանդիսատեսի թատրոնների դերասանները, համերգային կազմակերպությունների, հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների մենակատար վոկալիստ արտիստները, ինչպես նաեւ երաժշտական թատրոնների նվագախմբերում, սիմֆոնիկ նվագախմբերում փողային գործիքներ նվագողները, տիկնիկային թատրոնների տիկնիկներ խաղացնող դերասանները:

գ/ 55 տարին լրացած եւ 25 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող այն անձանց, ովքեր զբաղվել են աշխատանքային գործունեության հետեւյալ տեսակներով՝

համերգային կազմակերպությունների, երաժշտական էստրադային նվագախմբերի փողային գործիքներ նվագող դերասանները, երգչախմբային կոլեկտիվների բարձր կատեգորիա ունեցող մենակատար դերասանները, ծաղրածուները:

Հոդված 5. Առանձին կատեգորիայի մարզիկներին երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու պայմանները

Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակներ նշանակվում են 45 տարին լրացած այն մարզիկներին, ովքեր 5 տարի եղել են օլիմպիական մարզածեւերի Հայաստանի Հանրապետության մեծահասակների հավաքական թիմերի անդամներ եւ ունեն սպորտի վարպետի կոչում կամ եղել են օլիմպիական խաղերի, շախմատի աշխարհի օլիմպիադայի մասնակիցներ կամ աշխարհի, Եվրոպայի, նախկին ԽՍՀՄ-ի, ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաների մեծահասակների մրցանակակիրներ, գավաթակիրներ: